




ԼՍԽԱԳԻՐ
ԿՐԾՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼՍԽԱՆ ԵՐՈՍՈՒՄԸ ԵՄԵՐ ՊԱՏԵՐԱՐԿՈՒԹՅԱՆ

ՆՈՐ
ԵՐԶԱՆ 1959

ԼԳ.
ՏԱՐԻ

«سِيُون» مجلة أرمنية شهرية، أدبية، ثقافية، للغة والبيان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐԵՈ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		
— «Ջաշիկ մեր գեներալ Քրիստոս»		49
ԿՐՅԱԿԱՆ		
— «Հաւատով խոստովանիմ»	ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ	53
— Փրկչին յարուրիւնը	ԳՐ. Ա. ՈՐԱՅԵԱՆ	58
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ		
— Տեսիլք հայրենական	ԱՇՏԻՇԱՏ	60
— Լոյսի համբայեն	ՆՈՒՊԱՐ	64
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ		
— Նարեկացու սեղծագործութիւնը	Մ. ՄԿՐԵԱՆ	65
ՀԻՆ ԷՋԵՐ		
— Խրատ ոգեւան	Հրատ. Ն. ԵՊԻ. ԾՈՎԱԿԱՆ	69
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ		
— Խորին Անապատ	» » »	71
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ		
— Հայկական զարդարուեստ	Ա. Շ. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ	73
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ		
— «Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները Հին եւ Միջնադարեան Հայաստանում»	ԱՆՈՒՇԱԽԱՆ ՎՐԻ. ԶՂԶԱՆԵԱՆ	77
ՄԻՋ-ԵԿԵՂԵՅԱԿԱՆ		
— Եկեղեցիներու միութեան համար աղօթածուղով	ԶԱԻԷՆ ՎՐԻ. ԶԻՆԶԻՆԵԱՆ	81
— Երուսաղէմի մէջ կրօնական հաւաքոյթ՝ Եկեղեցակ եւ Միաբնակ Եկեղեցեաց մասնակցութեամբ		84
ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ՈՌԱՋ		
— Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ Երուսաղէմի Պատրիարքութիւնը		85
— Ծնունդը ինչո՞ւ Յունուար 6ին կը տօնենք		85
Ս. ՏԵՂԵԱՅ ՆՈՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ		
— Ս. Աստուածածնայ Տանար	ԿԻՒՐԵՂ ՎՐԻ. ԳԱԲԻԿԵԱՆ	86
Որպէսզի չըլլայ քե մոռնանք...		88
Հայկական ողբերգութիւնը	Թրգմ. Լ. Ա. Ա.	90
Սուրեն Սրբազանի Արքեպիսկոպոսի զրուարեան Հայրապետական Կոնգակը		92
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ		
— Եկեղեցականք - Բեմականք		93
— Պատշտականք		94
— Երգահանգէս		95

ՍԻՈՆ-ի Տարեկան Բաժնեգինն է՝
բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շիլին 20
Redaction of the Armenian Monthly SION
Armenian Patriarchate,
P. O. B. 4001
Old City - Jerusalem
Via Amman (Jordan)

—≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Գ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1959

◀ ՄԱՐՏ — ԱՊՐԻԼ ▶

ԹԻԻ 3-4

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

“ԶԱՏԻԿ ՄԵՐ ԶԵՆԱԻ ՔՐԻՍՏՈՍ”

Իբրև արդիւնք Հին և Նոր Տոմարներու տարբերութեան՝ Սաղիմական Զատիկը հինգ շաբաթներ յետոյ կուգայ այս տարի արտասահմանի հայութեան և արևմտեան քրիստոնէութեան Զատիկէն, զոր տօնեցին անոնք Մարտ 29ին, իսկ մենք աստ՝ Երուսաղէմի մէջ պիտի տօնենք Մայիս 3ին: Հակառակ այս ոչ-բաղձալի կացութեան, որ կը պարտադրուի Երուսաղէմի Հայ Եկեղեցիին, Ս. Տեղերու մէջ ստեղծուած՝ և այլևս քարացած ինչ ինչ պայմաններէն, ամէնքս ալ զիտենք թէ կը տօնենք մեր Զատիկը ոչ միայն յիշատակելով մէկ և նոյն հրաշալի դէպքը, այլ նաև ու մանաւանդ մէկ և նոյն ոգիով կը կատարենք զայն, անոնք և մենք, թէ՛ արտասահմանի մէջ և թէ՛ յերուսաղէմ: Որովհետև Զատիկի բարոյական թելադրանքը, որ յատակը և հիմքը պէտք է կազմէ մեր տօնակատարութեանց, մէկ և նոյն է ամենուրեք, և չի կաշկանդուիր ժամանակներէն ու թուականներէն, օրերէն և տօներէն: Այդ ոգին կրնայ խօսիլ մեզի ամէն ժամ ու ամէն օր. վասնզի, ինչպէս կ'ըսէ Ս. Սկիւրերան Հայրապետը, «Ամէն օր Զատիկ է մեզի համար»:

Եանօթ է թէ Զատիկը սկզբնապէս հրէական տօն մըն էր, և կը կատարուէր այդ ժողովուրդի Եզրիպտոսէն ելքին ի յիշատակ, այսինքն գերութեան վիճակէն ազատութեան վիճակի անցքին իբրև նուիրագործում: Այս իսկ պատճառաւ կը կոչուէր ան Պասք, որ կը թարգմանուի անցք, որ իր մէջ կը բովանդակէր նաև Աստուծոյ հրեշտակին զիշերային անցքը, երբ պատժեց խտապարանոց փարաւոնի ժողովուրդը և խնայեց ընտրեալ ժողովուրդին, անոնց տուներու մուտքին նշմարելով զենեալ զառնուկի արեան նշանը: Իբրև ազատազրման մեծագոյն տօնը՝ Զատիկը կը կատարուէր հրէից մէջ որքան կրօնական խանդով նոյնքան ալ հայրենասիրական ոգևորութեամբ: Այս տօնակատարութեան ընթացքին մանրամասնօրէն կը զործադրուէին այն բոլոր սովորութիւններն ու աւանդութիւնները՝ որոնք կը յիշեցնէին Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին օտարութեան և ստրկութեան լուծը թօթափելով, դէպի հայրենական երկիր և տարութիւն իրենց վերադարձի բոլոր պարագաները: Ու այդ սովորութեանց մէջ ամէնէն կեդրոնականն էր զառնուկի զենումը և ամբողջ շաբաթ մը բազար՝

հացի կիրարկումը ամեն տան մէջ: Յատկանշական և խորհրդանշական էր մանաւանդ տունին բոլոր անկիւններու խուզարկումը որ կը կատարուէր խմորեալ հացի փշրանքներն անգամ անհետացնելու մտքով:

Ծանօթ է նաև այն իրողութիւնը որ Քրիստոնէական եկեղեցին, ծնունդ առած ըլլալով Աստուծոյ իրեն համար նախապատրաստուած հրէական միջավայրին մէջ, երբ իրաց բնական բերումով և իրաւունքով կրօնական կեանքի օժանդակ տարրեր և պաշտամունքի մասեր կ'առնէր իր շրջանակէն, հոգ կը տանէր որ ստուերական այդ սովորութիւնները և ծէսերը լեցուէին իրենց իսկական և բարոյական իմաստով և արժէքով Քրիստոնէական շրջանակի մէջ անցնելու և կիրարկութեան դրուելու ընթացքին: — Այնպէս որ երբ եկեղեցին որդեգրեց Հին Ուխտի զխաւորագոյն տօնը՝ Պասքը կամ Զատիկը, հիմնական ալակերպութեան ենթարկեց գայն, թէ՛ իբրև գէպքի յիշատակութիւն և թէ՛ իբրև իմաստի նշանակութիւն: Զենուած զառնուկը նոր Խորայէի համար Հին Ուխտի ստուերական գառան գենումը չէր այլևս, այլ՝ Գողգոթայի Աստուածաշին Զօհը, որ կը քաւէր աշխարհի մեղքը: Իսկ խմորեալ հացը տուներէն հեռացնելը և բաղարջ հաց ուտելը կը յիշեցնէր եկեղեցիի անդամներուն հին կենցաղի իրենց ապականեալ անցեալէն միանգամ ընդ միշտ խզուելու զազափարը:

Գաղափարներու այսպիսի զուգահեռականութեամբ և բարեփոխութեամբ էր որ Պօղոս Առաքեալ կը զրէր Կորնթոսի նորակազմ եկեղեցիին և կ'ընէր անոնց հետեւալ յատկանշական թելադրանքը. «Այսուհետև սրբուեցէ՛ք հին խմորէն, որպէսզի նոր զանգուած մը ըլլաք, Զեր արդէն իսկ անխմոր (անապական) ընութեամբը: Քանզի մեր զատիկը (զատկական զառնուկը) գենուած է արդէն, որ նոյնինքն Քրիստոսն է: Կատարենք ուրեմն մեր տօնը (մեր Զատիկը) ոչ թէ հին խմորով, այսինքն ոչ թէ չարութեան և անզգամութեան խմորով, այլ սրբութեան և ճշմարտութեան բաղարջով» (Ա. Կորնթ., ե., 7-8):

Վերոյիշեալ խօսքերը ուղղուած են եկեղեցիի մը՝ որ կ'ապրէր այդ ժամանակի մեծ և վաճառաշահ քաղաքներէն մէկուն մէջ: Ինչպէս բոլոր ժամանակներու բոլոր մեծ քաղաքները՝ Կորնթոսն ալ լեցուն էր բարոյական ապականութեամբ, որ մինչև իսկ ինքզինքն զգալի ըրած էր նորակազմ եկեղեցիի մէջ ազգապիղծ ծանր մեղքով մը: Առաքեալը ամենախիստ բառերով հրահանգելէ յետոյ որ եկեղեցիի բարոյական հիմքերը խախտող այդ անգամը «Աստուանային մատնել ի սատակումն մարմնոյ», և հաւանաբար օգտուելով Զատիկի տօնին մօտաւորութենէն, կ'անցնի բացատրելու այդ տօնին քրիստոնէական իմաստը: Խորայէլացիք, ըսել կ'ուզէ մեծ Առաքեալը, իրենց զատկական զառնուկը մորթելէն և բաղարջ հացը ուտելէն յետոյ այլևս չկերան եղիպտոսի կասկարաններէն և անոր խմորուն հացէն. այսինքն միանգամ ընդ միշտ կտրուեցան այդ երկրի անբարոյ և հեթանոսական կենցաղէն: Մենք, Քրիստոնեաներս ալ պարտաւորութիւն պիտի զգանք ջնջելու և սրբելու մեր անհատական և ընկերային կեանքէն անպատիւ և անպատկառ կեանքի ամեն նախկին սովորութիւնները: Քանզի Քրիստոս, որ մեզի համար Աստուծոյ Գառնուկն է որ իր վրայ առած է մարդոց մեղքերը, մեզի համար զոհուելով ազատեց զմեզ մեղքի գերութենէն և սրբեց ապականութեան ախտէն: Ուրեմն, կը յարէ Առաքեալը, Անոր արիւնով

փրկուածներս այսուհետև տօն կատարենք ոչ թէ շաբաթ մը միայն բաղարջ հաց ուտելով, այլ ամբողջ մեր կեանքի տևողութեան «հին խմորը» մեր հոգիներու տուններէն դուրս արտաքսելով:

Առաքեալի խօսքերէն կ'եզրակացուի որ քրիստոնէական կեանքը տեսական Զատիկի տօնակատարութիւն մըն է, այդ տօնին բոլոր իմաստներով և բոլոր երեսներու մէջ: Զատիկը տօն է ուրախութեան, տօն է ազատութեան և տօն է սրբացման:

Անհնար է երևակայել աւելի ուժգին և աւելի հոգեպարար ուրախութիւնքան այն՝ որ Առաքեալներունը եղաւ երբ անոնք վերստին կեանքի եկած տեսան իրենց խաչեալ Վարդապետը: Այդ ուրախութեան արձագանգն է որ կ'ունենդրենք մենք առաքելական այս յանձնարարութեան մէջ. «Ուրախ լերուք ի Տէր յամենայն ժամ. դարձեալ ասեմ՝ ուրախ լերուք» (Փիլ., Դ., 4): Ասիկա ուրիշ մէկ ձևն է ըսելու. «Ամէն ատեն Զատիկ տօնեցէք»: Զատիկը արդարև զերազանց ուրախութեան օրն է. իսկ ուրախութիւնը քրիստոնէայ հոգեվիճակի հիմնական յատկանիշն է: Սուրբ Հոգիով լեցուած անձի, այսինքն հոգեպէս նորոգուած կեանքի պտուղներէն մէկն է «խնդութիւնը» (Գաղ., Ե., 22): Ուրախութիւնը կեանքն իսկ է, ապրիլն իսկ է, բառին թէ՛ աշխարհիկ իմաստով և թէ՛ հոգեոր առումով: Ուրախութենէ զուրկ մարդը խորքին մէջ կեանքի համար մեռած մարդն է: Միայն թէ պէտք է զանազանել ժամանակաւոր ուրախութիւնը՝ մնայունէն: Գինիին տուած ուրախութիւնը այնքան կը տևէ՝ որչափ զինիին ազդեցութիւնը: Եթէ ուրախութեան աղբյուրը մարդուն անձին մէջ չէ, զինիին սթափումին կը յաջորդէ առաւել տխրութիւն՝ զոր մոռնալու համար զրգաւորտ արարածը աւելին կ'ուզէ: Ֆիզիքական կեանքին առթած ուրախութիւնը այնքան ժամանակ կը տևէ, որքան մարմինն ֆիզիքական զործարանները կրնան արտադրել զայն: Երբ անոնք անգործութեան մատնուին, կեանքի համապատասխան համն ալ կը ցամբի: Իսկ ֆիզիքական կեանքի քայքայման հետ, անով պայմանաւոր բոլոր ուրախութիւններն ալ կ'անհետին միանգամ ընդ միշտ: — Հոգեկան կեանքի յատակն ալ, կ'ըսէինք, կը կազմէ ուրախութիւնը, որ սակայն անպատճառ չ'արտայայտուիր արտաքին ձևերով, թէև անխուսափելիօրէն կը ճառագայթէ մարդուն զործերուն և կենցաղին մէջ: Այս ուրախութիւնը կը բղիթի մարդու անձին և հոգիին ակերէն՝ որոնք իրենց կարգին հաղորդակցութեան մէջ են անտեսանելի աշխարհի լեռներէն իջնող «կենդանի ջուրերու» անսպառ աւազաններուն հետ: «Կեանքի աղբիւրին» իր սափորը բացող «վիշտի մարդն» անգամ սգաւոր է լոկ այն պատճառով որ իր եղբայրներէն շատեր զուրկ են զինք կենդանացնող ուրախութենէն. կը տխրի լոկ՝ տեսնելով որ իր եղբայրներէն ոմանք իրենց չարախինդ և ժամանակաւոր ուրախութիւնը կը փնտռեն զրկելով ուրիշները՝ կեանքին տուած կամ տալիք երջանկութիւններէն: Սակայն քրիստոնէական անտեսութեան մէջ ա՛յս և նման պատճառներով «սգաւորները» պիտի մխթարուին ի վերջոյ: Իսկ անոնք որոնք անպարկեշտ և մոլի բարքերու մէջ կը փնտռեն կեանքի երջանկութիւնը, զրկուած պիտի ըլլան Զատիկի բերած ուրախութենէն: Անոնք որոնք անխիղճ ամբաստանութիւններու և դաւաճանութիւններու թակարդ լարելու զինովութեան մէջ կ'որոնեն իրենց

երջանկութիւնը ոչ միայն իրաւունք պիտի չունենան՝ այլ իրականին մէջ պիտի չկրնան Ձատիկ տօնել։ Աստուծոյ Գառնուկին փրկարար արիւնը, որ թափուեցաւ նաև իրենց համար, սարսափ պիտի ազդէ անոնց, և անոնք ամբողջ տարին իրենք զիրենք զուրկ պահելէ յետոյ՝ մինչև իսկ այն օրը պիտի չկրնան մօտենալ Տիրոջ անսպառ սեղանին և անոր կենսատու և ուրախարար բաժակին։

Ձատիկը տօն էր Երրայական կրօնքին մէջ, օտարին տիրակալութեան լուծէն ազատագրման։ Քրիստոնէական շրջանակի մէջ ևս տօնն է այն՝ չարին, մեղքին և ապականութեան տիրակալութենէն ազատագրման։ Ձատիկ տօնել, ուրեմն, քրիստոնէական հասկացողութեամբ կը նշանակէ մեղքէ ազատուած ըլլալու երանութիւնը երգել։ Եւ որովհետև այս վիճակը ամէն օր կը պահանջուի Քրիստոնեայէն, հետևաբար բոլոր անոնք որոնք ունին զերագոյն բախտաւորութիւնը մարդկային կեանքը ապականող չարութեան մեքենայութիւններէն ազատ ըլլալու, ամէն օր գատկական տօնակատարութեան մէջ են։ — Ատելաժառ կիրքերու տիրակալութեան տակ եղողներ Ձատիկ չեն կրնար կատարել։ Ամէն օր ու ամէն ժամ իրենց մտքով ու սրտով հեթանոսական կեանք ապրող մարդիկ անկտրող են մասնակցելու գատկի տօնակատարութեան։ Գիշերը ցերեկին խառնելով, փակուած դռներու ետին, առանձնութեան մէջ կամ սատանայէ նախապահուած ժողովներու մէջ դաւադրութիւն նիւթելով զբաղող մարդեր չեն կրնար և իրաւունք չունին Քրիստոնէական Ձատիկ տօնելու, որովհետև չարութեան ոյժերու իշխանութեան տակ ապրող ստրուկներ են տակաւին . . . :

Ձատիկը սրբացման տօնն է զերագանցապէս. «Սրբուեցէք հին խմորէն, որպէսզի նոր զանդուած մը ըլլաք. Բանգի զաւթի մեր զենաւ Քրիստոս» կ'ըսէր Առաքեալը։ Ձատկի տօնակատարութիւնը սրբութեան փառաւորումն է, որովհետև սուրբ կեանքի յաղթանակի տօնն է այն. «Ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն»։ Ձատիկը նորոգուած, մաքուր և հոգեպէս առողջ կեանքի տօնակատարութիւն է։ Չար ոգիներ, որոնք թաղուած են իրենց յոռի խորհուրդներու ապականութեան մէջ, պիտի չկրնան տեսնել յարութեան լոյսը։ Խարանուած խղճմտանքներ, որոնք այլևս չեն արձագանգեր հոգեկան ու բարոյական աշխարհէն եկող ձայները, պիտի չկրնան հնչեցնել աստուածային սրբութեան մեղեդին Ձատկի օրը։ Քրիստոնէական Ձատիկ տօնելը արդար իրաւունքն է ապաշխարած սրտերու, պարկեշտ կեանքերու և զոհողութեան աստիկ այն բիւրաւոր բարի հոգիներուն, որոնք բոլորուած՝ աստ Քրիստոսի լոյս-զերեզմանին շուրջ, կամ այլուր՝ Հայց. եկեղեցիներու կողքին, կը պաշտպանեն մեր ազգային և աստուածային սրբութիւնները, ի զին ամէն զոհողութեան և ընդդէմ ներսէն և դուրսէն զործող չարութեան զործակալներու ոտնձգութեանց։ Այդպիսիներուն է Ձատիկ տօնելու երջանկութիւնը՝ զոր կը հնչեցնէ նաև Յարութեան օրուան մեր շարականը. «Այսօր Ձատիկ մեր զենամար Քրիստոսի, աւրասցուք տօն ցնծութեան նորոգեալքս ի հնութենէ մեզաց ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

ԿՐԹՆԱԿԱՆ

“ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ, ԱՍՏՈՒԱԾ ՃԵՄԱՐԻՏ”

«Որդի Աստուծոյ, Աստուած նեմարիս,
Որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ,
Եւ առեւ մարմին ի Սբոյ Կուսէն Մարիամայ վասն
մեզոյ փրկութեան».

Խաչեցար, քաղեցար եւ յարեար ի մեռելոց,

Եւ համբարեցար փառօք առ Հայր.

Մեղայ յերկինս եւ առաջի Քո.

Յիսէա զիս որպէս զաւազակն

Յորժամ զառ արխայութեամբ քով.

Եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս»:

(Աղօթք Ի բացանշիր Անձին Հաւատացելոյ ի Քրիստոս.
Շնորհալի. 3րդ տուն):

Զօրրորդ տունը Հոււսուով խոսուովանիմ
աղօթքին ուղղուած է առ Որդին Աստուած,
առ Քրիստոս: Թէ արդարեւ Որդին՝ ճշմար-
թիւս Աստուած է, այդ մասին տարակոյսի
ոչ մէկ նշոյլ ձգուած է եկեղեցւոյ հաւա-
տոյ հանգանակին մէջ. «Հաւատաւք եւ ի
մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստու-
ծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ՝ Միածին,
այսինքն յեւթինէ Հօր Աստուած՝ յԱ-
ստուծոյ, լոյս՝ ի լուսոյ, Աստուած նեմարիս՝
յԱստուծոյ ճշմարտէս»:

Բնականաբար Քրիստոսի Աստուածու-
թիւնը ուրացողներ եղած են ի սկզբանէ
անտի, ինչպէս ուրացողներ եղած են Ա-
ստուծոյ գոյութեան: «Ասաց անգգամն ի
սրաի իւրում թէ ոչ գոյ Աստուած»: Իսկ
Յիսուսի ժամանակակիցներէն ոմանք, և
անոնց հետեորդները՝ բոլոր դարերու ըն-
թացքին, գայթակղած կ'ըսէին. «Զի դու
մարդ ես և զանձն քո Աստուած աննես:
Աւետարանները չափազանց յտակ են Քրիս-
տոսի Աստուածութիւնը հաստատելու մէջ.
«Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Ա-
ստուած, և Աստուած էր Բանն»: Յիսուս ըսաւ
Իրեն համար. «Տուաւ ինձ ամենայն իշխա-
նութիւն յերկինս և յերկրի». «Եւս և Հայր
իմ մի եմք»: Քրիստոնէական եկեղեցին
հիմնուած է Քրիստոսի Աստուածութեան
հաւատքին վրայ. ով որ չի հաւատար
Քրիստոսի իրրեւ «Որդի Աստուծոյ՝ Աստուած
ճշմարիտ» ամէն բան կրնայ ըլլալ բացի
քրիստոնեայէ:

«Որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ».
— Աստուծոյ Որդին իր աստուածային
փառքէն և անմատչելի վեհութենէն մարդ-
կային մակարդակին իջնելը արտայայտուած
է խոնարհիլ բացատրութեամբ՝ Նոր Կտա-
կարանին մէջ: Պօղոս Առաքեալ կ'ըսէ.
«Յիսուս Քրիստոս, որ Ինքզինք ունայնա-
ցուց ծառայի (մարդու) կերպարանք առ-
նելով... և իր անձը խոնարհեցուց՝ մեռնե-
լու չափ, խաչի մահուամբ մեռնելու չափ,
հնազանդ գտնուելով» (Իր Հօր կամքին)
(Փիլ., Բ., 5-8): Աստուծոյ Որդին «խո-
նարհելով» Ինքզինք ենթարկեց մարդկային
անհրաժեշտ սահմանափակումներու և տկա-
րութիւններու. (հնգրիս յօժար է, բայց
մարմին՝ տկար): Յիսուսի իր փառքէն
խոնարհիլը զրաւական մըն է մարդկութեան
նկատմամբ իր ունեցած անսահման սիրոյն:
Յիսուսի խոնարհեցումը իր աստուածային
արարքներէն մէկն է, զորս աստուածաբա-
նութեան մէջ կը կոչենք «Եւթեմուքիւն»: Որ-
դին խոնարհեցաւ մարդկութիւնը բարձրա-
ցնելու համար:

Իսկ Որդին յաւիտենական սեփեք կապը
Իր Հօրը հետ, ինչպէս նաեւ ի Հօրէ ծնած
ըլլալու աստուածաբանական ճշմարտու-
թիւնը և Հօրը հետ՝ այսպէս ասած բնա-
կակցութիւնը կ'արտայայտուի «Ի ծոց Հօր»
բացատրութեամբ, ինչպէս Յովհաննէս Ա-
ւետարանիչը կ'ըսէ. «Ոչ ոք երբեք տեսած
է զԱստուած, բացի Միածին Որդիէն որ է
Ի ծոց Հօր» (Յովհ., Ա., 18): Ծոցը, զիրկը
կամ գոգը սիրոյ օթարանն է, ուրկէ կը
խոնարհի Որդին չարութեան աշխարհը:

«Եւ առեւ մարմին».— Որդին խոնար-
հելուն անմիջական նպատակն է մարմին
առնել կամ մարմնանալ: Քրիստոսի մար-
դեղութիւնը Քրիստոնէական Կրօնքին կո-
րիզը կազմող վարդապետութիւն մըն է:
«Մարմին առնելով», Աստուծոյ յաւիտենա-
կան Բանը, Ամենասուրբ Երրորդութեան
երկրորդ Անձը, իր վրան առաւ մարդկային
բնութեան բոլոր տարրերը և բոլոր կարո-
ղութիւնները՝ բացի մեղանշականութենէ:
Եկեղեցին իր «Հաւատաւք»ին մեծագոյն
մասը յատկացուցած է մարդեղութեան խոն-
հուրդին, այն աստիճան որ «Հաւատաւք»ի
կորիզը, կեդրոնական մասը և գրեթէ ամ-

բողջ մարմինը կը կազմէ այս ուսուցմունքը. (Նիկ. Հանգանակ, «Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս»էն մինչև «որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան»):

Որդին մարդացաւ որպէսզի տեսնելի դարձնէ անտեսանելի Աստուածութիւնը մարդոց աչքին. «Որուն (Բանին Կենաց) ականատես եղանք, և որուն նայեցանք և մեր ձեռքերով շօշափեցինք» (Ա. Յովհ., Ա., 1): Որդին մարմին առաւ որպէսզի գտնուէ մասնակից դարձնէ Աստուծոյ որդիութեան պատիւին:

«Ի սբոյ կուսէն Մարիամայ» — Յիսուս մարմին առաւ Ս. Կոյս Մարիամէն. աստուածաբանական բացատրութեամբ Մարիամ եղաւ մարդեղութեան գործիական պատճառը: Այս իրողութեան իբրև արդիւնք, Եկեղեցին օժտեց Ս. Կոյսը «Աստուածամայր» կամ «Աստուածածին» փառաւոր տիտղոսով: Եկեղեցին շատ մեծ յարգանք կը տածէ Ս. Կոյսին նկատմամբ, որովհետեւ նախ Աստուած պատուեց զայն Իր յաւիտեանական Որդիին մայր ընտրելով զինքը և օժտելով բազում շնորհներով, որոնցմէ ամենէն թանկագիններէն մէկն է մեզմեզեմական կուսութիւնը: Քրիստոս ծնաւ կոյսէ մը. այսինքն Իր Յղութիւնը գերբնական եղաւ, ինչպէս բացայայտօրէն կը պատմեն Աւետարանները: Աւետարեւր հրեշտակը Մարիամին ըսաւ. «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո»: Այս իրողութիւնը, այսինքն Քրիստոսի կուսական ծնունդը, շատ շատեր՝ բարեմիտներէն և չարամիտներէն, հաւատացեալներէն և ոչ — հաւատացեալներէն, լուրջ դժուարութեանց առջև դրած է: Սակայն եթէ ու երբ հարցը լրջօրէն նկատի առնուի իր բոլոր երեսներուն մէջ, զոր չենք կրնար ընել մեր այս սեղմ և գրեթէ հարեանցի բացատրականներուն մէջ, կուսական ծնունդը ամենէն բնական ծնունդն էր Աստուծոյ մը մարդեղութեան համար: Հակառակը, այսինքն ոչ — կուսական ծնունդը, իսկապէս միտքը դժուարութեան առջև պիտի դնէր: Երբ նկատի ունենանք Յիսուսի Անձը, Իր ով ըլլալը, և աշխարհի վրայ կատարելիք Իր առաքելութեան նպատակը, այն ատեն ոչ միայն դժուարութիւն չի

ծագիր, այլ անհրաժեշտ կը դառնայ սովորական օրէնքներէ վեր կատարուած Իր ծնունդը: Քրիստոս սովորական մարդ մը չէր. Իր կեանքը և գործը լեցուն եղան հրաշալի երևոյթներով. իսկ Իր վախճանը հրաշափառ Յարութեամբ և Համբարձմամբ պսակուեցաւ: Արտասովոր կեանք ունեցող և հրաշալի կերպով երկրէն հեռացող Քրիստոսի աշխարհ մուտքն ալ պէտք էր տեղի ունենար հրաշալի պայմաններու մէջ. ինչ որ եղաւ արդարեւ կուսական ծննդեամբ:

«Վասն մերոյ փրկութեան» — Որդին կը խոնարհի Հօրը ծոցէն և մարմին կ'առնէ մեր փրկութեան համար: Փրկութիւնը ուրիշ բանալի բառ մըն է քրիստոնէական տնտեսութեան մէջ. զայն ունեցողը միայն, այսինքն փրկուածը լոկ, պիտի կրնայ բանալ երկինքի դռները և մտնել անկէ ներս: Օրէնք, Մարգարէք և Աւետարանք տրուած ու գրուած են լոկ այս նպատակը իրագործելու համար: Մարդեղութեան, Եկեղեցիի հաստատման վերջնական նպատակն է անհատները փրկութեան առաջնորդել: Մեր Տէրը Իր գերազանց մէկ ստորագրելին — Փրկիչ — կ'առնէ իր կատարած այս տնօրէնութենէն, փրկագործութենէն: Փրկիչ կը նշանակէ ազատել կամ ազատագրել մէկը, ինչ որ ինքնին կ'ենթադրէ որ փրկեալը նախապէս գերի մը եղած է, որովհետեւ այս բառը առհասարակ գերի ինկածները ազատագրելու իմաստով կը գործածուի: Արդարեւ, քրիստոնէական հասկացողութեամբ, չփրկուած մարդկութիւնը գերի է մեղքի, գերի է «այս աշխարհի իշխանին», այսինքն չարութիւնը մարմնացնող, գործադրող և աշխարհի վրայ մշտնջենաւորող «իշխանութիւններու և պետութիւններու և խաւարի աշխարհակալներուն, և չար դեւերուն» որոնք երկինքի ներքեւ են» (Եփես., 2., 12): Յիսուսի մարմին առնելուն նպատակն է ազատագրել, բուն բառով՝ փրկել, մարդերը բարոյական գերութեան վիճակէն և տանիլ զանոնք իրենց գերագոյն և վերջնական նպատակին, որ է վայելիլ Աստուծոյ երանական տնտեսութիւնը և փառաւորուիլ՝ Աստուծոյ ճառագայթող փառքով: Այն բոլոր միջանկեալ կերպերը զորս Յիսուս կիրարկեց մարդը այս վերջնական

նպատակին առաջնորդելու համար, կը կազմեն փրկագործութեան տնօրինութիւնները և միջոցները. ասանցմէ եւն, օրինակ, Իր վեհ բարոյական ուսուցմունքը՝ որով մարդոց ցոյց տուաւ յաւիտենական կեանքի շիտակ ճամբան. մարդոց փոխարէն չարչարուելը, որով Իրեն հաւատացողներու, յարողներու և հետեողներու մեղքերը թողուց, քաւեց և ջնջեց: Ի վերջոյ, յաւիտենական միջնորդի դեր կատարելը ընդմէջ մարդկութեան և Աստուածութեան, որով ապաշխարող արարածը հաշտեցուց իր Արարչին հետ:

«Խաչեցաւ».— Մարդոց փրկութիւնը Յիսուս կարելի դարձուց ոչ միայն Իր ուսուցմամբ ճշմարտութեան ճամբան ցոյց տալով, այլ նաև ու մանաւանդ կարգ մը խորհրդական արարքներով. զորս, ինչպէս ըսինք վերև, կը կոչենք տնօրէնութիւններ: Իսկ խորհրդական ըսելով կը հասկնանք տեսանելի և զգալի արարք մը՝ որուն սակայն արդասիքը կամ բարոյական արդիւնքները թէև իրական, բայց մեզի համար անտեսանելի՝ և յաճախ ալ անըմբռնելի են: Ասոնց առաջին կարգին վրայ կուգայ, ինչպէս վերև ականարկեցինք, նոյնինքն Բանին Աստուծոյ մարդանալը. ապա կուգան Քրիստոսի չարչարանքները, որոնք կը սկսին Գեթսեմանիի տագնապով և կ'աւարտին Գողգոթայի խաչելութեամբ, որ Չարչարանաց ընդհանուր տնօրէնութեան մէջ գերագոյն փրկարար արարքն է:

«Թաղեցաւ».— Քրիստոսի չարչարանքները յանգեցան Իր մահուան ու թաղման: Քրիստոս երբ մարմին առաւ մարդոց փրկութեան համար, այդու յանձն առած եղաւ նաև կրել մարդկային մեղքի բոլոր հետեւանքները. մեղքի զլխաւոր հետեանքը մահն էր. «որովհետև մեղքի վարձքը մահն է» (Հռոմ., Զ., 23): Յիսուս մեռաւ որպէսզի նախ խորտակէ մահուան զօրութիւնը Յարութեամբ: Քրիստոսի մահը եղաւ ճշմարտագոյն մարդոց մեղաց քաւութեան և Աստուծոյ հետ հաշտութեան համար: Երբ մարդ անկեղծօրէն կարենայ անդրադառնալ թէ ինչ պարագաներու տակ տեղի ունեցաւ Քրիստոսի մահը, և թէ ինչ աստուածային

չարժատիւթներէ թելադրուած Ինքզինքը ենթարկեց Յիսուս խաչի մահուան, խորագէտ կը տպաւորուի: Եթէ մարդու իղձմբտանքը ի սպառ չէ խաւարած՝ Քրիստոսի մահուան մասին անդրադարձումը իր մէջ յառաջ պիտի բերէ ապաշխարելու տրամադրութիւն, եթէ չեղած է ճշմարտութեան ճամբայէն. կամ ինքզինքը առաւել բարեկարգելու զգացում, հաւատարիմ կերպով և յարատեօրէն հետեւելով Աւետարանական պատուէրներուն: Քրիստոսի չարչարանքները և մահը մեզի համար եղան, որովհետև Ինք արժանի էջր այդ պատիմներուն, ըլլալով կատարելապէս արդար. այդ պատիմներուն արժանի էր մեղաւոր մարդը, ինչպէս՝ կը հաստատէ Պետրոս Առաքեալ. «Քրիստոս մեզի համար մեռաւ: Նա որ մեղք չգործեց և որուն բերանը նենդութիւն չդնուեցաւ... Ինքզինք կամաւորաբար զատաւորին կը յանձնէր: Ան մեր մեղքերը վերցուց՝ Իր մարմնով խաչափայտին վրայ (գամուկելով), որպէսզի մենք ազատուինք մեղքերէ, և արգար կեանք մը ապրինք. որուն վերջերս մենք բժշկուեցանք» (Ա. Պետ., Բ., 21-24): Իսկ այլուր, նոյն Առաքեալը կ'ըսէ. «Քրիստոս մէկ անգամ մեռաւ մեղքի համար. արդար՝ անարդարներուն համար, որպէսզի զմեզ մօտեցնէ Աստուծոյ» (Ա. Պետ., Գ., 18):

Յիսուսի թաղման հետ կապ ունի ուրիշ հաւատալիք մը ևս, որուն կ'անդրադառնանք անցողակի: Պետրոս Առաքեալ, շարունակելով վերև յիշուած խօսքը, կ'աւելցնէ. «Թէպէտ մարմնով մեռաւ, բայց կենդանի մնաց հոգիով, որով (հոգիով) ևս գնաց քարոզեց բանտի մէջ եղած հոգիներուն» (Ա. Պետ., Գ., 19): Ուրիշ խօսքով՝ Յիսուս մեռնելէն յետոյ, նախ քան յարութիւն առնելը, իջաւ մեռելոց աշխարհ, երկրի վրայ քարոզած Աւետարանը անոնց ևս տանելու համար. Հին Ուրստի արդարներուն աւետիս տալու որ ազատուած են ազամային անէծքէն, և ապստամբ հոգիներուն պատեհութիւն տալու համար որ անոնք ալ հաւատան Իրեն և արժանանան Իր բերած փրկութեան: Ինչ որ կը նշանակէ թէ ոչ ոքին պիտի զլացուի պատեհութիւնը, այս աշխարհին վրայ կամ անդենականին մէջ, հաւատալու կամ չհաւատալու Քրիստոսի

փրկարար Աւետարանին և փրկագործ տնօրէնութեանց:

«Յաւեար ի մեռելոց».— Քրիստոսի ամէնէն փառայեղ տնօրէնութիւնն է այս: Քրիստոս գերեզման զրուելուն «երրորդ օրը» Յարութիւն առաւ. այդ չի նշանակեր անպատճառ որ երեք օր լման գերեզման մնաց: Ուրբաթ երեկոյէն հաշուելով, երբ Քրիստոս գերեզման զրուեցաւ, մինչև կիրակի առաւօտ, երբ գերեզմանը պարապ գտնուեցաւ, կ'ըլլայ երրորդ օր: — Յիսուսի յարութիւնը Ղազարոսի յարութենէն կը տարբերէր այնու որ Ղազարոս իր բնական և նիւթական մարմինով վերստին կեանքի կանչուեցաւ, ետքէն երկրորդ անգամ մեռաւ և կը սպասէ միւս բոլոր մեռնողներու հետ մեռելոց յարութեան, վերստին յառնելու համար: Յիսուս Յարութիւն առաւ «փառաւորեալ» մարմնով և միանգամ ընդ միշտ: Յիսուսի յարուցեալ մարմինը «փառաւորեալ» կը կոչենք, որ ուրիշ բան չի նշանակեր եթէ ոչ ազատ ըլլալ նիւթի կաշկանդիչ օրէնքներէն և ապականութենէն, ու հասած ըլլալ այն վերջնական կատարելութեան՝ որ սահմանուած է մարդկային մարմինին համար՝ Աստուծոյ յաւիտեանական ծրագրին մէջ:

Կուսական Ծննդեան պէս, Յիսուսի Յարութիւնն ալ, իր անըմբռնելի և եզական հանգամանքով, ոմանց կողմէ մերժուած է բոլորովին, իսկ ուրիշներ ջանացած են «բնական ու բանաւոր» բացատրութիւններ տալ, որոնց երբեմն աւելի դժուար է հաւատք ընծայել, քան նոյնինքն Աւետարանի մէջ յստակօրէն ներկայացուած հրաշալի եղելութեան: Քրիստոս իր Յարութենէն վերջ բազմիցս երեւցաւ Առաքելոց, և անգամ մըն ալ, ըստ Պօղոս Առաքեալի վկայութեան, «աւելի քան հինգ հարիւր եղբայրներու միանգամայն»։ այս եղբայրներէն «չատեր» Պօղոս Առաքեալի վերոյիշեալ տողերը գրած ատեն դեռ կ'ապրէին, իսկ «ոմանք» ննջած էին արդէն:

Յարութիւն առնելը (մահէն յետոյ) մարմինին և հոգիին միջև կեանքի հաղորդակցութեան վերահաստատումն է: Յարուցեալ կեանքի մէջ տիրականը հոգին է, մինչդեռ աշխարհի վրայ իր ապրած միջոցին տիրա-

կանը մարմինն էր, որուն օրէնքներով կամ յատկութիւններով մարդ ինքզինք կաշկանդուած կը զգայ: Յարութեամբ մարմինը «կը փառաւորուի», այսինքն կ'օժտուի կարգ մը գերբնական յատկութիւններով և կարողութիւններով, որոնց շնորհիւ մեր նախկին նիւթական և թանձրացեալ մարմինը կ'ըլլայ համակերպող գործիք մարդկային հոգիին ձեռքը: — Յարութիւնը երրորդն է Քրիստոսի ենթարկուած մեծ խորհուրդներուն, որոնցմէ առաջինը Մարդեղութիւնն էր, իսկ երկրորդը՝ Չարչարանքները: Եթէ առաջին երկուքով Աստուծային բնութիւնը, յԱնձին Քրիստոսի, «խոնարհեցաւ» և «ունայնացաւ», Յարութեամբ՝ մարդկային բնութիւնը, զարձեալ յԱնձին Քրիստոսի, բարձրացաւ և փառաւորուեցաւ: Եթէ Քրիստոս մեռաւ մեր մեղաց քառութեան համար, յարեաւ մեր արդարացման համար:

«Համբարձար փառք առ Հայր».— Համբարձումը Յիսուսի պաշտօնապէս քաշուելը, «վերանալն» է երկրաւոր գործունէութենէն, շարունակելու համար իր փրկարար միջնորդութիւնը երկինքի մէջ, Հօրը մօտ: Յիսուս Յարութենէն անմիջապէս յետոյ չեղաւ «առ Հայր Իւր», այլ երկրի վրայ մնաց քառասուն օրեր, որպէսզի նախ ատեն մը ևս դաստիարակէ Առաքեալները, որոնք տարածիչները պիտի ըլլային իր Աւետարանին և հաստատողները իր եկեղեցիին: Երկրորդ՝ Առաքեալները պիտի ըլլային նաև վկաները իր Յարութեան, ուստի իր Համբարձումը ուշացուց որպէսզի անոնք հաստատապէս համոզուած գոյացնէին թէ իրենց տեսածը ոչ խաբկանք էր և ոչ ալ առ աչօք տեսիլք, այլ նոյնինքն իրենց երբեմնի վարդապետը՝ որուն հետ եղած էին երեք տարիներ շարունակ: — Քրիստոսի տեսանելի կերպով վերանալը երկնակամարին մէջ և անյայտանալը ամպերու ետին, իրական գործողութիւններ են, տպաւորելու համար Առաքեալներու մտքին մէջ այն կարևոր ճշմարտութիւնը թէ, ուր որ Հայրն է, հոն կ'երթայ նաև Որդին: Այդու հասկցնելու ուղեց Յիսուս իր Առաքեալներուն թէ այլևս տեսանելի պիտի չըլլար անոնց, թէ և շարունակ իրենց հետ պիտի ըլլար անտեսանելի կերպով մինչև ի կատարած աշխարհի:

«Յիսիակ զիս որպէս զաւագակն»։ — Ակնարկութիւնը Յիսուսի խաչակից «բարի» աւագակին է, որ հողեղէններէն ամէնէն երանելիներէն մէկը եղաւ, երբ կրցաւ ճանչնալ իր կողքին խաչուած նազովբեցի Յիսուսի մէջ իր փրկիչը և թագաւորը, և Անոր ամէնէն լքուած ոտպէին միակ ջատագովը և պաշտպանը կանգնեցաւ... խաչին վրայէն, և իր կարգին խնդրեց Անոր պաշտպանութիւնը՝ աղերսելով. «Յիշէ զիս, Տէր, երբ գաս Քու արքայութեամբդ»։ Յիսուս լիովին վարձատրեց զայն նախանձելի խոստումով. «Ըշմարիտ կ'ըսեմ քեզ, այսօր ինծի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս» (Ղուկ., ԻԿ., 43)։ Ազօթասացը ոչինչ ունի ինքզինք արժանի նկատելու Աստուծոյ Արքայութեան, բացի իր հաւատքէն և Աստուծոյ զուլթէն՝ զոր Ան ցոյց տուաւ իր կողքին խաչուած աւագակին։

«Յորժամ զաս արձայուրեամբ Բով»։ — Թէ Քրիստոս երկրորդ անգամ աշխարհ պիտի գայ՝ Աւետարաններու հաստատ հաւատումը և Եկեղեցիին անխախտ հաւատքն է. «Այս Յիսուս, որ ձեզմէ երկինք վերացաւ, նոյն եղանակաւ պիտի գայ, ինչպէս որ տեսաք երբ Ան երկինք կ'երթար» (Գործք., Ա., 11)։ «Պիտի գայ Մարդու Որդին իր Հօր փառքով՝ և իր հրեշտակներով, հատուցում ընելու համար իւրաքանչիւրին՝ համաձայն իր գործին» (Մատթ., ԺԶ., 27)։ Մարդացեալ Փրկչի վերեւ յիշուած երեք մեծ տնօրէնութիւնները — Մարդեղութիւն, Չարչարանք և Յարութիւն — իրենց լրումին պիտի հասնին վերջին տնօրէնութեամբ մը որ նոյնինքն Քրիստոսի երկրորդ Գալուստն է։ — Մեր Տէրը իր վերստին աշխարհ գալու ժամանակը չի յայտնեց, այլ հաստատեց որ անակնկալ կերպով տեղի պիտի ունենայ այդ. «Բայց այդ օրուան և ժամուան մասին ոչ ոք գիտէ. ոչ երկինքի հրեշտակները, և ոչ Որդի՝ բայց միայն՝ Հայր» (Մարկ., ԺԳ., 32)։ Երկրորդ գալուստեան իբրեւ նախանշաններ՝ Յիսուս հաստատեց որ սուտ մարդարէներ պիտի ելնեն, որոնք նորանոր ուսուցմունքներով շատեր պիտի մոլորեցնեն, մինչև իսկ «ընտրեալներէն»։ Տեղի պիտի ունենան արտասովոր և համաշխարհային բարսւմներ ազգերու

միջև, որուն հետեանքով սով և տեսակ տեսակ ժանտախտներ պիտի տարածուին։ «Փողի» հնչումով մեռելներ յարութիւն պիտի օտնեն և պիտի հաւաքուին Քրիստոսի ներկայութեան, իբրեւ իրենց դատաւորին։ Քրիստոս առաջին անգամ եկած էր իբրեւ խնարհ ու հեղ փրկիչ, և ինքզինք ենթարկած էր մարդկային տկարութիւններու — լացի, ծարաւի, չարչարանքի։ Երկրորդ անգամ պիտի գայ իբրեւ արդար դատաւոր՝ որ իր աստուածային իշխանութեամբ պիտի բաշխէ իւրաքանչիւրին իր յաւիտենական վարձքը կամ պատիժը՝ համաձայն երկրի վրայ ապրած իր կեանքին և գործին։ Ամէն ոք իրեն համար սահմանուած ճակատագրին զրկուելէ յետոյ, այսինքն մեղաւորները «յաւիտենական տանջանքի» և արդարները «յաւիտենական կեանքի», Քրիստոս իր Արքայութիւնը պիտի յանձնէ Հօրը, այդու ցոյց տալու համար որ իր միջնորդական և փրկագործական տնօրէնութիւնները իրենց լրումին յանգած են։

Ազօթենք Շնորհալիլի ոգւով ու մեր խօսած լեզուով.

«Ողի Ասուծոյ, Ասուած հեմարիս,
Որ խնամեցար հայրական ծոցէն
Եւ մարմին առիւ Սուր Կոյս Մարիամէն մեր փրկու-
թեան համար.
Խաչուեցար, քաղուեցար Եւ մեռելներէն յարութիւն
Եւ փառով երկինք համբարձար։ [առիւ,
Մեղանշեցի երկինքի դէմ Եւ Քու առջեւ.
Յիշէ զիս աւագակին պէս
Երբ զաս Քու քաղաւորութեամբդ.
«Եւ ողորմէ Քու արարածներուդ, Եւ ինծի՝ ծանր մեղա-
ւորիս»։

(5)

ՇՆՈՐՀԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ



ՓՐԿԶԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

«Զի՞ խնդրե՛ք զկենդանին ընդ մեռեալս»

չէ աստ՝ այլ յարեալս»

(ՂԱԽԿ., ԻԴ., 5):

Յարութեան օրը, կիրակի առաւօտ, կանուխէն, մի քանի բարեպաշտ կիներ՝ իրենց հետ առած հոտաւէտ իւղեր և խունկեր, այցելութեան եկան Յիսուսի գերեզմանին: Ճամբու ընթացքին կը խօսէին իրարու հետ թէ ո՞վ պիտի գլտորէ քարը գերեզմանի դռնէն: Երբոր գերեզմանին մօտեցան, մեծ ցնցում մը ունեցան. քարը գլտորուած տեսան և սկսան վախճալ: Լուսափայլ հանդերձներով երկու հրեշտակներ քաջալերեցին կիները և ըսին. «Ինչո՞ւ կը փնտռէք ողջ մեռելներուն հետ. հոս չէ, այլ յարութիւն առաւ»: Այս բաներով, Յիսուսի յարութեան աւետիսը յայտարարուեցաւ իւղաբեր կանանց, և անոնց միջոցաւ՝ բովանդակ մարդկութեան:

Հրեշտակներու վերոյիշեալ խօսքը կարծես թիկն յանդիմանութիւն մը կը պարուենակէ իր մէջ. ըսել կ'ուզեն անոնք. դուք Անոր այսքան մօտ ըլլալով հանդերձ, միթէ չէի՞ք գիտեր Սուրբ Կրքին, և մանաւանդ Սաղմոսաց զրքին մէջ Իր մասին եղած գուշակութիւնները. չէի՞ք յիշեր որ դարեր առաջ գրուած էր արդէն. «Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս (գերեզման), և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն» (Սաղ., ԺԵ., 10): Նոյնպէս. «Յարիցէ Աստուած և ցրուեցին ամենայն թըշնամիք Նորա, փախեցին ատելիք Նորա յերեսաց Նորա» (Սաղ., ԿԸ., 1): Եթէ առիթ չէիք ունեցած գիրքերը ուսումնասիրելու, կ'ըսեն հրեշտակները, գէթ «Միտքերնիդ բերէք, ի՞նչպէս խօսեցաւ ձեզի երբ գեռ Դաւիթի մէջ էր, ըսելով թէ Որդին Մարդոյ պէտք է որ մեղաւոր մարդոց ձեռքը մատնուի ու խաչը ելլէ, ու երբորդ օրը յարութիւն առնէ» (Մատթ., ԺԶ., 21, ԺԷ., 21-22. Մարկ., Ը., 31, Թ., 30. Ղուկ., Թ., 22. Յովհ., Բ., 22): Իսկ եթէ այս բոլորը մոռցած էք, պէտք է որ յիշէիք գոնէ Իր շատ կարեւոր մէկ խօսքը.

«Ես իսկ եմ յարութիւն և կեանք» (Յովհ., ԺԷ., 25):

Երկրի վրայ պաշտօնավարութեան շարանին, Յիսուս երբ օր մը հարցոց աշակերտներուն թէ Իր մասին ի՞նչ կը խորհին. Պետրոս իսկոյն պատասխանեց. «Ինչ ես Քրիստոսն, որդի Աստուծոյ կենդանոյ» (Մատթ., ԺԶ., 16): Պետրոս իրապէս, իր այս վկայութեամբ, մեծ ճշմարտութիւն մը խոստովանեցաւ: Յիրաւի Յիսուս կենդանի Աստուծոյ Որդին էր, և նաև կեանքի աղբիւրը: Աշխարհ եկած էր մարդոց կեանք և աւելի կեանք տալու համար: Ասանկ մէկը ի՞նչպէս կրնար մեռեալ համարուիլ և մնալ մեռելներու մէջ և մեռելներու հետ:

Բայց աւելին կայ: Ըստ իր վկայութեան, Ինքն էր Յարութիւն եւ կեանք: Յարութեան ոյժը Իր մէջն էր, Իր կեանքին համար ուրիշէն կախեալ չէր, այլ կեանքը Իրմով եղած էր բովանդակ տիեզերքի մէջ: Մէկը որ յաւիտենական կեանքի համար ծարաւ էր Իրեն յիմելու էր: Ինքը միայն կրնար գոհացնել մարդոց սրտերուն խորերը արթնցած հոգեւոր պապակը: Անօթի հոգիներուն համար Ինքն էր «կացն կենդանաւ», և ծարաւներուն ջուրն կենդանի»:

Քիչ չեն այսօր աշխարհի մէջ մարդիկ՝ որոնք իրենց ներքին ծարաւը աշխարհի անցաւոր վայելքներով գոհացնելու կը ջանան: Աշխարհը և իր ցանկութիւնները, իր պերճանքն ու իր բոլոր հաճոյքներն ու ուրախութիւնները ժամանակաւոր են, այսօր մեզի հետ են և վաղը չեն: Մեր հոգիին ամենախորունկ ծարաւը Յիսուս միայն կարող է գոհացնել: Քանզի Ինքն է յաւիտենական կեանքի ականաղբիւրը, կեանքի առաջնորդը և մեր փրկիչը: Ինչպէս նաև կենդանի Աստուծոյ կենդանի Որդին:

Իւղաբեր կանայք յաւիտենական կեանքի աղբիւրը և Աստուծոյ կենդանի ներկայացուցիչը մեռելներու մէջ փնտռելով մեծ սխալի մը մէջ լնկած էին, և ուստի հրեշտակները, զգուշացնելով զանոնք, կ'ըսեն. «Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ՝ այլ յարեալս»:

Մեռեալը աչք ունի՞ր, բայց չի տեսներ, ականջ ունի՞ր՝ չի լսեր, լեզու ունի՞ր՝ չի խօսիր, զգայարանքներ ունի՞ր՝ չ'ըմբռներ, միտք ունի՞ր՝ չի խորհիր, սիրտ ունի՞ր՝ չի զգար: Իրեն

համար այլևս հաւասար բաներ են ցերեկն ու գիշերը, լոյսն ու խաւարը, ճերմակն ու սևը, կեանքն ու մահը: Վասնզի մեռած է և ողջերու աշխարհին հետ այլևս առնչութիւն չունի, ինչպէս ողջերն ալ մեռելնեքու հետ կապ չունին:

Մարդիկ կան որոնք թէև մեռած են, բայց տակաւին կ'ապրին իրենց հոգիով, իսկ միւս կողմէն մարդիկ ալ կան՝ որոնք մարմնով կ'ապրին, սակայն մեռած են հոգիով: Ինչպէս ասիթով մը ըսաւ Յիսուս մարդու մը. «Թո՛ղ տու մեռելներուն որ քալեն իրենց մեռելները» (Ղուկ., Թ., 60). այսինքն, հոգիով մեռեալները թո՛ղ տու որ թաղեն իրենց մարմնով մեռած ազգականները: Մարմնով մեռնիլ բնական է մարդու մը համար, իսկ հոգիով մեռնիլ՝ մեծագոյն դժբախտութիւն մը:

Յայտնութեան գրքին մէջ Սարգիսէի եկեղեցւոյ համար ըսուած է. «Տեսիլ զգործս քո զի անուն կենդանւոյ ունիս եւ մեռեալ ես» (Յայտ., Գ., 1). Այժմ մեր մէջ որքան մարդիկ կան՝ որոնք իրր թէ կ'ապրին անուանապէս աշխարհի վրայ, սակայն մեռած են իրականութեան մէջ իրենց խղճման քննարկով, հոգեւոր ըմբռնումով, ներքին զխտակցութեամբ, սրտով և հոգիով: Ողջ են բայց կ'ապրին որպէս մեռեալ: Ողջիւր պէտք է որ առնչութիւն ունենան մեռելներու հետ. բայց դժբախտաբար այս տեսակ մարդիկ ողջ են և մեռելներու մէջ ու մեռելներուն հետ կ'ապրին:

Ձի դատապարտենք Իզաբել կիները՝ որոնք ողջ եղողը մեռելներու մէջ կը փնտռէին: Մենք միթէ այսօր նոյն սխալը չենք կրկներ, երբ յաւիտենական արժէքները աշխարհի վաղանցուկ բաներուն մէջ կը փնտռենք: Մարդու մը նիրաւ յաւիտենական երջանկութեան համար ստեղծուած է, բայց մենք այդ երջանկութիւնը անցաւոր փառքի, ժամանակաւոր հաճոյքներու և ունայն փառասիրութիւններու մէջ փնտռելու կը ջանանք: Սակայն ի դժուր, քան զի մնայուն արժէքներ անցաւոր բաներու մէջ չեն գտնուիր:

Երբոր Յիսուս աշխարհ եկաւ, մարդիկ տղիտութեան ու մեղքի թանձր խաւարին մէջ կը խարխալէին: Իբրեւ լոյս, Ինք կ'ուզէր այս խաւարը փարատել, բայց անոնք

աւելի նախամեծար համարեցին խաւարի մէջ մնալ՝ քան թէ լոյսի մէջ ապրիլ: Ինչո՞ւ. անոր համար որ լոյսը իրենց խաւարի չար արարքները երեան կը հանէր: Եւ որպէսզի իրենց չար ճամբաներուն մէջ ազատ համարձակ քայլեն՝ Յիսուսը հալածեցին և ի վերջոյ սպանեցին խաչի անարգ մահով:

Բայց Յիսուսի հակառակորդները չգիտցան թէ ճշմարտութիւն խօսող բերան մը գոցել տալով ճշմարտութիւնը չի պարտւելիր, արդարութեան դատին նուիրուած անձ մը սպանելով արդարութիւնը չանհետանար: Իրաւ է թէ Յիսուսի մարմինը սպանեցին, սակայն Անոր խօսած ճշմարտութիւնները, քարոզած սկզբունքները և ապրած կեանքին թողած անջնջելի տպաւորութիւնները չկրցան ոչնչացնել: Ուրիշ խօսքով, Յիսուսի ոգին չկրցան դալի որեւէ կերպով:

Երեք օր վերջը երբոր Յիսուս յարութիւն առաւ, իր աշակերտներուն տրտմութիւնը անմիջապէս ուրախութեան փոխուեցաւ: Եւ ահա՝ հրեշտակները այս ուրախութեան աւետիսն է որ կը հռչակեն ի լուր աշխարհի և կ'ըսեն. «Ձէ աստ ալ յարեաւ»:

Առաջին դարու Քրիստոնէական եկեղեցւոյ քարոզած Աւետարանին պատգամը ահա՛ այս էր. Յիսուս թէև մեռաւ, բայց կենդանի է, յարութիւն առած է: Յարուցեալ Քրիստոսը այսպէս առաքեալներու քարոզին բուն նիւթը կը կազմէր:

Երբոր բնութեան ականարկ մը նետենք, անկարելի է հոն չտեսնել յարութեան գաղափարին հետքերը: Յորենի հատիկ մը եթէ ցանուի արտին մէջ, թէև կը մեռնի հողին տակ, բայց ժամանակ մը վերջը յարութիւն կ'առնէ մէկէ աւելի հատիկներով: Բնութիւնը ձմեռ ատեն կը թմրի, կը քնանայ. սակայն երբ գարունը հասնի, կը սկսի արթննալ ու կրկին նոր կեանք ու կենսունակութիւն սփռել իր շուրջը: Նոյնպէս մարդ մը երբոր մեռնի, օր մը յարութեան փառքին կ'արժանանայ: Ապականեալ մարմնով կը ննջէ և անապական մարմնով յարութիւն կ'առնէ: Այս իսկ պատճառաւ եթէ մէկը իր մահկանացուն կնքէ, աւելի լաւ է զինքը ննջեցեալ կոչել քան թէ մեռեալ: Քանզի մարդու հոգին չի մեռնիր. անիկա կենդանի է միշտ, և այս աշխարհի մէջ թէև ինքզինքը կ'արտայայտէ ֆիզիքական

մարմնի մէջ, բայց հանդերձեայի մէջ ան-
մահ մարմին մը կը հաղնի:

Յիսուսի յարութիւնը նկարագրուած է
մանրամասնօրէն չորս Աւետարաններուն մէջ
և հաստատուած է Պողոսի Առաքելական
Թուղթերով: Սակայն Յարութեան մեծա-
զոյն փաստը Քրիստոնէական Եկեղեցւոյ
մեր մէջ ներկայութիւնն է, և ՀՕՍՍ տարի-
ներէ ի վեր հաւատացեալ հոգիներու հետ
Քրիստոսի ունեցած ներքին յարաբերու-
թիւնը: Այսօր իսկ Քրիստոնեայ հաւատա-
ցեալներ Անոր հետ կենդանի հաղորդակցու-
թեան մէջ են շարունակ: Դերեզմանը Յի-
սուսի համար ոչ թէ կեանքի վախճանը
եղաւ, այլ շարունակութիւնը, աւելի փա-
ռաւոր և աւելի յաղթօպանծ:

Յիսուսի յարութեան պատգամը: Անոնք
որոնք արդարութեան դատի յաղթանակին
կը սպասեն, պէտք է որ յուսահատին:
Յունաստանի մէջ, հին ատեն, Ասկրատին
թոյն խմցուցին՝ որպէսզի երիտասարդնե-
րուն նոր ու բարձր գաղափարներ չսորվեցնէ:
Բայց հակառակ ասոր, անոր ուսուցումներն
ու գաղափարները երկու հազար և աւելի
տարիներէ ի վեր դեռ կը հնչեն մարդոց
մտքի և հոգիի ականջներուն: Ընթարտա-
խօսը կրնայ սպանուիլ, բայց ճշմարտու-
թիւնը չի մեռնիր: Արդարը կրնայ խաչուիլ,
սակայն արդարութիւնը չ'ոչնչանար: Ան-
մեղը կրնայ որպէս յանցաւոր դատապարտ-
ուիլ, բայց անոր իրաւունքը կը մնայ իր
արդար պահանջք: Հետեւաբար, եթէ դատդ
արդար է, մի վախնար թէ հակառակորդ-
ներդ կը յաջողին և դուն առանձին կը
մնաս: Վերջնական յաղթանակը քուկդ է:

Յիսուսի հրաշափառ յարութիւնը ահա
ասոր ցայտուն մէկ ապացոյցն է: Եւ անիկա
ուրիշ բան չէ բայց եթէ հոգեւոր արժէքնե-
րու յաղթանակը նիւթական ոյժերու վրայ:
Յիսուս իր յարութեամբը ոչ միայն արդա-
րութեան դատի ակոյտեանը կը հանդիսանայ,
այլ նաև գերեզմանէ անդին կեանքի գո-
յութեան գաղափարը կը հաստատէ:

Իբրև եզրակացութիւն, շատ ի դէպ է
հոս յայտարարել թէ Փրկչին յարութիւնը
երկու բառերու իմաստը յեղաշրջեց հիմնու-
վին և անոնց տուաւ նոր նշանակութիւն
մը: Անոնցմէ մին է խաչը, որ անարգանքի
նշան էր և եղաւ պարծանքի առարկայ,

մահուան գործիք էր և եղաւ փրկութեան
միջոց: Ինչպէս Մովսէսի պղինձէ օձը գա-
ւազանի մը վրայ դրուելով անոր նախողներ
անապատին մէջ բուժուեցան օձերուն իրենց
պատճառած թունալից վէրքերէն, նոյնպէս
ալ Փողոթնայի խաչին վրայ նախողներ եր-
կու հազար տարիներէ ի վեր բուժուած են
և այժմ ևս կը բուժուին իրենց մեղքերէն
և կ'առաջնորդուին աւելի բարձր ապրելա-
կերպի մը:

Երբ Մահմետական կրօնին հիմնադիրը
մեռաւ, իր հետեւորդները մահուան սպառ-
նալիքներ ըրին ամէն անոնց՝ որոնք անոր
մահը յայտարարելու փորձեր կ'ընէին: Ա-
րովհետեւ տեսակ մը անպատուութիւն կը
զգային և կ'ամէնայնին զանիկա մեռած մը
համարել: Իսկ Յիսուսի աշակերտները,
ընդհակառակը, իրենց Ուսուցչին մահը ոչ
միայն չէին ծածկեր, այլ նաև պարծանք
կը զգային Անոր խաչովը՝ որուն վրայ նա
մեռած էր ծանրածանր տառապանքներու
ներքեւ:

Փրկչին յարութիւնը նմանապէս փոխեց
գերեզմանին իմաստը: Յիսուսի ժամանակ,
Սաղուկեցիներու նման շատեր գերեզմանը
կեանքի վախճանը կը համարէին, բայց Յի-
սուս իր յարութեամբը եկաւ հաստատելու
թէ ան ոչ թէ կեանքի վերջին հանդրուանն
է, այլ սկզբնաւորութիւնը իրական ու մնա-
յուն կեանքի: Մահը արդարներուն համար
ոչ թէ պարտութիւն՝ այլ յաղթութիւն մըն է:

Առաջին դարու քրիստոնեաներ և ի
մասնաւորի Պողոս Առաքեալ, ասկէ քաջա-
լերուած, ասպարէզ կը կարդան մահուան,
ըսելով. «Ո՛ւր է, մահ, յաղթութիւն քո, ո՛ւր
է, յիմով (գերեզման), խաչքոց քո» (Ա.
Կորնթ., ԺԵ., 55): Յիսուսի յարութիւնը
խափանեց մահը՝ զոր քրիստոնէութեան մեծ
առաքեալը վերջին թշնամի կ'անուանէ երբ
կ'ըսէ. «Վերջին թշնամին որ պիտի խա-
փանուի՝ մահն է» (Ա.
Կորնթ., ԺԵ., 26):

Քրիստոս յաբեաւ ի մեռելոց,
Մահուամբ զմահ կոխեաց,
եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պար-
նմա փառք յաւիտեանս. ամեն: [գեւեաց.

Յրէզնո, Գալիթ.

Գ. Ս. ՍԱՐԱՅԵԱՆ

ՏԵՍԻԼՔ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

Դա՛րձեալ միմալ ... :

Գի՛րն է նակսին

Անոնց բոլոր,

Որոնք նոթի

Արծուի նրման

Իրենց որսի

Երազը յար

Հալածեցին,

Եւ չքհասան.

Ու մեկուքեան

Հացը պարարտ,

Հացը պատրաստ,

Ասամներուն

Տակ ծամեցին :

Դա՛րձեալ միմալ

Հիմա ա՛յստեղ

Տեսիլներով հրաւանքման,

Կուգամ ես ման

Իմ հայրենի

Երգիքին տակ :

Ու Մարգարէն

Ժամանակի ու դարերու

Իր խղճին խելն

Ու բեկբեկուն

Մարմարին վրայ կը փանդակէ.

— Բայց վա՛յ անոնց՝

Որոնք իրենց

Հարազատ Մօրն

Հայրենիքի Հողէն ծընած

Մեծ Տեսիլքին

Ըսինքներէն

Կաքք չառի՛ն

Ըսեղծագործ ... — :

Տեսի՛լ, Երա՛զ

Գաղափարաց եւ ըզգացմանց.

Ու մանաւանդ՝ շաքրուանուած

Արիւն ֆրսինք

Մեր Պատմութեան

Աւազանէն,

Ու մեր նախնեաց

Արգաւանդ սա՛

Հողին մէջէն,

Ըսէ՛ք, ի՞նչպէս

Կրնայ մոռնալ

Ձեզ ամէն հայ ... :

Ձե՞ որ ինկալ

Ըսեղծագործ

Մտքի Ափէն՝

Հողին վրայ Հայասանի

Ու ջո՛ւր առիք,

Առիք ոսկի՛ արեւ ու լո՛յս՝

Մըշակներէն գրչի, հուրի.

Եղաք Մարմին՝ սա՛ փառացած

Տանարին Հայ՝ էջ - Միածնի

Որ երեք Այ՛ ունի նակսին,

Մին անցեալին, մինն ներկային,

Երրորդն անեղբ ապագային.

Ու կը նայի իբրեւ անմահ

Յաւերժութեան անմար Լոյսին ... :

Բայց կարօտի ի՛նչ անխմաց,

Ի՛նչ նո՛ր սարսուռ

Կը փանդակուի

Մարմարին վրայ

Իմ հողիքին ... ,

Երբ ես միմալ

Հիմա ա՛յստեղ,

Տանարին շուրջ

Մեր Տեսիլքի՝

Յա՛ր կը նեմեմ ... :

Շիրմափառէր

Իմ պապերուս.

Ելէ՛ք ոսֆի՛, ոսֆի՛,
Կեանքի՛ ելէ՛ք
Ու լեցուցէ՛ք
Այս բակը մեծ Մայրավանքի,
Քաղաքը շէն այս Վաղարշի,
Ելէ՛ք ոսֆի՛, ոսֆի՛,
Ու կեանք առէ՛ք
Ու կեանք տուէ՛ք
Հայոց համայն ժողովուրդին:

Ու կը շնչեմ ես հանդարտի՛ւ
«Լուսաւորչի» այս «նով»ուն հետ,
Մեր պատմութեան, մրճակոյթին
Ամէն մէկ դարն՝
Որ արիւնի
Ու ստեղծումի
Համածաղկանց
Մեհեան մ'է լուռ:

Ու ի՛նչ նայումս, անհորիզո՛ն
Հեռո՛ւն, հեռո՛ւն ...
Մէջն աչքերուն Հայրենիքիս,
Նայումս՛իս մէջ
Կ'իյնայ այնպէս.
Շուքը ինչպէս՝
Աստուածիմաստ
Փառքի նըման Գիցունիին
Կ'իյնայ լընին հայելիին
Որ ծեփծեփուն
Հազար գաղտնիք ունի ծոցին ...:

Մո՛ւրքն է ինկեր՝
Պատմութեանս իր սեւ թաւեայ
Մայրավանքի մեծդի բակին,
Արագածի քաղաքագաթ
Հազարամեայ գաղտնիքներէն,
Հազարամեայ կատարներէն ...:

Գիշերն՝ հսկա՛յ դազաղի՛ պէս.
Կուրծփն՝ հէփեաթ,
Ձեռքին՝ սարսուռ,
Ունի նետեր ներճնումի

Մրսին վերեւ,
Կը տարածուի՛ ալիք ալիք,
Ու կը բազմի
Մութին այս սեւ պատմանդանին ...:

Աջիս, ձախիս,
Չորցած երկու
Աւազաններ ...
Ըսես դամբան՝
Մեռելներու ...:
Ու քար մ'անդին,
Դուն կը լսես
Կո՛չն աղբիւրին՝
Ծառաւանիւծ
Հոգիներուն:

Ու սեւ քարե՛ր,
Թէ սեւ շարժում՝
Ժամացոյցի հարուածի պէս
Մէկիկ, մէկիկ,
Աչքիդ առջեւ ...
— Գորսե՛ր, գորսե՛ր,
Սեւ կանաչին
Մէջ կը պարեն:

Պարսպապատ
Մայրավանքի
Այս խո՛ր ու վե՛հ
Սենութեան մէջ
Միայն պահակն է հոն արքուն
Հաւասարիմ շուներուն հետ:

Ու հիւսիսի որմին ներքեւ
Ես կանգ կ'առնեմ.
Այնպէ՛ս հիւծած,
Յոգնա՛ծ այնպէս,
Գաղափարաց զուպարներէն.
Ու ծեծ կերած սրբու մը պէս
Կու՛ս մը կուլամ:

— Հո՛ս է, չըսի՛ն երէկ ինծի,
Ծա՛ռն այն աղուոր՝

Որուն շուփին,
Մեծ երգահանն մեր օրերու,
Կուգար երգեր
Յօրինելու —:

Հո՞ն, արեւմոսֆ,
«Տրդասաղոս»
Ռոմին կողին՝
— Տո՛ւնն է — քսին
Կոմիսասին,
Քոմիկն անոր՝
Վանփի խուցեր
Մեր Մագիսրոս
Կրդերներուն:

Հիմա՞ ... ո՛չ ծառ, ո՛չ տուն,
Ո՛չ խուց, ո՛չ Մագիսրոս,
Ո՛չ Կոմիսաս ...
Գո՛րգն է միայն
Սեւ կանաչին,
Փռուէր կողին
«Տրդասաղոս»
Այդ բարձունքին ...:

Ու լո՛ւռ դարձեալ ...
Խաղաղութի՛ւն
Համայնական ...:
Բիլլիարդներու
Չայնը մեռաւ
Ռոմին ետեւ .
Ու բարձրախօսն ալ զոցեց
Ծառերու կամ ձողերու
Բարձունքներէն բերանն իր գոռ .
Ու կասուներ կը պահուրսին,
Ու կ'երեսան .
Հեռու գիւղի կոլխոզներէն
Աֆաղաղի կանչեր կուգան ...:
Ահա վերջին մա՛րդն ալ մըսաւ
Իր սեմէն ներս ...

Դա՛րձեալ միմակ .
Ու մութին հետ մըսեմացած ...
Յա՛նկարծ սարսուռն՝

Ամբողջ մարմինըս գալարեց
— Մութին մէջէն
Յառնո՞ղ ոգի՛
Դու մի՛ նայիր իմ աչքերուն .
Նայէ՛ հեռո՞ւն
Հո՛ն, հո՛ն նայէ՛,
Նայէ՛ իմ այս
Դողդոջ, դալուկ
Յուցամասիս հիւզ ուղղութեամբ,
Հարաւի՛ կողմն .
Ո՛չ, ո՛չ, անցի՛ր,
Արեւմոսֆ Վեհարանէն,
Ու տե՛ս, հո՛ն, հոն,
Ներսէօեան սեւ
Լինէն անդին,
Անցի՛ր, անցի՛ր,
Դամբաններէն մեր պապերուն,
Դայիանէի փառքէն անցի՛ր,
Հորիզոնին՝
Արարատեան սեւ հովիտէն,
Սեւ Արաֆսէն,
Տե՛ս աչքերովդ
Տրտո՛ւմ, միմա՛կ
Դազաքները Մե՛ր Լեռներուն,
ՄՍՍԻՍՆԵՐՈՒՆ ...

Գերի՛ է ան ...:

.

Տեսա՞ր, Ոգի,
Տեսա՞ր, Տեսիլփ
Եւ ո՞վ երազ
Դուն աննուան
Հայ Հոգիի .

Որք ու միմակ ...
Ո՛րքան արցունք՝
Չաւկըներուն իր աչքերուն
Չուրերուն հետ
Պղտոր պղտոր
«Մայր Արաֆսի» .

Ո՛րք ու միմա՛կ

Արծիւն է ան Հայաստանի
Որուն քեւերն են վար ինկած ...:

Զրսի՞ն մեզի
Թէ մենութիւնն
Գիրն է ճակտին
Անոնց բոլոր՝
Որոնք նօթի
Արծուի նրման
Իրենց Որսի
Երազը յար
Կը հալածեն
Ու չեն հասնիր.
Ու մենութեան
Հացը պարարտ,
Հացը պարարտ,

Ասամներուն
Տակ կը ծամեն ...:

Ու Մարգարէն
Ժամանակի ու դարերու
Իմաստութեան մօտերը ձեռին
Գիտակցութեանը մարմարին
Կը փանգակէ.
— Բայց վա՛յ անոնց՝
Որոնք իրենց
Հարազատ Մօրն, Հայրենիքի Հողէն
Մե՛ծ Տեսիլքին Ըստիներէն լծընած
Կա՛թը չառին
Ըստեղծագործ ... —:

ԱՇՏԻՇԱՏ

ԼՈՅՍԻ ԺԱՄԵԱՅԷՆ

Կը լըռէ մտածումն ու կը սեւնայ մէջը՝ս գիծն ու սահման,
Իմ հոգիս՝ անդունդ մըքար՝ կ'ունկնդրէ անդունդի՝ երգին
Ու կը զինովնայ լեզի հոծութեամբն իր արհաւիրքին ...

Ո՛ւր, ո՛ւր այս անափ սարսափին վրայէն՝ որ մոլուցքն իր լա՛յն
Կը քօքուէ մըրիկն իր մէջ երգելով՝ մարդուն հեռէն կոյր
Զիս ո՛ւր կը ճանի, ի՛նչ երազներու, ո՛ր ավտոմեքն անդոյր ...

Ա՛հ, անպարագիծ այս խրոտիլին մէջ թող նաւն հեռանա՛յ,
Այս անէական օրօրին մէջ նաւն յաւէ՛տ տեսանի.
Լոյսի շամբայէն՝ արդար Արեւի սիրտին կը ճանի ...:

Ն Ո Ւ Պ Ա Ր



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Բ) — «ՄԱՍԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

Նարեկացին ամէն կերպ ճգնում է դա-
նազան փաստարկումներով «ստիպել» Աս-
տուծուն, որ «լսի» իրեն և իր ցանկութիւն-
ները կատարի: Պոէմի սկզբում բանաս-
տեղծը շնորհ է խնդրում Աստուծոյ, որ
կարողանայ իր Մատենանը վերջացնել նրան
հաճելի ձևով, իսկ յետոյ այնպէս է բա-
ցատրում, թէ «Աստուծոն հաճելին այն է», որ
ինքն «իր համար պատրաստուած օթե-
ւանները տանող ճամբան ոտք զննելով,
արցունքներով խօսքը սերմանելով, երբ
կայան հասնի հունձքը հաւաքելու համար՝
դառնայ լիովին մաքրուած, բերկրանքով
լիցուն և բերքով երջանիկ»: Ուրիշ, եթէ
այդ վախճանն է Աստուծո համար հաճելի,
կը նշանակի նա չի կարող և չպէտք է
իրեն խորտակի: Պիտի նշել, որ առանձնա-
պէս այս կապակցութեամբ Նարեկում լիութի
գրսեօրում է հեղինակի միտքիցիւմի կրօ-
նական կողմը: Նարեկացին այնպէս է
դարձնում հարցը, որ Աստուած անպայման
պէտք է հաշուի առնի իրեն, հաշուի նստի
իր հետ և այդ հէնց այն պատճառով, որ
նա Աստուած է և իբրև այդպիսին ունի մի
շարք այնպիսի յատկութիւններ, որոնցից
երբեք չի կարող հրաժարուել, կամ մարդ-
կանց այդ յատկութիւններից դուրս վերա-
բերմունք ցոյց տալ: Այսպէս՝ և հէնց իր
պոէմի սկզբում բանաստեղծը այնպիսի
հարցումներ է ուղղում Աստուծոն՝ միաժա-
մանակ նրա յատկութիւնները յիշատակելով,
որ բացասական պատասխան սպասելը ըստ
կրօնա-փիլիսոփայութեան՝ հնարաւոր չպիտի
լինէր:

Արդեւ մոռացի՞ւ զբարեբաւել՝ ակնկա-
լութիւն:

Անճեսեսցե՞ս զգրասիրել՝ խնամով:

Այլայեսցե՞ս զմարդասիրել՝ անփոփոխ:

Նահանջեսցե՞ս զկենսագործել՝ անվախճան:
Թողուցո՞ւս զողորմութիւնդ՝ երջանիկ պտուղ:

Աղաւաղեսցե՞ս զհաղցուքեանդ բարեհոգի՝
ձաղիկդ:

Անպասուեսցե՞ս զնիւր պանծանաց բումդ
նոխուքեան:

Յեղանակեսցե՞ս զփառս հերաց բումդ բարձ-
րութեան:

Ո՞չ պահեսցես զվայելչական զարդ պայծա-
րութեան բումդ պսակի:

(Բան Բ. — Դ.)

Հնարաւոր է, որ Աստուած «մոռանայ»
«բարեբաւել», «գրասիրել», «մարդասիրել»,
եթէ նրա կոչումներն են՝ «ակնկալութիւն»,
«խնամով», «անփոփոխ» և այլն, հարց է
զնում Նարեկացին: Հնարաւոր է, պա-
տասխանում է նա, որովհետեւ այդ գէպ-
քում նա կը դադարի Աստուած լինելուց:
Մի այլ տեղ մի ուրիշ ձևով Նարեկացին
հարց է տալիս, թէ՛ այն ո՞վ է, որ առա-
ւօտեան լուսածագին վախենայ նորից մութի
մէջ ընկնել, կամ կեանքի մօտ լինելով՝
մահանալ, կամ ազատութեան՝ և պարտա-
ւորուել, կամ փրկութեան՝ և կորստեան
մասնուել: Պատասխանը նոյնն է. եթէ
Աստուած «լոյս»՝ «կեանք», «ազատութիւն»
և «փրկութիւն» է, ապա մարդն այդ բա-
րիքներից պէտք է անմասն չմնայ և չի
կարող մնալ: Ուստի նա կարծում է, թէ
ինչքան ինքը անխնայ և առատութեամբ
յիշատակի իր մեղքերը, նոյնպիսի առատու-
թեամբ պէտք է որ Աստուած ջնջի դրանք:

Վասն այնորիկ գրեցի առանց խնայելոյ,
Զի դու առանձապէս ջնջեսցես ...:

(Բան Ե. — Բ.)

Այս կապակցութեամբ շատ կարեւոր
հանգամանք է և այն, որ Նարեկացին իր
պոէմի մի շարք գլուխներում (յատկապէս
Կ, ԿԱ, ԿԲ, ԿԳ, ԿԴ) բազմաթիւ փաստերի
մէջ բերումներ է կատարում Աստուածաշնչ-
նից և Աւետարանից ու զրանց հիման վրայ
հետեւութիւններ անում իր անպայման
փրկուելու հնարաւորութեան առթիւ: Այն,
ինչ գրուած է այդ գրքերում զանազան
անձնաւորութիւնների յանցանքների ներ-
ման մասին, նա յիշատակում է իբրև մի
սոսակ իրական փաստեր, որոնց հանդէպ

Աստուած իր նկատմամբ, կարծէք թէ, այլ կերպ չպիտի կարողանար վերաբերուել, եթէ ոչ փրկել: Նարեկացին ամենից շատ սիրում է կրկնել Սողոմոն Իմաստունի օրինակը.

Այս Սողոմոնի յուսոյ ալեքսանձ իմոյս առեալ Տիպ.
Քանզի ոչ այլ ոք բազմամեկ ուրբան զնա ինձ
զուգաբաւիլ:

(Քան խէ. — Բ.)

Սողոմոնը հրեմն «որդի» էր, ասում է Նարեկացին, յետոյ ասելի դարձաւ, որովհետև հեռացաւ Աստծուց, կոտորաշուտ թեան զիմեց և այլ սոսկալի մեղքեր ու պղծութիւններ գործեց: Բանաստեղծը այնուհետև զարմանք է յայտնում՝ նա, որ այնքան իմաստուն էր և ուսուցիչ, ի՞նչպէս անօրինացաւ, այնքան բարձրացուած էր, ի՞նչպէս ընկաւ, այնքան փառաւորուած էր, ի՞նչպէս անարգուեց: Եթէ նրա հետ այդպիսի վատ բաներ պատահեցին, հապա ինչեր կարող են պատահել իր հետ՝ սովորական մահկանացուի հետ: Բայց Սողոմոնը, ասում է նա, ոչ այնքան մեղանչեց, որքան զղջաց, ուստի չպէտք է նա խոստովանարակուի, այլ պէտք է սիրով յիշուի իրրեւ յուսադրութեան հիմք բոլոր նրանց համար, որոնք Տիրոջ են զիմում, քանի որ վերջ ի վերջոյ նրա հոգին փրկութեան արժանացաւ: Ըստ բանաստեղծի՝ եթէ Սողոմոնը մեծ իմաստուն լինելով մեղանչեց, բայց չնայած դրան ներուեց, բնականաբար սովորական մարդիկ աւելի շուտ և աւելի հեշտութեամբ պիտի ներուեն: Որա նման շատ տեղեր կան Նարեկում, երբ բանաստեղծը Աստծուն, այսպէս ասած, «փաստի» առաջ է կանգնեցնում:

Այս բոլորը մտաբերելով՝ բանաստեղծը շատ անգամ ինքն իրեն է կշտամբում ու դատապարտում՝ իր անձի խորտակման պատճառը իր մէջ՝ իր ինքնահնար կասկածների մէջ տեսնելով.

Եւ արդ յի՞մ տեսիլս անձն իմ [քեանց,
Կործանեալ՝ ոչ յասուածուս հնարաւորու-
Այլ ի բուռ ինքնագործ հակամիտութեանց.

Կամ ընդէ՞ր զիս խռովես՝ յուսահատութեամբ
Սասանայականաւ զմիսս հարեալ...

(Քան խէ. — Բ.)

Այսպէս անվերջ խորհրդածութիւններով՝ Նարեկացին հետապնդում է իր նպատակին՝ լաւատեսական իր հեռանկարի մէջ համոզուելու և համոզելու բուն ձգտումով: Նա մի տեղ նոյնիսկ այսպիսի մի միտք է արտայայտում, թէ հինը վերանորոգելով առաջին պայծառութեամբ նորից ստեղծելը աւելի մեծ գործ է, քան ոչնչից նորն ստեղծագործելը, ուրեմն Քրիստոսի համար պատուաւոր և մեծ գործ է իր հնացած պատկերը նորոգելը, իսկ նա միթէ այդ պատուաւոր գործից կը հրաժարուի՞, և ինչո՞ւ պիտի հրաժարուի (չարունակում է համոզել Նարեկացին), և վերջ ի վերջոյ՝

Զի՞նչ պիտոյ են բուռ զօրութեանդ ամենա-
հնարդ կարողութեան
ժամանակաց առաւելութիւն առ յանցու-
նչ բրբել մի ական, [ծոց իմոց բաւութիւն
նչ խուս մի տեսութիւն ամանցական,
նչ սակաւ մի նայեցում փայլական, ...
նչ նշուղից արագութիւն,
նչ շնչոյ տուրետութիւն:

(Քան խէ. — Գ.)

Եւ նոյնիսկ, ասում է բանաստեղծը, այս անկայուն և անյարմար խղճուկ և քիչ հարազատ նմանութիւններից ոչ մէկը այնքան ժամանակաւոր ու վաղանցուկ չէ, որքան իր զիջած մեղքերի ստոնամանիքի հալումն ու ցնդումը Քրիստոսի զօրութեամբ: Եթէ այսպէս աներեւակայելի չափով հեշտ ու հանգիստ է մարդու մեղքերի ոչնչացնելը և նրան կործանումից փրկելը, ուրեմն ինչո՞ւ պէտք է այդպէս էլ չառուի:

Իր միտքիական անձնական փոթորկալից ապրումների մէջ Նարեկացին արտացոլել է «հայր տանջանքն ու տենչանքը», ինչպէս այդ շատ ճիշդ բացայայտել է հանձարեղ Թումանեանը:

Թէպէտ նա խորապէս զժգոհ է հասարակական իրականութիւնից, որը խիստ քննադատութեան է ենթարկել և շատ լաւ մտնել է նաեւ, որ մարդկանց բնաւորու-

թեան վատութիւնը արդիւնք է հասարակական վատ բարքերի («և որպէս աստուտ իսկ կիրք բնութեանց զհասարակաց բարուց ցուցանէ» (Բան Իթ. — Բ.), բայց և միաժամանակ նա հաւատում է հասարակութեան և մարդու վերածնութեանը ու պահանջում է այդ։ Նարեկացին ամբողջ հոգով ձգտում է տեսնել մարդուն վեր բարձրացած վատ վիճակից դէպի լաւը, և լաւին հասնելու հնարաւորութեանը նա հաւատում է, ինչպէս և հաւատում է մարդու մէջ մարդկայինի վերջնական յաղթանակին, որով միայն մարդը հասնելու է անմահութեան։

Այն բոլորը, ինչ ասուեց «Ողբերգութեան Մատեան»ի բովանդակութիւնը ներկայացնող գծերի մասին (որոնք թէպէտ դեռ չեն սպառում նրա ողջ էութիւնը), ցոյց են տալիս, որ նա խորը և հարուստ բովանդակութիւն ունի, իսկ դա նախ և առաջ պայմանաւորում է նրա գեղարուեստական մեծութիւնը։ Թէպէտ, ինչպէս սկզբում տեսանք, մեր գրողները (Դեմիրճեան, Զարեան) յաճախ են Նարեկացուն Տանթէի հետ համեմատել, և որոշ իմաստով նրանք իրաւացի էլ են, բայց այնուամենայնիւ պիտի նշել, որ մարդկային ներքինը ստեղծագործութեան նիւթ դարձնելու իմաստով Նարեկացին աւելի առաջ է անցել Տանթէից ու աւելի մօտեցել է Շեքսպիրին։ Այն ժամանակ, երբ Տանթէի մօտ կեանքի հանգամանքները արտացոլող ողբերգականը արտայայտուել է գերազանցապէս հերոսների արտաքին՝ ֆիզիքական տանջանքների պատկերներով, Նարեկացու մօտ այն ներկայացուած է կոնկրետ մարդկային ներքին-հոգեկան բարդ և հակասական ապրումների մէջ։ Պոեմում ինքը, Նարեկացին, մեծ բանասէպծը, հանդէս է գալիս որպէս իր ժամանակաշրջանի մարդու մի հոյակապ գեղարուեստական համապարփակ կերպար։

IV

«Մատեան Ողբերգութեան» պոէմի յիշատակարանում Նարեկացին իր այդ ստեղծագործութեան մասին գրել է. «Ըստ հուովման ընթացից ամանակաց յառաջ շարժութեան, որ ըստ լրագատարն նշուլագեղն

արփիտաճանչ լուսակիրն օրակշիռն մըղտափարատն ակնապարար ականն արեւու՝ ստեղծականն արուեսկի, որ համբարէ հուովէ կուտէ ամաց յուովութիւն ի չափս դարուց շնչասպառ և կենդանանորոգ առուղեկան յաւիտենիս . . . ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբաղմաստեղնեան զրուագս զրութեան այսմ սոփերի արգասաւորի . . . »:

Աշխարհիս մեծագոյն բանաստեղծների նման նա այսպիսով հրաշալի կերպով ըմբռնել է իր ստեղծագործութեան գեղարուեստական արժանիքները։ Նարեկացին միանգամայն սպառիչ կերպով գնահատել ու ամփոփել է այստեղ իր ստեղծագործ աշխատանքի արդիւնքը, ասելով, որ ինքը հրաշակերտել է բազմաստեղնեան զրուագներով մի «միազոյ» (միատարր) գիրք։

Եւ իրօք՝ Նարեկացու պոէտիկական կուլտուրան այնպիսի վիթխարի մեծութիւն և բարձրութիւն ունի, որ նայողը գլխապտոյտ է ունենում. նրա բանաստեղծական արտայայտչական ձևերն ու միջոցները անհաշիւ են ու անսպառ, անսահման բազմազան են ու աներեւակայելի չափով զուենագեղ, իսկ նրա բառարանը հայ բոլոր գրողների բառարաններից ամենահարուստն է։ Այժմ, խօսելով Նարեկացու բանաստեղծական արուեստի մասին, նախ և առաջ տեսնենք, թէ այդ արուեստը ինչպէս է կապուած սկզբնաւորուած վերածնութեան հետ և ինչպէս է արտացոլում այն։

«Մատեան Ողբերգութեան» պոէմը տաղերի նման և նոյնիսկ նրանցից առաւել աչքի է ընկնում այն բանով, որ Նարեկացին այստեղ էլ իր խոհերն ու զգացումները արտայայտելիս միշտ ստեղծում է ամբողջական կենդանի պատկերներ։ Բայց խնդիրը միայն պատկերները չեն. առհասարակ Նարեկացու ստեղծագործական ձևի ու չափի զգացմանքը «Ողբերգութեան Մատեան»ում հասնում է իր բարձրագոյն արտայայտութեան։ Պոէմի բովանդակութեան զարգացման բնոյթը այնպիսին է, որ պահանջում է արտայայտչական ձևերի վիթխարի քանակ և բազմազանութիւն։ Եթէ Մատեանի մոտիվները յաճախ կրկնը-

ւում են խորութեան և ուժի նոր աստիճանի բարձրացում, ապա՝ զրա համար պէտք էին անսպառ և հեղհեղ աւելի մեծ ուժի ու բուրքովին թարմ բանաստեղծական արտայայտական միջոցների, քանի որ առանց զրանց պոէմը վերջ ի վերջոյ կարող էր յոգնեցուցիչ դառնալ: Բայց նախկինացու այս ստեղծագործութեան մէջ հոգեկան ամէն մի վիճակ միշտ էլ գտնուում է իրեն լուսավորյն կերպով գրասերող համապատասխան բաները և պոէտիկական ձևերը: Կարճ ասած՝ նարեկը բովանդակութեան և ձևի ներդաշնակութեան ամենագոյնի զուգորդում է համարուել:

Բնու չպէտք է կարծել, որ այդ ներդաշնակութիւնը ստացուել է պատահաբար, տարերայնօրէն: Նարեկացին հրաշալի կերպով գիտակցելով իր պոէմի բովանդակութեան և նրա զարգացման առանձնայատկութիւններին, գիտակցել է նաև, թէ զրանց համապատասխան ինչպիսի ձևեր են պէտք: Պոէմում մի տեղ՝ բանաստեղծը մեղքեր գործելուց աւելի ողբալի բան է համարում կրկնաբանութեամբ՝ շատախօսութեան մէջ ընկնելը: Նա խորապէս զգացել է, որ կրկնաբանութիւնը գեղարուեստական գործի մահացու թշնամիներից է, ուստի չնայած բովանդակութեամբ պայմանաւորուող սոսկալի գծաւարութիւններին, ամէն կերպ աշխատել է խուսափել կրկնութիւններից, և դա նրան լիովին յաջողուել է: Նարեկացին պոէմում յաճախ յիշատակութիւններ է անում, որ տուեալ տեղում ինքը ոչ թէ իր «ողբերի» էութիւնն է փոխում, այլ խոսքի եղանակը, կամ «ողբի» արտայայտութեան ձևը և որ առհասարակ իր «թախածափն» ողբերը շարադրուած են բազմազան ձևերով: Ահա այդպիսի յիշատակութիւններից մի քանի օրինակներ.

Բայց Բանգի ի վերայ այսօրեանց գերութեանց
Ամենաբոլորս վստիկաւորիս մի զմիով ել
եւ ելս առնելոյ,
Զոր զկերպարանս անցիցն ի մասնէ վերա-
նաւեալից նախագրեցիցն.
Ուստի եւ փոխեալ զեղանակ բանիս՝
Այլ ոչ զեղկութիւն աղէտիս:

(Բան ԵՆ. — Ա.)

Բայց զի՞ է յայտնիկ ինձ պարծել,
եւ ոչ վերսին ի սոյն պոսկաւել:

Այլ յայլ օրինակ փոխեալ
Զմատեան մաղթանաց այսր ողբերգութեան,
Որ ինչ ինձ է յարմարուոր...

(Բան ԼԳ. — Գ.)

Ընդ այսր հառաջանաց թախծութեան ողբոց
Ի բազմաց կերպիւ շարակարգելոց,
եւ ամենից նոցոց ոլորմեա,
Գովեալ եւ երկայնամիս քաղաւոր:

(Բան ԾԲ. — Ա.)

Դառնալով նարեկի պատկերաւորութեան, պէտք է ասել, որ վերածնութեան ոգուն համապատասխան ինչպէս տաղերում, այնպէս էլ այստեղ մեծ մասամբ զրա հիմքը կազմում են իրական աշխարհի երևոյթներից և առարկայական արտայայտութիւններից վերցուած համեմատութիւնները և փոխաբերութիւնները: Այս կապակցութեամբ նարեկը նոյնիսկ մի քաջ ասած է տաղերից. որովհետեւ իրական երևոյթներն ու առարկաները հազուադիւրս գէպքում են ալիգորիկ պատկերներ ստեղծելու համար գործածուում, քան այդ կարելի էր ենթադրել: Նարեկացին բնութիւնից վերցուած որեւէ տեսարան մեծ մասամբ օգտագործում է ուղղակի և անմիջապէս հասկանալի կերպով, տուեալ խոհրդ կամ յոյզը համեմատութեամբ կամ փոխաբերութեամբ պատկերաւորելու ու ցուցադրելու նպատակով: Այսպիսով՝ նա չնայած երեք զար առած է ապրել Տանթէից, բայց այս առումով էլ նրանից շատ աւելի մօտ է նոր ժամանակների բանաստեղծներին. յայտնի բան է, թէ գծաւարմբոնիկ ալիգորիկները որքան մեծ տեղ են բռնում Տանթէի ստեղծագործութեան մէջ:

Նարեկացու ամբողջ պոէմը շնչում է իրական աշխարհով: Ամբողջ տիեզերքը՝ երկնային մարմինները, երկիրը կազմող տարրերը՝ ծով, ցամաք, ծառեր և ծաղիկներ, գազաններ և թռչուններ, սողուններ և միջատներ, բոլորն էլ իրենց զարմանալի ճիշդ և մանրամասն նկարագրով կենդանանում են իրեն միջոց բանաստեղծի բազ-

ՀԻՆ ԷՋԵՐ

ԽՐԱՏ ՈԳԵՇԱՀ

Նախ և առաջինն մի՛ ինչ պահեր յերկրաւորացս եւ ոչ ինչ, այլ սոսկ լեր յամենայն իրաց. եւ ա՛ռ զխաչն եւ երթ զհետ Տեառն քո, եւ վստահ լեր ի Քրիստոս որ զիւր ծառայն սովամահ ո՛չ առնէ, որպէս եւ ինքն ասէ, թէ Հայր ձեր զիտէ՛ զպիտոյն ձեր. խնդրեցէ՛ք զարքայութիւնն Աստուծոյ եւ այլն տացի ձեզ :

Զծաղր բնաւ ջնջեայ ի քէն, զի նայ է մայր պղծութեան. ընդ անաւրէնս մի՛ դեգերիր. զամբառ խաւսս մերժեալ ի քէն. զայն միայն խաւսեա որ օգուտ բերէ քեզ եւ ընկերին. զի վայրագար խաւսը՝ պոռնկութիւն է շրթանց, եւ նախագիրք մեղաց :

Երդումն բնաւ մի՛ հաներ ընդ բերան քո քան զայո եւ զօշն. զանաւրէնութեան խաւսս մի՛ լսեր. մերժեա՛ ի տեսութենէ եւ ի լսելոյ զչար. աւտարտոի բնութիւն մի՛ քններ. պարագ ճառից մի՛ ուշ դներ, զի ասէ մարգարէն. առեցի ես զժողովս չար(ե)աց, աչք իմ ի հաւատացեալս երկրի :

Մանգամարտաց հեռի լեր եւ մի՛ խաւսակցիր, եւ թէ պէտք ինչ լիցի քո ուղղակի վարուքն պատկառեցոյ զնոցա խակութիւն. անխռով եւ անվայր միտս կալ, հեզ, ցած, խոնարհ, երկայնամիտ. առ այն ցասիր ուր անարգի պատուիրանն Աստուծոյ, իբրեւ հեզն Մովսէս. զի ուր իմաս թէ անկարգութիւն է եւ կարծումն մեղաց լինի զայրանալն՝ զայն անհաշտ ցասիր :

մածուփ, ածինաճիւղ ապրումների բացա-
յայտման համար : Մատենանում իսպառ բա-
ցակայում են նկարագրութեան այնպիսի
բացայայտ ճոռումարանութեան արտայայ-
տութիւնները, ինչպէս, ասենք, «Ապարա-
նից կաշի պատմութեան» մէջ է նկատուում :
Այնտեղ, օրինակ՝ նարեկացին մի նկարա-
գրութեան ժամանակ նաւ ասելու փոխարէն
ասում է «անխարխալ յարկ» (անհիմն տուն)
կամ «անշունչ կառք», ծով ասելու փոխա-
րէն՝ «երկնագոյն դաշտ», արիւնք ասելու
փոխարէն՝ «լուծական լեռներ» և այլն. ու-
րակումներ՝ որոնք առանց յատուկ բացա-
տրութիւնների անհասկանալի են : Բայց,
օրինակ՝ այլ քննութիւն լուրի նկարագրու-
թիւնը նարեկում, որ արուած է այն խոհի
կապակցութեամբ, թէ, եթէ սոսկալի տան-
ջանքներ կարող են պատճառել մարդկանց
չնչին միջատներն անգամ, հապա ինչպիսի՞
տանջանքներ կարելի է սպասել դժոխքում :
Ահա՛ այդ միջատներից «չքոտի ճգճիւմ»
մարմնով լուրը, որոնք ոչ միայն ռամիկ-
ներին, այլև անգամ հզօր թագաւորներին
սենեակներից վռնողում են ապարանքների
վերնաշարկերը բացօթեայ բնակուելու :

Ասպատակ ալոց վայրենաց,
Ըս նմանութեան դիւաց գիշերամարտից
եւ մեկնադէն բարբարոս գնդից խաւարասի-
ւաց,
եւ զազանութեամբ փանսար գալոց արա-
բացւոց,
Կորակոր զնացիւմ, արջնարոյր գունովն,
Կրկնապարոյր կռածագ կացան,
Որ զօրէն ունի խայրոցաց կարնի,
Իբր դժնիկ փռով խոցոցեալ
Ծծեն ձգեն զարեանն խոնաւութիւն,
եւ յանկողինս մահնաց հանգսեանն
Վաստակս կրից ցուցանեն :
եւ կարկառեալ ուրու՛ ձեռն՝
Հասուցանել զհասուցումն նոցա նոցին,
Վաղվաղակի զգան զվնաս վստգին՝
Զոր ազգեն մարդոյն.
եւ անդէն իսկոյն լերկամարմին փոք հա-
սակաւն
Իբր բեւօք իմն քոյս արձակեն,
եւ ըս մարախի ձեւոյ ոսոսեալ
Այս անդր տարբերին ... :

(Բան ԵԹ. — Բ.)

(Շարունակելի՛ 11)

Մ. ՄԿՐԵԱՆ

Ի գինոյ ամէնեւին պատրաստ կաց, եւ որք զխնումն որովայնի սէր ասնն, այն չէ սէր, այլ խոր թշնամութիւն. այլ ճշմարիտ սէր այն է Քրիստոսին, անխակալ լինել, ձեռն տալ անկեալ եղբարն, եթէ մարմնով եւ թէ հոգով. մտադիւր սրտիւ եւ լուրջ երեսաւք ընդ առաջ զնալ հիւրոցն, ցրտացելոց ջեռուցանել, կերակրել. զմերկն զգեցուցանել, զհիւանդն դարմանել, զտկարամիտն մխիթարել աստուածային բանիւք զրոց. զստահակն խրատել, թշնամեաց եւ զրկողաց սրտի մտաւք աղաւթել եւ թողութիւն հայցել, զմայր առաքինութեան զհնազանդութիւն լիով կատարել:

Պնդեա ի պահս, յաղաւթս եւ ի տքնութիւնս. պար վասն խոնարհեցուցանելոյ զմարմինն են. եւ դու ի պահելն քո զոգեպահն միայն կեր. եւ մի՛ լուծանք զվիշտն զանազան կերակրովքն, այլ լոկ հաց եւ բանջար եւ աղ շատասցի բեզ. եւ մի՛ որպէս որովայնապարարքն լոկ զանուն պահոցն ունել:

Եւ ի սեղանն մի՛ բնաւ խաւսիր, այլ զհանդերձեալսն խոկա ի միտսդ, եւ յիշեալ զսուրբ հայրսն, որք վշտամբերութեամբ անցուցին զխաբեքայ կենցաղս. զթուականս եւ զաւուրս յիշեալ, զաւր մահուն եւ դատաստանին եւ զՔրիստոս հանապազ առաջի աչաց կալ. եւ սուրբ պահեալ զմիտս քո, զխորհուրդս եւ զբանս. վաստակեալ գիտութեամբ եւ հանկիցես իմաստութեամբ:

Արդ այսու գիտացիր զառողջութիւն եւ զհաստատութիւն առն վանականի, յորժամ զմի տեղի ունիցի եւ բնաւ ամենեւին ոչ անցուցէ ժամ մի դատարկ. այլ սաղմոսէ, աղաւթէ, կարդայ, զրէ, ուսանի, ուսուցանէ, կարէ, կարկատէ, արբանեկէ, եւ լինի իբրեւ զծառ հաստատուն ի միում վայրի, եւ տայ զպտուղ ի ժամու անթափ տեսնով:

Արդ երանեմ լեռնակեցացն հանապազորդաց, որք հրաժարեալ են յաշխարհէ, հեռացեալ ի ստացուածոց, արծակեալ ի կանանց, ազատեալ ի տանտիկնաց, զատեալ ի հարկաց, աւտարացեալ ի բանակաց, որոշեալ ի հոգոց, բեցեալ ի խորհրդոց, մաքրեալ ի չարին սերմանացանութենէն, սրբեալ ի մեղաց, եւ լեալ անստացուած, ունելով զմիտս ի սրբութիւն եւ ի խոնարհութեան, եւ թռուցեալ ի լերինս իբրեւ զաղաւնի, եւ զբոյնն եղեալ ի քարանձաւս, եւ զմայլեալ պարարին ըմպելով զականակիտ եւ զքաղցր ջրիկ աղբերականց, լինելով միակրաւնք անբիծք, անարատք, անբասիր, անպարսաւ, ապաստանեալք ի լերինս, զաւրացուցեալ զանծինս, պնդեալ զմէջս, սրբեալ զսիրտս, ուղղեալ զմիտս, միացուցեալ զխորհուրդս, արիացուցեալ զկամս, քաղցրացուցեալ զբարս եւ զբանս, անզբաղ, անզբաւս, միամտեալ պարապեն կրաւնաւորական վարուց, սաղմոսիւք եւ աւրհնութեամբ, եւ քրիստոսաբար սիրովն բերկրին ընդ միմեանս, ցանկացեալ երանութեան մարգարէին, թէ ո՞ տաց ինձ զթեւս աղաւնոյ զի թռուցեալ հանկիչյա, շնորհաւք Սուրբ Հոգւոյն, յաւիտեանս ամէն:

Վերոգրեալ Խրատը առնուած է Ս. Յ. Թ. 1187 ձեռագրէն, որ բոլորագիր ժողովածու մըն է, օրինակուած 1415էն քիչ առաջ: Գրուածքին վերնագիրն է «Սբ. Հաւրն Մաշտոցի Խրատ Ոգէշահ» (էջ 323): Ըստ Սաւաւանեանի, համանուն Կաթողիկոսն է: Գրութիւնը անսխալ ընդօրինակութեամբ մը չի ներկայանար հոս, ինչպէս կը տեսնուի ինքնին. այնուհանդերձ իբրեւ հնագոյն նշխար մը ունի իր շահեկանութիւնը:

Հրատ. Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

ՀԱՅԿԱՊԱՆ ՎԱՆՔԵՐ

ԽՈՐԻՆ ԱՆԱՊԱՏ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Խորին Անապատը, որ կոչւում է նաև Առակելի Անապատ, կը գտնուէր Կիլիկիոյ մէջ, Բարձրբերդի և Լևոնկլայի սահմաններուն մօտ, ոչ հեռու Փերճեր վանքէն: Եկեղեցին կառուցուած էր յանուն Սուրբ Աստուածածնի (Սիսուան, էջ 151: Տաշեան, Յուլյակ Ձեռ. Վիեննայի, էջ 771ր: Բնդհանրական, Կ. Պոլիս, 1825, էջ 229: Կիւլէսէրեան, Յուլյակ Ձեռ. Անկլիսիոյ, 1957, էջ 897):

ՊԱՏՄԱԿԱՆ. — Խորին Անապատը շինած է Կոստանդին Թագաւորահայր (+ 1265). — Սահուէլ Անեցի, էջ 151:

Խորին Անապատի առաջնորդներէն յիշուած են.

1. — Ասեփանոս, որ մենաստանին շինութեան համար շատ աշխատած է իր հարազատին՝ Կոստանդինի հետ. — Սարգիսեան, Յուլյակ Ձեռ. Վիեննայի, Բ., էջ 234:

2. — Բարսեղ. — Սարգ., Բ., էջ 234:

3. — Առաքել. — Սիսուան, էջ 152:

4. — Ներսէս Եպիսկոպոս, ստացողն է եղած Ճաղընտրի մը, գրուած Վասիլ և Աստուածատուր եղբայրներէ: Իր հետ իբրև գիտապետ կը յիշուի Պետրոս, իսկ փակակալն է Յովհաննէս Կրօնաւոր. — Սիսուան, էջ 151: Սարգ., Բ., էջ 234:

5. — Կոստանդին Պրօնագործ Կեսարացի, որ 1286ին բարձրացաւ Կաթողիկոսական աթոռ. — Օրբէլեան, Բ., էջ 184:

6. — Բարսեղ Վարդապետ, որ մասնակցած է Սիսի (1307) և Ատանայի (1316) ժողովներուն:

7. — Կոստանդ սպասաւոր Բանի (1319), որ Պաղտին Մարաջախտի — Նախապէս Սմբատ Գունդատապի — ձառնորդ կարգաւորած է, Ծննդեան և Աւետեաց տօները լատինականին համաձայն դասաւորելով. — Սիսուան, էջ 152: Tisserant, Cod. Armeni, էջ 93:

8. — Կիւսկոս Եպիսկոպոս, 1418. — Ռաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, էջ 211:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Սակաւ գործեր մնացած են Խորին Անապատէն, որ ահաւասիկ, ըստ գրչներու ժամանակագրական կարգին:

Ա. — Բասիլ կամ Վասիլ Գրիչ, շ. 1270-71. — Որդի Ներսէսի, եղբայր Աստուածատուրի, և աշակերտ իր հօրեղբոր Տիրացու Եպիսկոպոսին: Օրինակած է հակայագործ Ճաղընտր մը. — Սարգ., թիւ 212:

Բ. — Յովհաննէս Քահանայ, Գրիչ, եղբայր Ներսէս Քահանայի, և աշակերտ թորոս Քահանայի. 1295ին օրինակած է Հաւաքածոյ մը. — Տաշեան, թիւ 364:

Գ. — Թումաս Վանական Քահանայ = Արեղայ Հռոմկլայեցի, նշ. Գրիչ, որդի Յովհաննէսի, հոգևոր որդի Գէորգ Վարդապետի (Սկեռացի Գ), 1301-7. — Խորին Անապատի մէջ օրինակած է,

1. — Էակաց Գիրք, 1301ին, պատուական բոլորգրով. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1303, էջ 193-320, վերջաւորութիւն թերի թուղթ ինկած:

2. — Ընդհանրական Թուղթ = Նամականի, Ն. Շնորհալիի, 1302ին: Իբրև գաղափար ունեցած է Հռոմկլայեցի Գրիգոր Գրչի հաւաքածոն, զոր յիշեալը կազմած է Հեղինակին մահէն 67 տարի ետքը՝ 1240ին, ուղղակի բնագրէն ընդօրինակելով: — «Ես Գրիգորիոս, մեղապարտ գրիչ և յետին ծառայ Բրիտանի, գտի զսուրբ Թուղթս սուրբ Տեառն Ներսիսի գրեալ գրով սուրբ ձեռին իւրոյ, զկնի Կէ ամի վերափոխման իւրոյ յաստեացս, և ի հնացեալ և ի տեղւոյն տեղ հատեալ թղթոցն, մեծաւ աշխատութեամբ և քանիւ յերկրեցի և նորոգապէս ի մատենիս գրեցի, զի մի այնպիսոյ սրբոյն Աստուծոյ բան ի վայր անկեալ մոռացի և աղաւաղեալ կորիցէ. այլ որպէս զամբար լուսափայլ պայծառացեալ ծաղկեցի յեկեղեցիս Հայաստանեայց անջինջ յիշատակաւ» (Տաշեան, Յուլյակ, էջ 621ա: Յովսէփեան, Յիշտ. Ձեռ., էջ 943):

Թումաս Հռոմկլայեցի Շնորհալիի բոլոր թուղթերը հաւաքելով կազմած է մէկ ժողովածոյ: — «Եւ իմ վասն այսր յուսոյ՝ ըստ ըղձից փափագման ուզոյ իմոյ աշխատասիրեալ բազում տառապանաւք այսր և անգր յածմամբ յուզէի զբաղձալիս իմ: Վասնզի ոչ համագումար գտի որպէս տե-

սանէք ի միասին ժողովեալ, այլ որպէս միոյ մարմնոյ մասունս ի բազումս յաւելեալ՝ առ ոմն ձեռք և առ ոմն ոտք անջատեալք ի միմեանց, երկաւրեայ և եռաւրեայ և ևս աւելի ճանապարհաւք: Իսկ իմ ի բաց եղեալ զտկարութիւն մարմնոյս՝ զբոլորն լըրմամբ ստացայ, և ձեռն ի զործ արկեալ մեղսաներկ մատամբ իմով ձարոտեալ զբեցի զսրբոյ և զտիեզերալոյս զիտապետին Հայոց և զերկրորդ լուսաւորչին զՏէր Ներսիսի զգեղեցկարան վարդապետութիւնն որ առ ընդհանուր հայկազունսն, և զթուղթսն որ առ թագաւորն յունաց Մանուիլ վասն միաբանութեան, զխնդիրսն և զընդդէմ պատասխանիսն, և զայլսն բազումսն՝ որ յազագս պէսպէս և զանազան իրաց օտացեալ է բազմալի ուսումնասիրաց անձանց. ժողովեալ զբազումսն ի մի հաւաքմամբ զնել միմեանց առնթիւր՝ իբր զծաղիկս ի պսակ բոլորեալ, զի լիցի պատճառս հոգեւոր զբաւսանաց ամենախակ և անկատար մանկութեան իմոյ, և ի սփոփանս սգապատ ողւոյս» (Ընդհանրական, Կ. Պոլիս, 1825, էջ 229):

Ըստ այսմ Ն. Շնորհալիի երեք զիրքերէ բաղկացած Նամականին կազմուած է այսպէս: Առաջին Գիրքը, որ Ընդհանրական Կոնդակն է, ինքնին առանձին միաւոր մըն է, կազմուած Հեղինակին իսկ ձեռքով: Երկրորդ Գիրքը կը բովանդակէ Հայ և Յոյն Միութենական ձեռնարկին վերաբերող թուղթերը, զորս ի մի բերած է Ն. Լամբրոնացի, կցելով պատմական ընդարձակ ծանօթագրութիւններ: Երրորդ Գիրքը ձեւացած է զանազաններու ուղղուած մօտ քսան թուղթերու համագրութեամբ: Այս վերջին ժողովածոն կազմած է Գրիգոր Հռոմկլայեցի 1240 թուին: Այս երեք անջատ զիրքերը մէկ հատորի մէջ միացուցած է Թումաս Արդ. Հռոմկլայեցի, 1302ին, որուն համաձայն կատարուած է Շնորհալիի Նամականիին պոլսական տպագրութիւնը 1825ին: Այդ տպագրութիւնը հիմ առնուած է Երուսաղէմի 1871ի հրատարակութեան համար:

3. — Շարական, 1302ին. — Օրմանեան, Ազգապատում, էջ 3433:

4. — Թղթոց Գիրք. Հմմտ. էջ 219 և 525, յիշատակարան: — Առաջին մասին համար

իրբ զաղափար ունեցած է Գր. Վկայասէրի օրինակը, ինչպէս կը հասկցուի իր ընդօրինակած յիշատակարանէն. — Աւրինակ զրոցս՝ որ լեալ էր Տէր Գրիգորիսի Վկայասիրին՝ մինչև ցայս վայր էր. և նա այսպէս էր գրեալ. «ԶՎահրամ որդի Գրիգորոյ Մագիստրոսի յիշեալիք յազաւթս ձեր, ո՞վ երջանիկ դասք ուղղափառաց խմբիցդ Ազգանագեան սեռի: Շիէ թուական» [= 1078]:

Դ. — Տիրացու Կրօնաւոր Գրիգ, 1305ին օրինակած է Հաւաքածոյ մը, զոր կազմած է Ովանէս Քահանայ. — Տաշեան, Յուցակ, Թիւ 324:

Ե. — Յովհաննէս Քահանայ, Կազմող, 1305, կազմած է Տիրացու Կրօնաւորի ընդօրինակած Հաւաքածոն. — Նոյն, անդ:

Զ. — Կոստանդին Քահանայ Հեթմոցի, Գրիգ, 1311-25. օրինակած է,

1. — Աւետարան, 1311ին, սուրբ և ընտրեալ Կրօնաւոր Պետրոս Քահանայի խնդրանքով. — Թորոս Աղբար, Բ., էջ 433:

2. — Շարական, 1325ին, ձերուցի Կրօնաւոր Թուխանի խնդրանքով, ի վայելումն իր քեռորդին Պօղոսի. — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 199:

Է. — Տօնական Քահանայ, Գրիգ, 1415-8. օրինակած է,

1. — Ժողովածու, 1415ին, կամ քիչ առաջ, ձերուցի Մարտիրոսի համար: Կը պարունակէ ի միջի այլոց վարդան Այգեկցիի կարգ մը գրութիւնները. — Չեռ. Ս. Յ. Թ. 1187:

2. — Առակ վարդանայ, և այլն, 1418ին, Սիմէոն Կրօնաւորի խնդրանքով. — Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, էջ 211:

3. — Աղօթագիրք վարդանայ Մարաբացոյ եւ Խրաթ. — Տաշեան, Յուցակ, Թ. 144: Ենթադրական թուականը փոխանակ ԺԷ. — ԺԸ. դարի, պէտք է ըլլայ ԺԴ. — ԺԵ. դար, ինչպէս կը հետեւի Գրիգին յիշատակագրութիւններուն նոյնակերպ ոճէն և բացատրութիւններէն:

Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ



ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՈՒԵՍՏ

ԾԱՂԻԿՆԵՐԸ ԵՒ ՎԱՐՍԱՆԴԱ-ՊՏՂԱՅԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ ԶԱՐԴԱՐՈՒԵՍՏՈՒՄ

Հայ ժողովրդի զարգարուեստի մէջ ևս, ինչպէս ուրիշ ժողովուրդների զարգարուեստներում, բուսական մօտիվները գրաւում են ամենազխաւոր տեղը: Դրա պատճառն այն հսկայական դերն է, որ խաղացել է բուսական աշխարհը մարդկութեան կեանքում:

Սննդի, ապաստարանի, հագուստի, գործիքի, ջերմութեան, կահ-կարասիքի, բուժանիւթի և այլ կարիքների հագալու այդ բնական ու անսպառ շտեմարանը միշտ էլ գտնուել է մարդկանց ուշադրութեան կենտրոնում և նրանց զարգացման ճանապարհին գնալով է՛լ աւելի մեծ ուշադրութեան առարկայ է դարձել:

Այս ուղղակի առնչութիւնից բացի, մարդկանց կողմից աստիճանաբար զիտակցուել է նաև բուսական աշխարհի այն վիթխարի դերը, որ նա ունեցել է ընդհանրապէս կենդանական աշխարհի գոյութեան և զարգացման գործում, որը նոյնպէս, իր տնտեսական մեծ նշանակութեամբ, գտնուել է մարդկութեան մտածողութեան կենտրոնում:

Բուսական, ինչպէս և կենդանական աշխարհի մարդկային կեանքում ունեցած դերի առաւել խոր զիտակցումն առաջացել է յատկապէս երկրագործութեան և անասնապահութեան զարգացման հետեանքով, որն սկսուել է դեռևս նեոլիթի դարաշրջանում: Այնուհետև աւելի են զարգանում արտադրութեան գործիքները, առաջացնելով խոշորագոյն փոփոխութիւններ մարդկանց կեանքում:

Նիւթական բարիքների արտադրութեան զարգացումը երկրագործութեան քնազաւառում՝ մարդկանց ոչ միայն առաւել սերտօրէն էր կապում բուսական աշխարհի հետ,

այլև հարստացնում էր նրանց գիտելիքներն աշխարհի կենսականօրէն անհրաժեշտ երևույթների վերաբերեալ: Եւ ահա, հէնց այդ ամէնի հիման վրայ է, որ դարերի ընթացքում մշակուում են զարգարուեստի բուսական մօտիվները:

Զարգարուեստի բուսական մօտիվների ամենազխաւոր արտայայտութիւնը կենաց ծառն է: Մասնագէտները բաւականին շատ են խօսել այդ ծառի մասին, բայց, ինչպէս կ'երևայ ներկայ աշխատութեան ընթացքից, մինչև օրս կենաց ծառի մօտիվն էլ ըստ ամենայնի բացայայտուած չի եղել:

Կենաց ծառը զարգարուեստում երևան է գալիս ամենաբազմազան ձևերով. յատկանշականը, սակայն, այդ ծառերի համար խիստ ոճաւորուած և ընդհանրացուած մօտիվներն են, ուր պահպանուած են լինում բոյսի ամենազխաւոր օրգանները: Դրանցից յատկապէս ընդգծուած են լինում հատիկի (սերմի), ծաղկի և վարսանդա-պտղային օրգանների զաղափարապատկերները: Եւ դա ինքնին հասկանալի է, որովհետեւ երկրագործ ժողովուրդներին, ամենից առաջ, հետաքրքրել են կեանքի համար այնքան վիթխարի նշանակութիւն ունեցող բոյսի այդ մասերը:

Ինչպէս նշուեց, թէ՛ հատիկի և թէ՛ վարսանդա-պտղային օրգանների զաղափարապատկերների առկայութիւնը զարգարուեստում դեռևս բացայայտուած չի եղել. իսկ ծաղիկներն էլ ամէն յարմար առիթով համարուել են արեւի սիմվոլներ: Պարզ է, որ այսպիսի պայմաններում յաճախ էր կարող բոլորովին նկատուել կենաց ծառի մօտիվը և ընդհանրապէս մեկնաբանուել նրա բուն իմաստը:

Նախապէս նշենք, որ զարգարուես-

տում կենաց ծառ արտայայտությունն անպայման չի նշանակում, թէ գործ ունենք ծառի հետ, այլ՝ քնդհանրապես բոլոր:

Որպէս լրիւ գաղափար կազմուի կենաց ծառի մասին, անհրաժեշտ է նախ հանգամանօրէն ծանօթանալ նրա օրգաններից իւրաքանչիւրի հետ:


Սկսենք ծաղիկներից:

Երկրագործական աշխարհական նրատակեաց կեանքի փորձը մարդկանց նկատել կտար, որ բոլորի ծաղիկներն են այն օրգանները, որոնցից ստացւում է պտուղը-

Մաղիկներից անբաժան են եղել նաև բողբոջների և վարսանդա-պողային օրգանների գաղափարները, որոնք նոյնպէս հրակայական տեղ են գրաւում զարդարուհի տում:

Չնայած այդ բոլորն էլ իրենց մէջ ամփոփել են նոյն-պսղաքեւութեան գաղափարը, բայց այստեղ մենք դրանք կը դիտենք առանձին-առանձին:

Հայկական զարդարուհիների մէջ ծաղկային մոտիվները երևան են գալիս ոչ միայն հսկայական քանակով, այլև բազմա-




բերքը և ապագայ սերմացուն: Պարզ է, որ մարդիկ, այդ օրգանների մէջ տեսնելով իրենց գոյութիւնն ապահովող գլխաւոր արիւններից մէկը, պիտի նրանց արժանացնէին մեծ ուշադրութեան: Այս գործին պիտի նպաստէին նաև ուրիշ հանգամանքներ, որոնք կապուած էին դարձեալ հասարակական կեանքի, նիւթական բարիքների արտադրութեան և մարդկանց զարգացող գիտակցութեան հետ: Որ այդ այդպէս էլ եղել է, ապացուցւում է նաև զարդարուհիներում այնքան մեծ տեղ գրաւած ծաղկային մոտիվների միջոցով:

զան ձևերով: Նրանք էլ հանդիպում են, հիմնականում, որոշ սճաւորմամբ, որը և գրկում է նրանց բնական ծաղիկներին բնորոշ մանրամասնութիւններից և յաճախ էլ առիթ է տալիս շփոթութիւնների: Ուստի, ծաղկային մոտիվներն ուսումնասիրելիս, նախապէս պիտի ծանօթանալ առաւել բնական տեսք ունեցող օրինակների հետ:

Այս առումով ուշագրաւ նմուշ կարող է հանդիսանալ № 7729 ձեռագրի 331 Բ թիւի զարդը: Այդտեղ, չնայած մասնակի սճաւորման առկայութեանը, պարզ կերպով նկատուում է նաև հայկական բնաշխարհը

զարգարող մանուշակի մի փունջ, որն այն-
քան զոդարիկ կերպով զովերգուած է մեր
ժողովրդական հին երգերում: Օրինակ,
հնագոյն պատկերացումների հետ կապուած
հարսանեկան մի երգում դաշտային կանաչ
բուսականութիւնը համեմատուած է փունջ
մանուշակի հետ, որտեղ այն ունի ծխական
նշանակութիւն և յատուկ իմաստ:

Երբ մուսն լընկներ հոն պառկեյանք,
Փունն մանուշակ, հա՛յ, խոսն արձեյանք,
Փունն մանուշակ, խոսն արձեյանք,
Դեմ լուսինին, հա՛յ, որոնեյանք(*):



Նկ. 18



Նկ. 19



Նկ. 20

«Ջան գիւլում»-ի երգերում, աղջիկնե-
րին ու հարսներին զովելու ժամանակ,
նրանց համեմատուած են փունջ մանուշակի
հետ՝ դարձեալ գաղափարական առումով:

Փունջ մանիշակ հարսները,
Խոս-խոս եղան աղջիկներ:

Կամ՝

Չինի-չինի հարսներ,
Փունջ մանուշակ աղջիկներ...(**)

(*) Մատենադարանի Գիտական Նիւթերի Ժո-
ղովածու, № 2, Երևան, 1950, էջ 203:

(**) Մ. Արեղեան, Ժողովրդական Խաղիկներ,
Երևան, 1940, էջ 268:

Այս բոլոր դէպքերում էլ փունջ մա-
նուշակի մոտիվը հանդէս է գալիս կապուած
որոշ հասկացողութիւնների հետ: Նոյնը
պիտի ասել նաև զարգարուեստում հանդի-
պող համապատասխան մոտիվների մասին:

№ 6527 ձեռագրի 207ա թերթում հան-
դիպում ենք խիստ ոճաւորուած մի կենաց
ծառի (նկ. 6), որի վրայ գտնուող ծաղիկ-
ները նոյնպէս կրում են ոճաւորման շատ
թույլ նշաններ: Իրանք նման են սովորական
ծաղիկների, որտեղ չնայած երևում է
ծաղկի ներսը, բայց ցոյց չեն տրուած ա-

ռէջներն ու վարսանդը: Պիտի նկատել սա-
կայն, որ զարգարուեստի համար բնորոշը
ոչ թէ այս պարզ, այլ բարդ, ոճաւորուած
ծաղիկներն են: Այդպիսի ընդգծուած կեր-
պով ոճաւորման ենթարկուած առանձին
ծաղիկների մոտիվներից ուշադրութեան
արժանի է, օրինակ, № 4186 ձեռագրի 128բ
թերթում գտնուող ծաղիկը (նկ. 7): Չնա-
յած բնութեան մէջ նման ծաղիկ չի կարող
հանդիպել, բայց այս զարդը միշտ էլ կը
դիտուի որպէս ծաղիկ: Բնորոշն այն է, որ
այդ մոտիվը, զարգարուեստում հեռանալով
կոնկրետ բնականից, աշխատել է ընդհան-
րապէս տալ ծաղկի պատկերը, խօսել ընդ-
հանրացումների եղանակով:

Ընդհանրացում—ծաղկի օրինակներին է նաև № 2929 ձեռագրի 228ա թերթում գտնուող զարդը, որտեղ խրաքանչիւր ծաղկաթերթիկ իր վրայ կրում է նաև տերևի գաղափարանշանը, ընդգրկելով վեգետացիոն աւելի մեծ շրջան և ցոյց տալով աւելի բարդ հասկացութիւն (նկ. 8): Այս տեսակէտից առ սնանապէս ուշագրաւ են այն ծաղկազարդերը, որոնք միաժամանակ ցոյց են տալիս նաև բողբոջների, ճիւղերի, պտուղների, հատիկների և բուսական այլ օրգանների գաղափարաձևերը: № 356 ձեռագրի 23բ թերթում նկարուած է մի ծաղիկ, որից գէպի վերև և ներքև ձգուած են մէկական բողբոջներ (նկ. 9): Դրանք արդէն ցոյց են տալիս, որ այդ ծաղկի միջոցով մարդիկ ընդգրկել են նաև այդ ծաղկից սպասուող պտղի, սերմի և ապա վերջիններիցս ստացուելիք ծլման և պտղաբերութեան գաղափարները: Այս միաքն աւելի ցատուէն արտայայտութիւն է գտել ուրիշ մօտիվների միջոցով: Այսպէս, օրինակ, № 2848 ձեռագրի 118ա թերթում պատկերուած է ոճաւորուած մի ծաղիկ, որի խրաքանչիւր ծաղկաթերթիկն արտայայտում է նաև տերևի խմաստը (նկ. 11): Ըստ որում, նրանք իրենց զասաւորուածութեամբ ընդունել են այնպիսի դիմամիկ, շարժուն գիրք, որ կարծես պատուած են իրենց կենտրոնի շուրջը՝ յաջորդելով մէկը միւսին: Այսպիսով, այդ ծաղիկը գրուած է վեգետացիոն զարգացման ընթացքի մէջ. նա քարացած է. կտրուած է աճման և պտղաբերութեան գաղափարից: Դա առաւել ընդգծուած կերպով երևում է յատկապէս այն երկու ճիւղերից, որոնք ձգուել են այդ ծաղկից վերև ու ներքև և աւարտուած են վարսանդա-պտղային սիմվոլներով:

Վերևում քննուած համարեա բոլոր ծաղկազարդերի համար կայ մի ուրիշ բնորոշ գիծ ևս. դա նրանց մէջ նաև հատիկի գաղափարի ընդգծումն է՝ նրանց կենտրոնում գտնուող շրջագծի շնորհիւ: Այս հանգամանքն էլ հաշուի առնելով, տեսնում ենք, ինչպէս խրաքանչիւր նման նկար ցոյց է տալիս ոչ թէ սովորական ծաղկի պատկեր՝ ինքնանպատակ կերպով, այլ գաղափարական մի ամբողջ բարդ հասկացո-

ղութիւն, բուսական վեգետացիոն մի լրիւ շրջան՝ հատիկից մինչև պտուղ:

Ծաղիկները զարդարուեստում երևան են գալիս նաև ուրիշ ձևերով. գրանցից են, օրինակ, շրջագծի մէջ առնուած ծաղիկները: № 2948 ձեռագրի 35ա թերթում նկարուած է մի ոճաւորուած բոյս, որն աւարտում է շրջագծի մէջ առնուած երեք ծաղիկներով (նկ. 17): Նոյն ձեռագրի 71ա թերթում նման ծաղիկները գետեղուած են ոճաւորուած բոյսի տերևների արանքներում՝ խաչաձև սիմետրիայով (նկ. 18):

Ահա ոճաւորման այս եղանակի զարգացմամբ ստացուած են նման ծաղիկների այնպիսի խոշոր և իրենց մասերի բնական յարաբերութիւնները կորցրած զարդեր, որոնք մասնապէսների կողմից չեն ընկալուած որպէս զարդածաղիկներ: Նոյն ձեռագրի 9բ թերթում (նկ. 19) պատկերուած է մի այդպիսի ծաղիկ, որի հիմքում գրանդուղ մայր-բոյսը, իր ընդգծուած ոճաւորութեան և անհամեմատ փոքրութեան պատճառով, վեր է ածուել պատուանդանանման յարմարանքի: Ըստ էութեան այստեղ գործ ունենք մի կենաց ծառի հետ, որը ծաղկել է. Յաճախ էլ այդ մօտիվը ցոյց է արւում ոչ թէ լրիւ, այլ կէս ծաղկով, ինչպէս, օրինակ, նոյն ձեռագրի 169ա թերթում (նկ. 20) և յատկապէս մի շարք խորաններում ու կիսախորաններում:

Առաւել ուշագրաւ է զոյգ ծաղկի մօտիվը: Դրանք այն ծաղկազարդերն են, որոնք հանդէս են գալիս սիմետրիկ զոյգերով: Զեռագրերում զոյգ ծաղիկները երևան են գալիս յատկապէս խորաններում և կիսախորաններում: Այդ երկու ծաղիկներն արտայայտում են ընդհանրապէս ծնող-զոյգի խմաստը, որոնց միասնութիւնից էլ սերւում է նրանց կենտրոնում բարձրացած պտղաբերութեան վարսանդա-պտղային սիմվոլը:

Ա. Շ. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ

(Շարունակելի՝ 4)



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

“ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՀԻՆ ԵՒ ՄԻՋՆԱԳՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ”
(V - XV դդ.)

Գ. ԶԱՆՈՒԿԵԱՆ, — Երևան — 1954, էջ 395

Բ. — Առաջին մաս. — Առաջին գլուխ. — Նկատի կ'առնուին յաջորդաբար Դիոնիսիոս Թրակացիի «Քերական Արուեստ» երկի թարգմանության պարագաները և անոր հայերէն մեկնութիւնները 5-10րդ դարերուն, Յունարան դպրոցը և Դիոնիսիոս Թրակացիի քերականութեան թարգմանութեան թուականը, թարգմանիչի անձնաւորութիւնը, թարգմանիչի կողմէն բնագրին մէջ կատարուած փոփոխութիւնները, հայերէնի ուսումնասիրութեան առաջին քայլերը և անոնց մէջ երևան եկող թերութիւնները, թարգմանութեան յունարանութիւնները և հետեւողական ընդօրինակութիւնները, թարգմանութեան եզրաբանութիւնը՝ որ հիմը կը կազմէ մինչև խոյ մեր արդի քերականական լեզուին:

Գ. — Երկրորդ գլուխ. — Կը վերլուծուին հայ քերականներու երկերը: — 1) Դաւիթ. — «Քերականական Արուեստ» մասին իր հիմնական տեսակէտները, իր հայեացքը մարդկային ձայնի և «տառի» մասին, ստուգաբանական փորձերը, խօսքի մասերու բաժանումը: — 2) Անանուն Մեկնիչ. — Տառի, վանկի, բառի և բանի ատիճանաւորումը, «անուն» ըմբռնումը Անանունի մօտ, տեղեկութիւնները բարբառներու մասին, ձևաբանական դիտողութիւնները: — 3) Մովսէս Քերթող. — Քերականական տեղեկութիւնները, ձևաբանական-բառակազմական դիտողութիւնները: — 4) Ստեփանոս Սիւնեցի. — Կեանքը և քերականական երկերը, քերականութիւնը և իր առարկան, քերականութեան «մասերու» բաժանումը, վերձանութեան մասին, դիտողութիւններ «տառի» մասին, բառի և

«բանի» մասին, ձևաբանական-բառակազմական և այլ կարգի դիտողութիւններ: — 5) Համամ Արեւելցի. — Համամի «Վերլուծութիւն Քերականին» երկը:

1) Դաւիթ. — Դաւիթ կը հակի դէպի բանապաշտութիւնը՝ քերականութեան դերի իր սահմանման մէջ: Կը հակադրէ տառը և գիրը: Դաւիթ ստուգաբանական երեք ձևեր կը նշէ. «Ստուգաբանութեան ձևք են երեք, յիւրէն, յարուեստէն, ի ձայնէն. և յարացոյց առաջնումն սափոր, և երկրորդին փայսնաւ, և երրորդին ճննդուկ»: Առաջին պարագային, Դաւիթ կ'ակնարկէ առարկայի ձևին. — օր. սափոր 2 մասերու կը բաժնէ, իրեն թէ սա և փոր բառերէն կազմուած ըլլայ (այսինքն փոր ունեցող աման, փորի նմանութիւն ունեցող աման): Երկրորդ պարագային, նկատի ունի արհեստաւորին յարաբերութիւնը գործողութեան առարկայի հետ. — փայսնաւը այն անձնաւորութիւնն է որ փայտ կը կտրէ: Երրորդ պարագային, անունը իր հնչիւնով կը յիշեցնէ առարկան: «ճննդուկ»ը նմանութիւն ունի ճննդուկի ծլվլալուն, ձաճալուն հետ: Այս կամայական ստուգաբանութիւններէն վերջ, Դաւիթ կ'ակնարկէ թէ ստուգաբանութիւնը վերապահուած է միայն խոհմաներուն. «Եւ այց օչ ամենեցուն է գիտտ այս, այլ խոհմագունիցն և եթ»: Դաւիթին, ինչպէս նաև հիներուն ստուգաբանական վերլուծումներուն զլխաւոր թերութիւնը կը կայանայ օտար լեզուական տուեալները չօգտագործելուն մէջ: Կը բաւարարուին միայն հայերէնով, ինչ որ զիրենք կը մղէ երևակայածին ենթադրութիւններու:

2) Անանուն Մեկնիչ. — Զայնաւորներու և բաղաձայններու միջև «միջակք» կը նկատէ ն, յ և վ տառերը: Երեք տեսակ վանկեր կը զատորոշէ. — 1) «Վանգ»՝ որ կը ներկայացնէ ձայնաւորը՝ որ կը զուգորդուի իրմէ առաջ կամ վերջը դրուած բաղաձայնով մը: — 2) «Փաղառութիւն» կամ «հէգ»՝ որ կը ներկայացնէ ձայնաւորի մը կամ երկբարբառի մը չըջափակումը բաղաձայններով: — 3) «Պիտակապէս» վանկ՝ որ կը բաղկանայ միայն մէկ ձայնաւորէ: Անանուն լծորդութիւնը կիրարկելի կը նկատէ որքան տաղաչափութեան, նոյնքան բարբառներու մէջ, նկատի ունենալով հըն-

չարանական տարբերություններու գոյութիւնը գանազան բարբառներու միջև. «Էծորդութիւն դատեալ եղև ի տաղաչափական կշռոց ուսումնաւարժից ոմանց, որք ի մակացութեան զեղբարանս կացին հանապազ, զի գտահմանափութիւն բանի լծորդովն շինէին տեղի: Այլ էր իսկ ճշմարտապէս և ի տեսակի խաւսիցն, որպէս բազուկ, անգուկ, փազուկ»: Իրաւամբ, Անանուն երկակի թիւը միայն յունարէնի առանձնայատկութիւնը կը նկատէ. «Եւ պարտ է գիտել, եթէ երկուորականն ըստ լեզուոյ ոչ է, այլ հարստութեան ակնհայտոցն և նոցին քերթողաց»:

3) Մովսէս Քերթոզ. — Քերականութիւնը իր մօտ բանապաշտական ուղղութիւն ունի: Քերականը պէտք է առաջնորդուի «դատողական հրամաններով»: «Քերթողութիւնը» իր մօտ հոմանիշ կը դառնայ քերականութեան: Մովսէս յստակօրէն չի գանազանք քերականութիւնը իմաստասիրութենէն: Քանի որ խօսքի մասերը օգտնողները իմաստասէրները եղած են, ուրեմն Մովսէս կը հետեւնէ թէ իմաստասէրները նաև առաջին քերականներն են, իսկ քերականները իրենց կարգին պէտք է որ իմաստասէրներ ըլլան. «Եւ քերթաւք են իմաստասէրքն առաջինք, որ գրանին գտին զմասունս, քանզի քերթողութիւն է ճանաչել զգէմս խաւսիցն, որ ինքն տեղեակ է լեզուին, զոր քերեալ սրբէ և բերէ ի ցանկութիւն խողացն»: Կը գատորոշէ գիրը և տառը, գիրը նկատելով որպէս տառի մարմնացումը: Անունը կը գերադասէ բայէն, որովհետև անունը էութեան արտայայտիչն է, իսկ բայը՝ ներգործութեան. «Այլ յառաջադասութիւնս սորա քան գրայ, զի սա գէութեան նշանակութիւն ունի, իսկ բայ գներգործութեան»:

4) Ստեփանոս Սիւնեցի. — Քերականութիւնը սերտօրէն կը կապուի գրականութեան հետ: Քերականութիւնը չի նպատակադրեր միայն ուղղագրութիւն և ուղիղ խօսելու արուեստը սորվեցնել, այլ նախապայման մըն է նաև գրական ստեղծագործական աշխատանքի. «... Եւ ինքեանք ըստ հրամայեալ յեղանակս սորա արասցեն ստեղծումն բանի պիտեթիկոսարա»: Լեզուն երբեք իմացումը չափազանց օգտակար կը

գտնէ ստուգաբանութեան համար: «Արդ լեզուս ասէ, որ շուրջ զքե սահմանակիցք աշխարհք իցեն, զիտութիւն լեզուաց նոցա, վասն զի կարի աւգտակարք են այսք առ ստուգաբանութիւն». նոյնպէս, անհրաժեշտ կը գտնէ մայրենի լեզուի բարբառներու ծանօթացումը, և շահեկան տեղեկութիւններ կու տայ հայ բարբառներու շուրջ: «Եւ գարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբոսն զեղբարականս, որպէս զԳործայն և զՏայեցին և զՔութայինն և զՉորրորդ Հայեցին և զԱնպերացին և զՍիւնին և զԱրցախայինն»: Բարբառները երկու խումբի կը բաժնէ. — 1) Ոստանիկ, միջերկրեայ, որոնք գրաբարի հիմ ծառայած են, հետեւաբար մշակուած մատենագիրներու կողմէ: 2) Եզերական, որոնք Սիւնեցին եօթը խումբերու կը բաժնէ, և որոնց տիրացումը ստիպողական կը գտնէ: Տեղեկութիւններ կու տայ նաև Հայոց մէջ գործածական եղող գրական սեռերու շուրջ: — Կատակերգութիւնը սիրելի եղած է հայ աւստիկ գասին, ուր ծագուած են ծոյլերը, ընչասէրները և ուրիշներ, ողբերգութիւնը նոյնացուած է մեղեդիներու վրայ կատարուած սուգին ու լացին, իսկ գուսանական տաղերը շատ յարգուած ու փնտռուած են եղեր: Յոյներու օրինակին վրայ, Հայերը առողանութեան չորս նշաններ կը գատորոշէին. ոլորակ, ամանակ, հագագ և կիրք: «Տառ» ըսելով կը հասկնայ մեր արդի «հնչում»ը: 5) Համամ Արեւելցի. — Գրած է «Վերլուծութիւն Քերականին» երկը: Չունի հնութեան իմաստասիրութեան և գիտութեան պաշարը: Իր ստուգաբանութիւնները կամայական են: Նորութիւն մը չի բերեր հայերէնի քերականութեան տեսական հարցերու կազմաւորման մէջ: Դիտողութիւնները մեծաւ մասամբ հիներու ձախող կրկնութիւններն են:

Կ. — Երկրորդ մաս. — Նկատի կ'առնուին «Քերականական արուեստի» յետագայ զարգացումը և «Փրշութեան արուեստի» հետ առնչուած ուղղագրական-կէտադրական աշխատութիւններու երևան գալը 11-15րդ դարերուն. — Հին քերականական երկերու արժարժումը և միաւորումը, ստուգաբանութիւնը գիտական հիմերու վրայ գնելու առաջին փորձերը, «Քերականական

արուեստի ու նկատմամբ հետաքրքրությունն աճման պարագաները:

6) Գրիգոր Մագիստրոս. — Պայքարած է Թոնդրակեցիներու դէմ: Զրազած է նաև խմտատարութեամբ, բժշկութեամբ և ուսողութեամբ: Իր «Մեկնութիւն Քերականին» երկը գրած է իր որդի Վահրամի խնդրանքին վրայ, որ շտապային դարձաւ Գրիգոր Վկայաւէր Կաթողիկոս: Մագիստրոս կը նշանացնէ քերականութիւնը գրականութեան հետ: Քերականը պէտք է տիրանայ գրական բոլոր ստեղծագործութիւններուն, թափանցէ անոնց խմտաւոր բոլոր նրբութիւններուն, և կարողանայ սխառութեամբ մաքրել գրան և գրայ և զգիր մաքուր և վճիտ առաստիճեամբ: Մագիստրոս կը Զանայ ստուգարանութիւնը գիտական հիմունքներու վրայ դնել: Մագիստրոս կը զգուշացնէ ուրիշ լեզուներէ փոխառուած բառերը սեփական լեզուի տուեալներով ստուգարանելը, ինչպէս կը կատարէին իր նախորդները: Այդ բառերը հայերէնի «գիւտը» չեն, անոնք առնուած են շրջակայ լեզուներէն, ուրիշներէն ստուգարանուի միայն փոխառու լեզուի օրինաւորութիւններով: «... որպէս փակելիս, որ է յունարէն, քանզի ոչ զոյր մեր և ոչ էր սովորութիւն. և սուրբ, որ է սպիրքուռ, և կալամար, որ է կալամատ, այսինքն աման գրչի»:

7) Արիստակէս. — Գրած է «Վերլուծութիւն բացերեալէս բազմազան բայից և բառից յոգնախումբ շարագրութեամբ արարեալ զսա Արիստակիսի գրչի ի խնդրոյ բազմաց յարհեստ գրչութեան»: Համեմատաբար խօսելով սեփական ուժերու տկարութեան մասին, իր աշխատութիւնը թարգմանիչներու վայել գործ մը կը նկատէ: «... զի գործս այս սրբոց թարգմանչացն էր անգաւոր, ընտրելագոյն վարժապետացն և ոչ խմուս անմաքրութեան և անկարգութեան անձին»: Նոյնիսկ այն խորունկ համոզումը ունի, թէ իր գործը ծագողիները պիտի զգան իրենց սխալը, երբ Զանան զայն ուսումնասիրել. «են բազումք, որ ծագր արասցեն զիրս այս, զոր ի սմա հաւաքեալ կան, որպէս է և մեր ազգիս հպարտութիւն և բրտավզութիւն, բայց եթէ զոյր հնար, որ խմարհէր այն այր յայնց բարուց

խմովս աղօտանալք և սակաւ մի աշխատէր ի սմա նա իմանայր, թէ զինչ է սա և կամ զորպիսի հմտականութեամբ շահ աւգտի ունի և յամենայն աստուածային գիրս կարի պիտանի որ եթէ յանդգնութիւն է ասելս, յորժամ աւգտի ի սմանէ և վարժի սովաւ, նա ինքն առ ինքեան զինքն ըմբերանէ, քանզի զինչ կարեոր պէտք էին թարգմանչացն սրբոց թողուլ զԲիւզանդիոն և ընթանալ յԱթէնս, թէ ոչ վասն հետոր այսր քերական գծից»: Արիստակէս գրիչներու անհմտութիւնը կը նկատէ մանաւանդ յիփոփոխական ուղղագրութեան մէջ, ուստի կ'առաջարկէ 10 կանոններ յիփոփոխական ուղղագրութեան համար: Իր երկի վերջաւորութեան, գրած է նաև ուղղագրական բառարան մը, իր բնոյթով առաջինը հայ իրականութեան մէջ: Կը լրացնէ ուղղագրական բառարանի մը բոլոր պահանջները:

8) Դէորգ Ակնոսցի. — Կու տայ տողագարծի կանոններ, որոնք մասնակի փոփոխութիւններով կը շարունակուին մինչև մեր օրերը: Տառը և զիրը կը նշանացնէ: Վանկը կը կոչէ նաև «հէգ» կամ «փաղառութիւն»: Վանկին էական տարրը ձայնաւորն է, որուն կրնան ընկերանալ մէկ քանի բաղաձայն. մէկ ձայնաւորով վանկը «պիտակ» է, որ հազուադէպ է, մինչդեռ բաղաձայնի մը կամ բաղաձայններու հետ շարագատուած ձայնաւորը «տիրապէս» վանկ է, կամ խեղական վանկ:

9) Վարդան Արեւելցի. — Հեղինակն է «Յաղագս Մեկնութեան Քերականին» և «Վասն Բանին Մասանց» երկերուն: Ունի շահեկան տեղեկութիւններ բարբառներու մասին: «Զեչն և զայրն գասէ ի միում հէգի և զկորճէիցն յայանէ մեզ զթանձր և զբառարկիոն բառն, զի նոցայցն է այս բառս գեամ, զոր մեք գամ ասնք, զի զայս Բարգուշատեցին ասէ և Գարդացին, և զյղարկեմն և զյղեմն յղում և զլոյսն լուս ասեն ոմանք և զգայն գոյլ և զգառն՝ գոռն»: Վարդանի նպատակն է ներկայացնել ինչ որ կայ իրօք լեզուի մէջ, չբռնադատել անոր երբեք խորթ քերականական ձևեր, որոնք միայն կ'աղճատեն լեզուն: «Վասն զի հիլինացիք, յոյնք և հոռմէացիք յոյժ ընտրութիւն առնեն վասն միաւորին և երկուորականին: Իսկ մեր ազգս

ոչ ունի այսպիսի քննություն վասն փաթեթամոթեան և արձակ լիզուլու մերոյ»։ Քերականությունը ունի իր որոշակի առարկան՝ «մասունք բանին»։ «Վասն Բանին Մասանց»ը կը շօշափէ մանաւանդ հայերէնի շարահիւսական հարցերը։

10) Յովհաննէս Երզնկացի. — Յաւով կ'արձանագրէ իշխող տգիտությունը, մանաւանդ իմաստասիրական գիտությունաց անտեսումը իր ժամանակակիցներուն կողմէ։ «Եւ յոյժ սրտարկեալ խոցիմ, յորժամ տեսանեմ զազգս մեր անփոյթ արարեալ գիմաստասիրական ուսմանց և զհմտութենէ արհեստից բանականաց, մինչ զի զհանգաման անուանց իմաստասիրացն զրոց անտեղեակ գոլով, զորս յայտեալ են հարքն մեր ի գիրս իրեանց, զոր ընթեռնումք զոր այժմ երկարություն համարիմ յիշել զանուանուն և կամ զպատճառ հեղգութեան ազգիս»։ Քերականությունը քանական արհեստ» է։ Քերականությունը կը բաղդատէ բժշկություն հետ, որուն նպատակն է «կամ զներկայ առողջություն պահել կամ զի բաց գնացեալն վերստին դարձուցանել, այսպէս հմտություն քերականին է զքերթողացն և զշարագրացն կամ առողջապէս գաւրություն գրելոցն պահել, կամ զթխեալն և իրր հիւանդութեամբ տկարացեալն քերելով և խտրութեամբ և դատողական քննութեամբ բժշկել»։ Քերականությունը հմտությունն է, որովհետեւ հմտությունը վերահասու չըլլար պատճառին։ «Բայց մի ոք սղաւանս կարծիցէ, զի զքերականութեան հմտություն, որ է միայ իրի անպատճառ գիտություն»։ Ստուգարանութեան համար, Երզնկացին անհրաժեշտ կը գտնէ շրջակայ լեզուներու ծանօթացումը։ Լեզուներու տարբերությունները կը բխին արտաքին աշխարհի մեր ընկալման տարբերություններէն։ Երզնկացին կը դատորոշէ զիրը և տառը։ Սոսքի մասերուն մէջ կարեւորագոյնն է անունը, երկրորդն է բայը։

11) Եսայի Նշեցի. — Դիւժորի համալսարանին անուանի դասախօսը կոչուած է նաև «Եռամեծ փիլիսոփայ» և «անյաղթ հետոր»։ Զբաղած է նաև ձեռագիրներու հաւաքումով։ Դրած է «Մեկնություն Քերականին» երկը։ Քերականությունը արուեստ է, իր բուն բնագաւառը՝ խօսքի մասերու

ուսումնասիրությունն է. տեսականօրէն, կարեւոր քայլ մը կ'արձանագրուի բանասիրական քերականութեան ստեղծման մէջ։

12) Յովհաննէս Քոնեցի. — Հեղինակն է «Համառօտ Հաւաքումն Յաղագս Քերականին» երկին։ Ազգուած է լատիներէն քերականութենէն։ Քերականությունը արուեստ է։ Ձի դատորոշիր «տառ» և «գիր» բառերը։ «Գիր» բառը ստուգարանօրէն կը կապէ «քերել» բային հետ։ Սոսքի մասերը կը սահմանէ Դիոնիսիոսի հետեւելով. «Անունն է մասն բանի հոլովական . . .»։

13) Գրիգոր Տաթևացի. — Աստուածաբան և իմաստասէր վարդապետին մօտ, քերականությունը և տրամաբանությունը սերտօրէն կը միահիւստին, քերականական ըմբռնումները կը նոյնանան տրամաբանականներուն հետ։ «Անուն» և «բայ» հասկացողություններու սահմանները՝ որպէս առանձին խօսքի մաս կը ջնջէ, և զանոնք կը դատորոշէ միայն իրենց պաշտօնի զիրքով (իրեն ենթակայ և ստորոգեալ)։ Երկու տեսակ են հնչարանական փոփոխությունները.

— 1) Բաց վանկի ձայնաւորի փոփոխություն, 2) Փակ վանկի ձայնաւորի փոփոխություն։ Ձի քանադաներ զիրը և տառը։ «Բանի մասանց»ը կը ստորաբաժնէ երկու մասի՝ իմաստասիրական—տրամաբանական և քերականական։ «Իմաստասէրքն երկու ասեն զմասունք բանի, այսինքն անուն և բայ, որ նշանակէ գէություն և զգործ։ Իսկ քերականությունն ասէ, այսինքն անուն, բայ, ընդունելություն, յաւգ, զերանուն, նախդիր, մակբայ, շաղկապ»։ Իր մօտ կը գերակշռէ իմաստասիրական—տրամաբանական բաժանումը։ Երեք տեսակ գլխաւորներ գոյություն ունին. — ծաղկագիր, երկաթագիր և հատարակ գլխագիր։

14) Առաքել Սինեցի. — Քերականությունը «ամենայն իմաստասիրությունն» նախադուռն է։ Քերականությունը մեկուսացած ճիւղ մը չէ, այլ կապ ունի այլ ճիւղերու հետ, ումանց հետ ծագմամբ, ուրիշներու հետ բնոյթով և զերով։ Քերականութեան ամենէն մօտն է երաժշտությունը, որ նոյնպէս կը յենու մարդկային ձայնի վրայ։ Քերականությունը իր զերով կը կապուի ճարտասանութեան հետ։ «Ձի քերականություն կարօտանա(յ) ճարտասանի պայ-

ծառ բանից, այսինքն զի թէպէտ բանին զիտութիւն քերականին է, այլ պայծառութիւն և զարգարանք և պաճուճանք և պերճացունել զբան ճարտասանացն է, և որպէս ամենայն նիւթ կարօտի զարգարման, սոյնպէս և քերական ճարտասանին: Քերականութեան նպատակն է լեզուի կատարելագործումը և ուղղումը: Ստուգաբանութեան համար, կարևոր է օտար լեզուներու ծանօթացումը: Եվ ամեն որոյ պարտ է զամենայն լեզուս զիտել, թէ հնար իցէ: Բայց ոչ զայս ասէ, այլ զիւր ազգի լեզուն միայն, այսինքն զեզերականն, որ է Կորճային, որ են Սասնցիքն, և զՏայեցիքն, որ են Տարօնցիք. և զԽոթային, որ են Ուխտեցիք. և զԶորրորդ Հայեցիքն, արդ Առաջին Հայք՝ յԱրամանեկայ ի Պոնտոս, և ի Պոնտոսէ մինչև ի քաղաքն Մելիտինէ. Երկրորդ Հայք Մերտինն և անդի ի Մոփաց գաւառն, որ է Մանածկերտ և Մուշ. Երրորդ Հայք, և անդի ի քաղաքն Ե(ր)զնկայ և Սևաստ. իսկ սեպհական աշխարհն՝ Մեծ Հայք. Զորրորդ՝ որ է Արարատեան գաւառն և այլն: Նոյն Սպերաց աշխարհն և Սիւնին և Արցախայինն, որ են Խաչենացիք: Քերականութիւնը և արամարանութիւնը յըստակօրէն չի գատորոշեր:

Գիրքը ունի երեք յաւելուածներ, ուր յաջորդաբար նկատի կ'առնուին վիճելի և անձանօթ հեղինակներու վերագրուած քերականական երկերը: — Առաջին յաւելուած. — Դաւիթի, Մովսէս Խորենացիի, Մամբրէ վերձանողի և Բարսեղի վերագրուող քերականական մանր երկերն ու հատուածները: — Երկրորդ յաւելուած. — Անորոշ ժամանակի հարց ու պատասխանի ձեով գրուած քերականութիւններ: — Երրորդ յաւելուած. — Անանուն հեղինակներու մանր քերականական աշխատութիւններն ու հատուածները:

Հեղինակը զիւրաւ կրնար խուսափիլ հետեւեալ օտար բառերէն՝ որոնց համար ժէքները արդէն գոյութիւն ունին հայերէնի մէջ: — Տրալիցիս փոխանակ աւանդութիւն ըսելու, անհիկ փոխանակ հիմի, պրոբլէմ փոխանակ խնդիրի, սուբյեկտիվ փոխանակ ենթակայականի, սեմինաբանութիւն փոխանակ եզրաբանութեան:

Այս սրբագրելի կէտերէն վերջ, այս գիրքը զգալի պակաս մը կը լրացնէ հայ ձեռագրական շրջանի քերականագիտութեան մէջ:

ԱՆՈՒՇԱԻԱՆ ՎՐԴ. ԶՂՁԱՆԵԱՆ

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹԱԺՈՂՈՎ

Աղեքսանդրիոյ Բրիտանեայ համայնքներու պետերը, զեղեցիկ զաղափարը ունեցան 1959 տարւոյ սկիզբը, միջնարանաւանական ժողովներ գումարելու, որոնց իբրարդիւնք և նախապատրաստական աշխատանքները աւարտելէն ետքը, Աղեքսանդրիոյ և համայն Ափրիկէի Յոյն Ուղղափառաց Պապ և Պատրիարք Բրիտանոֆորոս Բ., 12 Փետր. 1959ին հրաւիրեց ըսոր Բրիտանեայ եկեղեցիներու պետերը Յունաց Ս. Էվանկէլիստոս (Աւետում) եկեղեցիին մէջ, եկեղեցիներու միութեան համար պաշտամունք կատարելու, վերականգնանալով Բրիտանեայի եկեղեցիին փառքը:

Ընդարձակ այս եկեղեցիին յատկապէս պատրաստուած էր այս պաշտամունքին համար: Ներկայ էր տւելի քան 2000 հաւատացեալներու միջազգային բազմութիւն մը: Իսկ եկեղեցւոյ Ատեանին մէջ կը տեսնուէին Նորին Ամենապատուութիւն Բրիտանոֆորոս Պատրիարքը իր եպիսկոպոսներով, հանդիպակաց կողմը կարգաւ իրենց տեղերը գրաւած էին Լատինաց Պապական Նաւիրակ Ն. Սրբազնութիւն Կայյէ Եպս., Քաղկեդոնի Մետրոպոլիտը, Ղպտի Ուղղափառաց Եպս.ը, Հայոց Առաջնորդական Փոխանորդը, Յոյն Կաթողիկոսներու Պատրիարքական Փոխանորդը, Ղպտի Կաթողիկոսներու Պատր. Փոխանորդը, Մարոնիթ Եպս.ը, Սելեւկիոյ Յոյն Եպս.ը, Զուլեյքերիական Բազմաբաններու Հովիւը, Ասորւոց Պատր. Փոխանորդը և բազմաթիւ ուրիշ բարձրատիճան եկեղեցականներ:

Արդարեւ բացառիկ տեսարան մը կը պարզէր եկեղեցւոյ ներքնամասը, ուր բազմաթիւ խաչվառներու և լուսավառութեանց ընդմէջէն կը տեսնուէին եկեղեցականները իրենց յատուկ տարազնե-

բով, որոնց Քրիստոսնէական միութեան ի խնդիր այս հաւաքոյթը մեծապէս կը յաւելէր եկեղեցիին մէջ հաւաքուած բազմութիւնը:

Պաշտամունքը սկսու երեկոյեան ժամը 7 ին: Կարդացուեցան Յովհ. Աւետարանին ժե: զլուխէն տասը համարներ և յատկապէս ժե: զլուխէն 21 համարը ուր կ'ըսուի. «Զի ամենեքին մի իցեն, որպէս Դաւ, Հայր, յիս և ես ի Քեզ, զի և նաքա ի մեզ իցեն. զի և աշխարհ հաւատացէ եթէ Դաւ առաքեցիք զիս»: Աւետարանական այս ընթերցումը կատարուեցաւ բազմաթիւ լեզուներով, ինչպէս Ղպտերէն, Լատիներէն, Ֆրանսերէն, Հայերէն, Արաբերէն և Յունարէն: (Ստորե կը ներկայացնենք խօսուած քարոզներէն կըրճատուած և կարեւոր մասեր):

Ս. Աւետարանի ընթերցումներէն ետքը կարգաւ քարոզի համար խօսք տրին. —

Ա) Գերաշնորհ Բարսեղ Իսնաք, Ղպտաց ներկայացուցիչը, որ ըսու թէ «Քրիստոսնէական եկեղեցիներու միութեան մեր այս պաշտամունքը տեղի կ'աւանդայ մեր Տիրոջ Քրիստոսի իսկ ներկայութեամբ: Ան ուղղութեան միութեան համար: Ահաւասիկ թէ ինչու այժմ այստեղ կը մտածենք նոր Հոգեգալուստի մը մասին: Մեր աղօթքներն ու հաւաքոյթը կ'ազդեցնեն Յաղթական Ս. եկեղեցիին՝ որուն համար Յովհաննէս Առաքեալը կը գրէր Յայտնութեան գրքին մէջ. «Տեսի ժողովուրդ բազում որոց ոչ զայր թիւ, յամենայն հեթանոսաց և յամենայն ազգաց և յամենայն լեզուաց և յամենայն ժողովրդաց, որք կային առաջի Աթոռոյն Աստուծոյ»: Երկնքը Աստուծոյն որպէսզի իր Զինուորական Ս. եկեղեցիին միութիւն չնորհէ, վասնզի աղօթքը երկնից պատուհանները կը բանայ: Սկիզբը երբ եկեղեցիին մէկ էր, կրցաւ կործանել Հռովմէական կառավարական հօր կայսրութիւնը և անոր բեկորներուն վրայ հաստատեց Քրիստոսնէութիւնը: Եկեղեցիներու բաժանումը կը զանդաղեցնէ Աւետարանի քարոզութիւնը: Ով դաւք, մեծ սատան Ազգաբանագրիւն Հոգեւոր Հովիւներ, Ս. Մարկոս Առաքեալի այս քաղաքին մէջ ջանացէք որ հարթութիւն տարակարծութիւնները, որպէս

զի Քրիստոսնէութեան հաւատացեալներու բանակը բաժան բաժան չըլլայ: Այն տանն աշխարհիկ ուժերը պիտի չհամարձակին իրենց սուրբերը մերկացնել, ուստի խաղաղութեան իշխանին ձայնը լսելի ըլլալով պիտի թաղաւորէ Աստուծոյ անոնց փառքը»: Ապա, Ղպտի Ուղղափառ եկեղեցիին երզնախումբը երգեց «Տէր խաղաղութեան, խաղաղութիւն պարգեւէ»:

Բ) Զաւիցերիոյ Բողոքական եկեղեցիին Հովիւ Տիւ Պաւա ըսու. —

«Գերազանց զոհր, Քրիստոս, մարդը մօտեցուց Աստուծոյ: Ըլլալով նոյն և մէկ Հօրը որդիները, խղճի պարաք ունինք անդրադառնալու միութեան: Մտածեցէք թէ մեր բաժանումները, մեր սիրոյ պակասը իրարու հանդէպ, որքան կը արբամեցնեն երկնուոր Հօրը Հոգին: Գիտէք թէ Քրիստոս ըսու. «Մի արամեցնէք Հոգին»: Ինչպէս որ ընտանիքի մը զաւակները, որոնք կրնան տարբեր նկարագիրներ ունենալ, բայց որոնք իրենց ծնողաց հանդէպ սէր ունին, այնպէս նաեւ մեր երկնուոր Հօրը սէրը իրար հանդէպ սիրոյ և վստահարձ հակացողութեան ըզրացումը կ'արթնցնեն որ եկեղեցիներու մէջ միութիւն կրնայ յառաջացնել, եթէ Հօրը սիրոյն անստնք. վասնզի այն տանն եզրայրական սէրը կը տիրէ և արուեստական արգելքները կը վերցուին, որովհետեւ սէրն է որ կը միացնէ: Յիսուս այս միութեան գիրը վճարած է»: Ապա Գերմանացի գթութեան քայրերը երգեցին «Երկնուոր Հայր» երգը:

Գ) Ազգաբանագրիւն Առաջն. Փոխ. Հոգեշնորհ Տ. Զաւէն Վրդ. ըսու. —

«Աստուած սէր է. իր միտքին Որդին զրկեց աշխարհ որպէսզի զիրար սիրենք, ինչպէս որ Ինք կը սիրէ զմեզ: Սիրոյ այս գերազանց պատուիրանն է որ կը միացնէ մեզ իրարու: Քրիստոսնէութիւնը կը նմանի ծառի մը որուն ճիւղերը բազմաթիւ են, բայց արմատը մէկ է: Եթէ անդամները իրար հետ և արմատին հետ հաղորդութեան մէջ չըլլան, կը չորանան և կրակին մէջ կը ձգուին: Եթէ անհոգութեան ոգին միշտ շարունակուի, Քրիստոսնէականները պիտի նմանցնեմ երզնախումբի մը անդամներուն՝ որոնք

էապէս նոյնը բանը ըսելով հանդերձ, չեն հպատակիր Ղեկավարին և ուրիշն անհասկնալի կը դառնան»։ Ապա, Հայոց երգչախումբը երգեց «Սուրբ, Սուրբ»։

Դ) Գերաշնորհ Լէոս, Լատին-կաթոլիկ եկեղեցւոյ ներկայացուցիչը, ըսաւ. —

«Քրիստոս մեր Տէրը վերջին ընթրիքին մէջ հաստատեց միութեան խորհուրդը։ Իր վերջին աղօթքին մէջ, ճշմարտութեան և բարութեան գերազանց օրինակ մը տուաւ. մենք Քրիստոսի մէջ ենք և Քրիստոս մեր մէջ, ինչպէս օրթատուն կին ճիւղերը կապուած են արմատին կամ ինչպէս որ Հայրը և Որդին Ս. Երրորդութեան մէջ միացած են։ Քրիստոսն էից միութիւնը պէտք է որ իրականանայ, վասնզի այս պարագան Տիրոջ պատուէրն ու կտակն է։ Միութեան իրականացումէն հաք, վստահարար կարելի է ըսել թէ աշխարհը ամբողջ կրնայ յեղաշրջուիլ»։ Ապա, Ֆրէրներու Քրիստ. վարժարաններու երգչախումբը երգեց «Աստուածային Սէր» շարականը։

Ե) Գերաշնորհ Յովսէփ Թաուիլ, Պատրիարքական Փոխ. Յոյն կաթոլիկներու, ըսաւ. —

«Որեւէ տեղէ տեղի Արեւելքի մէջ է որ զգալի է Քրիստոսնայ եկեղեցեաց միացած չըլլալը. որեւէ վայրէ տեղի Արեւելքի մէջ է որ հարկեցուցիչ է միութիւնը եկեղեցիներու միջև։ Գոյութիւն ունեցող բաժանումը ստատանային գործն է Աստուծոյ զաշարին մէջ։ Ստատանան պէտք է արտաքսուի, որպէսզի տեղ ըլլայ Աստուծոյ Ս. Հոգիին։ Բաւոր Քրիստոսնականներու սրբատարութիւն աղօթքը կ'աղագուի Տիրոջ, որպէս զի իրազարծուի նոր Պենտեկոստէի մը հրաշքը։ Եկեղեցիներու բաժանումը վերցնել կը նշանակէ խաղաղութիւն հաստատել և սրբոց ժողովին անդորրութիւն պարգեւել, նաեւ Տիրոջ պատուիրանին համակերպիլ. վասնզի Ան կ'ըսէ «Հայր Սուրբ, զի նոքա եղիցին մի»։ Ապա, երգչախումբը երգեց Հաղեղալատեան և Աւետման շարականներ։

Զ) Գերաշնորհ Տիսնիսիոս, Յոյն Ուղղափառ եկեղեցիի ներկայացուցիչը, ըսաւ. —

«Քրիստոս, իր մահուքէն առաջ, իրեն վերջին պատուէր, հրահանգեց որպէս

զի իրարու յանցանքները ներենք և սիրոյ ու միութեան մէջ ապրինք։ Եկեղեցիներու միութիւնը զոհողութիւն կը պահանջէ։ «Հայր Սուրբ, դադարեցո՛ւ զհրձուածս յեկեղեցւոյ»։ (Ս. Բարսեղ Կեսարացի)։ Եկեղեցւոյ միութիւնը ոչ թէ անձնասիրութիւն, այլ հերոսութիւն կը պահանջէ»։ Ապա, Յունաց երգչախումբը երգեց երկու շարականներ (*)։

Յատկապէս եկեղեցւոյ միութեան համար խօսուած այս քարոզներէն հաքը, բոլոր ներկաները հրաւիրուեցան վայրկեան մը լռութեան և խոկումի մէջ անցնելու, որպէսզի անդրադառնան աստուածային սիրոյն և վստահ ըլլան թէ Աստուած ճշմարիտ հոգւով աղօթողներուն կը լսէ և ընթացք կուտայ անոնց խնդրանքներուն։ Ասկէ հաքը, ամբողջ ժողովուրդը միաբերան և իւրաքանչիւրը իր լեզուով արտասանեց Տէրունական Աղօթքը։

Հուսկ յետոյ, բոլոր եկեղեցական պետերը շարուելով Սուրբ Խորանին առջև Տեառնագրելով ներկաները, օրհնեցին զանոնք։ Բազմաթիւ հաւատացեալներ լալու համար յաւաքուած էին, լեցուած էին կրօնական ապրումներով։ Ամենուրեք, հոգիներուն մէջ, մթնոլորտին մէջ, կրօնական զգացումը կը զեղուր։

Աւելի քան երկու ժամեր տեղոյ այս արարողութենէն հաք, բազմահազար ժողովուրդ և եկեղեցական դասը մեկնեցան հոգեւոր ուրախութեամբ և յաւաքումով։

Քանի մը օրեր հաք, Ամեն. Պատրիարքը Յունաց, մտերմիկ խօսակցութեան մը ընթացքին, յայտնեց թէ եկեղեցիին առնունք՝ Աւետում, այս պարագային խորհրդանշական իմաստ մը ունի . . . : Ըսուեցաւ ի միջի այլոց նաեւ թէ կաթոլիկ եկեղեցիին, ինչպէս նաեւ անխափր բոլոր եկեղեցիներուն միութեան համար կատարուած պաշտամունքին և հաւաքայիններուն մասնակցիլը յոյժ սրապանդիչ և ուրախալի երեսոյթ մըն է։

ԶԱՅԻՆ ՎՐԻ. ԶԻՆԶԻՆԵԱՆ

Աղեքսանդրիա

(*) Խօսուած քարոզներուն համար աչքի առջև ունեցած եմ ՔԼԵԱՐԺ Թերթը։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՋ ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՒԱՔՈՅԹ

ԵՐԱԲՆԱԿ ԵՒ ՄԻԱԲՆԱԿ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Գերմանիոյ Շլէզուիկ - Զոլշթայն քաղաքի Աւետարանական Ակադեմիայի դասախօսներէն եւ ուսանողներէն խումբ մը, Երուսաղէմ ուխտի եկած ըլլալով, փափաքած էին տեսակցութիւն եւ խօսակցութիւն ունենալ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու ներկայացուցիչներուն հետ, նիւթ ունենալով Քաղկեդոնի Ժողովին որոշումները եւ Միաբնակ Եկեղեցիներու դիրքը անոնց նկատմամբ:

Ապրիլ 15 եւ 16, 1959, Չորեքշաբթի եւ Հինգշաբթի օրեր, տեղի ունեցան կրօնական բնոյթ կրող խօսակցութիւնները Երուսաղէմի Լուտերական Եկեղեցւոյ սրահին մէջ, առաջնորդութեամբ Քիլ Համալսարանի դասախօս եւ Շլէզուիկ - Զոլշթայնի Աւետարանական Ակադեմիայի Տնօրէն Տրթ. Ֆրիտրիկ Հէյէրի:

Հրաւիրուած եւ ներկայ էին Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ներկայացուցիչներ, նաեւ Եթովպական, Ղպտի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցիներու ներկայացուցիչներ: Բացի Երուսաղէմի Լուտերական եւ Անկլիքան Եկեղեցիներու հոգեւորականներէն (Բրոփօսթ Ուայկէլթ եւ Քէնրն Էվըրի), հաւաքոյթին մասնակցեցան մօտ 50 աշխարհական անդամներ: Ուղղափառ Եկեղեցւոյ Միաբնակ վարդապետութիւնը ներկայացուցին Հոմսի Ասորի Պատրիարքութեան Քարտուղար Հայր Զէքի՝ Արաբրէնով, Գահիրէի Ղպտի Աստուածաբանական Վարժարանի դասախօս Տրթ. Ուահիպ Ճըրմիս եւ Երուսաղէմի Ժառ. Վարժարանի Տեսուչ Տ. Թորգոմ Վրդ.՝ Անգլերէնով: Իրաքի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Զգօն Եպս. Տէր Յակոբեան հրաւիրուած էր այս հաւաքոյթին, Վանուց Տնօրէն Ժողովին կողմէ, սակայն խրերկրին քաղաքական կացութեան պատճառաւ չկարողացաւ մասնակցիլ: Ուստի, Տ. Թորգոմ Վրդ. կարգաց Ամեն. Տ. Տիրան Արքեպիսկոպոսի հրատարակած անգլերէն պրակը՝ «Հայաստանեայց Եկեղեցւոյ Քրիստոսաբանական Դիրքը», ուր ներկայացուած է նախ պատմականը Հայ Եկեղեցւոյ ցոյց տուած հետաքրքրութեան՝ հանդէպ Տիեզերական առաջին երեք Ժողովներու եւ 451 թուականին գումարուած Քաղկեդոնի Ժողովին, ապա, երկրորդ բաժինով, Քրիստոսի անձին մէջ երկու

բնութեանց վարդապետութեան անհեթեթութեան մասին աստուածաբանական եւ իմաստասիրական նկատողութիւններ ընելէ յետոյ, նրբորդ գլուխին մէջ կը ներկայացնէ հարցը այնպէս ինչպէս ան կը ներկայանայ այժմ, եւ կ'եզրակացնէ որ Քրիստոնէական Եկեղեցւոյ ճշմարիտ միութիւնը անկարելի չէ, եթէ սակայն Եկեղեցիները կենդանի հետաքրքրութիւն ունենան եւ ջանք չխնայեն վերահաստատելու այդ միութիւնը:

Ներկայացուած տեսակէտներէն յետոյ տեղի ունեցան զաղափարաց փոխանակութիւն, որու ընթացքին մատնանշուեցան Բողոքական եւ Հռովմէական Միսիոնարական շարժումներու պատճառած վնասները եւ օգտակար հետեւանքները Արեւելեան Ուղղափառ Միաբնակ Եկեղեցիներու կեանքին մէջ:

Հաւաքոյթին եզրակացութիւնն այն էր որ Քրիստոնէական Եկեղեցիներ, պահելով հանդերձ իրենց աւանդութիւնները, պէտք ունին հաղորդակից ըլլալու իրարու կեանքին, գործունէութեան եւ հոգեւոր յառաջընթացութեան, որպէսզի իրարու մասին թիւր զաղափարներ սրբագրուին եւ որպէսզի Քրիստոսի Եկեղեցին լաւագոյնս եւ արդիւնաւորապէս կատարէ իրեն վստահուած պաշտօնը աշխարհի մէջ, ներկայ ընկերութեան սրբացման եւ փրկութեան համար:

Հաւաքոյթները տեղի ունեցան կէսօրէ առաջ ժամը 10-1 եւ կէսօրէ վերջ ժամը 4-7: Հինգշաբթի գիշեր ժամը 7ին, հաւաքոյթին փակումէն անմիջապէս յետոյ, ներկայ հիւրերը Հայոց Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցին այցելեցին, մասնակցելով Մեծ Պահոց Հսկումի արարողութեան, որու ընթացքին Լուսարարապետ Գերշ. Տ. Շնորհք Եպիսկոպոս, որ հաւաքոյթին առաջին օրը ներկայ եղած էր Ընծայարանի Սարկաւազաց հետ, քարոզեց Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջ առաջին հինգ դարերուն յառաջ եկած մոյար վարդապետութեանց մասին: Ապա ներկայացուց ներկայ դարուն մէջ ծաւալ գտնող Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի գործունէութիւնը, որուն մէկ մասնակի պատկերն էր երկօրեայ հաւաքոյթը:

Հսկումէն յետոյ ներկաները պտտեցան Մայր Եկեղեցին եւ Պատրիարքարանը, եւ հիւրասիրուեցան սուրճով եւ կարկանդակով:

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ԿԻՆԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Ս. Աթոռիս Տնօրէն Ժողովը ընդառաջ երթալով Կիլիկիոյ Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսի առաջարկին, Սիւրիոյ մէջ գտնուած և Ս. Աթոռէս Կաթողիկոսութեան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան փոխանցումի մասին, Միաբանական Ընդհանուր Ժողովը ի նիստ հրաւիրեց՝ Մարտ 26, Գլ. երեկոյ ժամը 4.30ին, Նիստը տեղի ունեցաւ Պատ. Բարաքարանի սրահին մէջ, նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Զօր և Ներկայութեամբ 33 Միաբաններու, Տնօրէն Ժողովը խնամեալ Տեղեկադրով մը Ներկայացուց այս խնդիրը Միաբանական Ընդհ. Ժողովին, որ Նկատի առնելով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սիւրիոյ մէջ կազմակերպութեան օժանդակելու պարտքը Ս. Աթոռիս կողմէն, միաձայն հաւանութեամբ որոշեց Սիւրիոյ Երուսաղէմապական թեմերը փոխանցել Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Ն. Ս. Օծութիւն Տ. Սահակ Կաթողիկոսին իրաւասութեան տակ ղեկով եկեղեցիներն, Առաջնորդարաններն ու Դպրոցները, իրենց բովանդակութեամբ:

Փոխանցումը պիտի սկսի Պէյրութէն, քանի որ այդ թեմը կազմակերպուած կը համարուի Գեր. եղիշէ Եպս. Կարօեանի Առաջնորդական պաշտօնի կոչուելովը, իբրեւ Փոխանորդ Ն. Ս. Օծութեան: Փոխանցումը պաշտօնապէս կատարելու համար, մասնաւոր անձ պիտի զրկուի Պէյրութ. Ս. Պատրիարք Զօր կողմէն:

Միաբանական Ընդհ. Ժողովոյ որոշումը անմիջապէս հեռագրուեցաւ Վեհ. Սահակ Կաթողիկոսին, Պէյրութ:

Ն. Օծութիւն Սահակ Կթղ., Պէյրութ.

Միաբանական Ընդհանուր Ժողովը իր պաշտօնական լիազօրութեամբ որոշեց Սիւրիոյ թեմերը փոխանցել եւ երթալէ Զօր Ս. Օծութեան իրաւասութեան:

ՊԱՏՐԻԱՐԿ ԳՈՒՐԵԱՆ

Պատասխանը.

1929, Մարտ 27, Պէյրութ.

Ն. Ամենապատուաւրեան Գուրեան Պատրիարքի

Զեմապէս շնորհակալ եմ Ձեր Ամենապատուաւրեան եւ Միաբանութեան իրենց բարեկէպ որոշման համար, ներշնչուած եղբայրակցութեան այն բարձրագոյն բոլորումէն, որ անգին օժանդակութիւն մըն է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերակազմութեան համար:

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ

«ՍԻՈՆ»Ի ԱՌԻՍԱՔԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՐՈՒՆԴԸ ԻՆՉՈՒ ՅՈՒՆՈՒԱՐ ԵՒՆ

ԿԸ ՏՕՆԵՆՔ

Դազալէն Յ. Արսէնեան կը հարցնէ քէ «Ինչո՞ւ համար Հայեր Ս. Ինճուկն ու Մկրտիչներ միեւնոյն օրը կը լինեն, միեւնոյն միւս բոլոր յարանաւորութեաներ տարբեր օրեր կը լինեն»:

Պատմական իրողութիւնը սա՛ է որ քրիստոնէական հին եկեղեցին Յունուար 6ին կը տօնէր՝ այդ երկու տօներն ալ, և Հայաստանեայց եկեղեցին հաւատարիմ մնացած է այդ վաղեմի աւանդութեան:

Յովհան Ոսկերեքեան, 386ին, Անտիօքի եկեղեցւոյն մէջ քարոզ տուած առեւ, ակնարկելով Դեկտ. 2-ին, կ'ըսէ. «Ճաղի տար տարի կայ որ այդ օրը (Դեկտ. 25) յայտնի և ծանօթ եղաւ մեզի»: Ըսել է որ Յոյն եկեղեցին ալ 376ին երկու տօները միասին կը կատարէր Յունուար 6ին: Ոսկերեքեան զիտել կուտայ նաեւ թէ նախ Հռոմայեցիք ըրին այս փոխադրութիւնը եւ յետոյ իրենք՝ Յոյնք, ի՞նչ երկու տօները միասին կը կատարուէին հին եկեղեցւոյ մէջ, ասոր չօգտօնելի ապացոյցը այն է որ Յոյն եկեղեցին մինչև հիմա Յունուար 6ին կը կատարէ Մկրտութեան տօնը:

Իսկ թէ ինչո՞ւ համար անջատեցին երկու տօները իրարմէ. այս մասին ալ երկու պատմութիւն կայ.

Ա. — Ըստ Երուսաղէմի եկեղեցւոյն, երկու տօները միևնոյն օրը երկու տարբեր տեղեր կատարելու զփութարութեան յառաջ եկած պիտի ըլլայ անջատումը. որովհետեւ ինչո՞ւ տօնը Բեթլեհէմ կը կատարէին, իսկ Մկրտութիւնը՝ Յորդանան:

Եւ իրօք, միևնոյն օրը (Յունուար 6) Բեթլեհէմէն կամ Երուսաղէմէն Յորդանան իջնել շատ զփութար էր այն առեւններ, և նոյնիսկ զփութար է այսօր, հակառակ ճամբաներու և ճամբորդելու սքանչելի դժուրութիւններուն: — Բայց կ'երևի թէ ասիկա զուտ տեղական պատճառ մըն է Երուսաղէմի եկեղեցւոյն համար. աւելի հաւանական է երկրորդը:

Բ. — Ըստ Հռոմի եկեղեցւոյն, աւելի ծանրակշիռ պատճառով մը ինչուի խախտած են իր աւանդական տեղէն:

Դեկտ. 25ին կը կատարուէին Սատուրնական տօները (Saturnalia) հեթանոս Հռոմի մէջ: Շատ մեծ և շատ ժողովրդական տօն մըն էր այդ, որ մնացած էր մինչև Զորքոյ զար, հակառակ քրիստոնէութեան մուտքին Հռոմ ու տարածումին:

Արդ, Դեկտ. 25ի այդ հեթանոսական նշանաւոր տօնը խափանելու զիտումով է որ Քրիստոնէութեան ամենէն նշանաւոր և ամենէն ժողովրդական տօնը, Ս. Ինճուկը, Յունուար 6էն փոխադրած են Դեկտ. 25ին:

Բ. Ե.

(Սիւն, 1929 Ապրիլ, էջ 126):


ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՏԱՃԱՐ

Երուսաղէմի արեւելքը, Գեթսեմանի ձորին մէջ, կը գտնուի համաքրիստոնէական գլխաւոր Սրբավայրերէն մին, Ս. Աստուածածնայ տաճարը, կառուցուած Ս. Կոյսի գերեզմանին վրայ, 435 թուականին, Մարկիանոս կայսեր կողմէ։ Տաճարը սկզբնապէս եղած է երկյարկանի կառուցուածք մը, սակայն վերնայարկի եկեղեցին է. դարուն պարսիկներու կողմէ կործանուելով, այսօր կը մնայ միայն գետնայարկի բաժինը։ Խաչածեւ կառուցուածք մըն է, որուն արեւելեան թեւին կեդրոնը կը գտնուի Ս. Կոյսի գերեզմանը։— Այս շատ թանկագին Սրբավայրին սեպհականատէրերն են այսօր Հայոց եւ Յունաց Պատրիարքարանները, հաւասար բաժանումներով եւ իրաւունքներով։

Դարերու ընթացքին հեղեղներն ու պատերազմներու ընթացքին կատարուած քանդումները, բարձրացուցած ըլլալով Գեթսեմանի ձորին մակերեսը, Ս. Աստուածածնայ տաճարը այսօր գրեթէ ամբողջութեամբ թաղուած կը մնայ հողին մէջ։

Մեր օրերուն, տաճարը երկիցս, այսինքն 1948 եւ 1955 թուականներուն ողողուեցաւ առատ անձրեւներու պատճառով գոյացած անսովոր հեղեղներով, որոնք փճացուն տաճարի բոլոր սրբազան կահերն ու մատնեցին զայն շատ անփառունակ վիճակի մը։ Այս պատճառաւ դադրեցան նաեւ ամենօրեայ սրբազան պաշտամունքները։ 1948էն ի վեր իրաւակից Հայոց եւ Յունաց Պատրիարքարանները ունեցան բազմաթիւ



Պատկեր 1. Ս. Աստուածածնայ Տաճարի բակի Հայոց սեպհական արեւմտեան պատը, եւ Տաճարի հարաւային պատի արեւմտեան թեւը, նորոգութենէ յետոյ։

խորհրդակցական ժողովներ տաճարի վերանորոգութեան մասին, եւ սակայն ցարդ կարելի չէ եղած բաղձալի այս նորոգութեան համար վերջնական համաձայնութեան յանգիլ, Յունաց ծգծողական բաղաքականութեան պատճառով։

Սակայն անհրաժեշտ էր որ գէթ վերսկսէին սրբազան պաշտամունքները, եւ այս շատ կարեւոր Սրբավայրը եթէ ոչ կառուցուածքի, գէթ սրբազան կահոյից վերանորոգում մը ունենար։ Այլապէս կրնային վտանգուիլ դարաւոր գոյավիճակը (սթաթուրոն) եւ մեր ազգային իրաւունքները։

Այս մտածումներով մեր Պատրիարքարանը յամառ կերպով հետապնդեց եկեղեցւոյ սրբազան կահից վերանորոգումը եւ պնդեց գէթ պաշտամունքներու վերսկսումին

վրայ: Պատրաստուեցան անհրաժեշտ սրբանկարները, կանթեղները, ջահերն ու զարդերը, պահարաններն ու վարագոյրները եւ Ս. Պատարագի սեղանները, ու 1958 Յունիսին տաճարը կահաւորուելով՝ սկսան ամենօրեայ պաշտամունքները:

Մեծածախս այս նորոգութիւններու բարերար հանդիսացաւ Ամերիկայէն Կիւլլայի Կիւլլէնկեան Հիմնարկութիւնը, որ եկեղեցանուէր զգացումներով յանձն առած է Սրբավայրէն ներս ըլլալիք որեւէ նորոգութեան բարերարութիւնը:

Կահաւորման կապակցութեամբ եղած նորոգութիւններէն զատ եղան նաեւ որոշ շինուածական նորոգութիւններ տաճարին արտաքին մասին մէջ, այսպէս. —

Ա. — Մեր կողմէ ի հիմանէ վերակառուցուեցաւ գաւիթին արեւմտեան պատը, որ քանդուած էր վերջին ջրհեղեղէն: Այս պատը այնպիսի նախատեսումներով շինուած է որ ողողման վտանգը նուազագոյնի վերածուի: Ըստ այսմ, պատի վերելի մասը, որ միաժամանակ ցանկապատն է մեր Գեթսեմանիի պարտէզին, զարդարուեցաւ զեղեցիկ կամարակապ բացուածքներով, որոնցմէ պարտէզին մէջ հաւաքուելիք ջուրը կրնայ տակաւ առ տակաւ հոսիլ եւ արգելք հանդիսանալ ողողման: Այս պատուհանածեւ բացուածքները օժտուեցան յատկապէս պատրաստուած երկաթէ ճիւղածեւ ձողերով: Նորաշէն պատին վրայ զետեղուեցաւ հետեւեալ արձանագրութիւնը. — Նորոգուած պատին երկայնքն է 20.50 մեթր, բարձրութիւնը՝ 5.90 մեթր: (Պ—ԴԷԷ ԴԷ— 1):



Պատկեր 2. Գեթսեմանիի Հայոց պարտէզի մուտքին վրայ կառուցուած նոր զանգակահունը:

Ե. — Գեթսեմանիի Հայոց պարտէզին մուտքը իր բովէն անցնող ճամբու մակարդակին իջած էր, ճամբու բարձրացումով: Հին մուտքին վրայ մեր Պատրիարքարանի կողմէ սիրուն զանգակատուն մը կառուցուեցաւ, որուն վրայ զետեղուեցաւ հետեւեալ յիշատակարանը. — «Ի յիշատակ Կիւլլայի Կիւլլէնկեան Գերդաստանի — 1958 = ՌՆԷ»: Սոյն զանգակատան պատին վրայ դրուեցան քանի մը քանդակներ հայկական ոճով: (Պ—ԴԷԷ ԴԷ— 2): Յառաջիկային պէտք է նորոգուին Գեթսեմանիի մեր պարտէզին պատերը որոնք այժմ փլուզած են:

ՇԻՆԵՑԱԻ ՈՐՄՍ Ի ՀԻՄԱՆԷ
ԾԱԽԻԻՔ ԿԻԼԼԱՊԻ ԿԻԼՄԷՆԿԵԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
Ի ՅԵՇԱՍԱԿ ՆՈՐԻՆ ԿԻԼԼԱՊԻ
ԵՒ ՆՆՁԵՑԵԼՈՑՆ
ԿԻԼՄԷՆԿԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ
1957 = ՌՆԶ

Բ. — Յունաց հետ միասնարար նորոգեցինք եւ ընդլայնեցինք գաւիթէն դէպի Կեղրոնի Զորը բացուող անձրեւային ջուրերու փապուղին, որուն երկայնութիւնն է 28 մեթր:

Գ. — Անձրեւային ջուրերու տաճարէն ներս թափանցումը արգիլելու համար եկեղեցւոյ դրան առջեւ երկու Պատրիարքարաններու ծախքով կառուցուեցաւ երեք աստիճաններով քարայտակ մը:

Դ. — Երկու Պատրիարքարանները վերակառուցին տաճարի հարաւային պատին արեւմտեան թեւը, որ քանդուած էր հեղեղներէն: (Պ—ԴԷԷ ԴԷ— 1):

ԿԻՒՐԵՂ ՎՐԴ. ԳԱՅԻԿԵԱՆ

Քառուղար Սուրբ Տեղեաց Դիւանի

ՈՐՊԵՍՋԻ ԶՐԼԼԱՅ ԹԷ ՄՈՌՆԱՆՔ ...

Ապրիլ ամիսը, բնութեան վերածաղկումի հոգեպարար եւ հրաշալի երեւոյթին հետ կը բերէ հայ մտքերուն եւ սրտերուն արիւնոտ յիշատակը մեր Բիւրաւոր Նահատակներուն՝ որոնք ինկան Մեծ Եղեռնին: Եթէ բանաստեղծը ապրած ըլլար Տարագրութեան Տագնապի շրջանին, հաւանաբար իր ծանօթ բանաստեղծութիւնը գրէր քանի մը տառերու փոփոխութեամբ միայն՝ տալու համար հակապատկերը այժմ երգուածին:

Այս գարնան հետ, այս ծաղկանց հետ,
Փակուեց լեզուն իմ մայրիկին ...:

Արդարեւ, Ապրիլի բացուող ծաղիկներուն հետ փակուեցան լեզուները եւ աչքերը բիւրաւոր մայրերուն եւ հայրերուն, եղբայրներուն եւ քոյրերուն...: Ահաւոր դէպքին՝ եւ անկէ անմիջապէս վերջ ծնած Ցաւակները, Վրէժները եւ Մարտիրոսները արդէն լրացուցած են 40 տարին: Հայրենի հողերէն տարագրուած սերունդը պատմութեան անցնելու վրայ է. սակայն ազգի սրտին վրայ բացուած վէրքը դեռ չէ գոցուած, դեռ կ'արիւնի...: Ժամանակի սպեղանին մեղմացուցած էր կսկիծը ըստ բաւականին: Այսօր սակայն կրկին կը մորմոքի վէրքը, որովհետեւ թշնամիէն եկած հարուածի յիշատակին վրայ կ'աւելնայ եղբորմէն եկած Յուդայի համբոյրին դառնութիւնը...:

Պիտի չանդրադառնանք Դէպքին. ստորեւ կ'երեւի ընդհանուր եւ անաչառ պատկերը Մեծ Պատահարին, այնպէս ինչպէս աշխարհի պատմութիւնը արձանագրած է զայն իր պատմութեան դասագրքին մէջ: Սակայն ինչպէս չանդրադառնալ այն միւս տարագրութեան՝ որ այսօր իսկ կը պատրաստուի մեզմէ ոմանց ձեռքով, եւ կարելոր մեղսակցութեամբ այն իսկ սերունդին՝ որ հազիւ ճողովուրդներու սրտէն ու աչքէն դուրս իյնալու տարագրութիւնը... որ կրնայ այնքան աղիտաւոր ըլլալ իր հետեւանքներով որչափ եղաւ առաջինը:

Աղէտէն սերունդ մը վերջ, երկու ճշմարտութիւններ, մին դրական եւ միւսը ժխտական, անգամ մը եւս փաստուեցան մեր ազգային հաւաքական կեանքին մէջ: Առաջինը այն է որ մեր ժողովուրդը օժտուած է վերապրելու անխորտակելի կամքով եւ կարողութեամբ: Մերինէն տարբեր քիչ ցեղեր թրեւս կարենային տոկալ մեր զլխուն եկած հարուածի ուժգնութեան եւ չկորսնցնել իրենք զիրենք: Նման մահացու հարուածէն վերջ քիչ ժողովուրդներ կրնային երեւան բերել վերականգնելու եւ վերապրելու այն հրաշալի կարողութիւնը զոր մենք երեւան բերինք: Փառք Աստուծոյ, չարագործ թշնամին վրիպեցաւ իր ցեղաջինջ, հրէշային ծրագրին մէջ: Հայութիւնը փիզիքապէս կ'ապրի ըլլայ արտասահմանի մէջ ըլլայ իր պատմական հայրենիքի մէկ անկիւնը: Փոխարինելիները, երբեմն աւելիով, փոխարինուած են: Իբրեւ թիւ այսօր աւելի ենք քան ինչ որ էինք Տարագրութեան սկիզբը. իբրեւ նիւթական հարստութիւն մեր այսօրուան ունեցածը պակաս չէ քան ինչ որ ունէինք մեր հարստութեան կողոպուտէն առաջ: Իսկ անփոխարինելիները յաւէտ կորած են. մեր պատմական յուշարձաններու բարբարոսական կործանումը, մեր մշակութային արժէքներու սրբապիղծ փճացումը ոչ մէկ պայմաններու տակ կարելի էր վերաշահիլ: Իսկ հայրենիքը, անկողոպտելի կողոպուտը, իր տեղն է, կը սպասէ իր զաւակներու վերադարձին, եթէ անմար մնայ անոնց մէջ յոյսը եւ հաւատքը իրենց աստուածատուր ժառանգութեան վերատիրանալու: Ազգերու կեանքին մէջ տարիները քիչ նշանակութիւն ունին:

Այս հրաշալի երեւոյթին դիմաց կայ նաեւ ժխտական իրողութիւնը որ պատճառ-

ներէն գլխաւորն է մեր պզտիկ մնալուն, մեր դժբախտ մնալուն, հակառակ մեծ ու երջանիկ ըլլալու համար մեզի տրուած բոլոր կարելիութիւններուն: Այդ դժբախտ իրողութիւնը, որ կը փաստուի մեր օրերուն, այն է, որ մեր ժողովուրդը իր պատմական փորձառութիւններով չի հարստանար, պատմութեան իրեն տուած դասերով չիմաստնանար:

Յիսուսն եւ աւելի տարիներ առաջ, մեզմէ ոմանք նախապատրաստեցին անգիտակցաբար մեր Ֆիզիքեական տարագրութիւնը, անխոհեմ շարժումներով, ելոյթներով եւ յայտարարութիւններով: Մեր նպատակը չէ դատապարտել մարդերը՝ որոնք արդարեւ չէին գիտէր թէ ինչ կ'ընէին. մարդեր՝ որոնք այսօր անցած են պատմութեան, եւ որոնցմէ շատեր պէտք է ընդունիլ որ կ'ընէին իրենց յանձնուած գործը կամ հրահանգը «միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով եւ լցեալ սիրով», առանց անդրադառնալու սակայն անոնց հետեւանքներուն: Պատմութիւնը փաստեց, ի զին մեր բնաջնջման վտանգին, թէ որդեգրուած ուղղութիւնը, կիրարկուած միջոցները, սրբազան եւ մեծ դատի մը մօտեցումի եւ ձեռնուումի կերպերը սխալ էին: Կը կրկնենք դարձեալ թէ մեր նպատակը պատմական սխալ մը դատապարտել չէ, ան ինքզինքը դատապարտած է արդէն իր հետեւանքներուն մէջ. մեր ճիգն է մատնանշել որ նոյն յիմարութիւնը վերստին չգործենք: Դժբախտաբար սակայն նոյն խակ եւ անհեռատես մտայնութիւնները, նոյն թոյլ եւ անպատասխանատու բերանները աշխարհի բեմերէն կ'աղաղակեն որ հայ ժողովուրդի այն տարրերը որոնք չեն բաժներ Հայց. Մի եւ Առաքելական Եկեղեցիի մէջ սկիզբ առած անջատողական մտայնութիւնները եւ չեն իյնար լարուած թակարդին ու բացուած անդունդին մէջ, ունկնդրող աշխարհի հակադիր բանակին մէջ կը գտնուին ...:

Կ'անդրադառնա՞նք թէ՛ լսող օտարներ ինչ զգուանք եւ արհամարհանք կը զգան իրենց իսկ ցեղը եւ եղբայրները սեւացնող յայտարարութեանց հեղինակներուն նկատմամբ, մանաւանդ երբ պննուած են անոնք բարձրաստիճան եկեղեցականի սեւ պատմութեաններով . . . : Անձնասպանութեան համազօր նման յայտարարութիւններէ յետոյ կը սպասենք տակաւին որ աշխարհ եւ պատասխանատու իշխանութիւններ չպակսեցնեն իրենց յարգանքն ու համակրանքը կրկնապէս մարտիրոսացած այս ժողովուրդին նկատմամբ : Հայ ժողովուրդի գոյութեան ողնայարը կազմող զանգուածները կասկածելի յայտարարուելէ յետոյ դեռ կը սպասենք որ աշխարհ բարեկամ մնայ մեզի եւ անխախտ պահէ իր վստահութիւնը հայ ժողովուրդի վրայ ընդհանրապէս : Առաջին տարագրութեան մեր դահիճը զանազանութիւն չդրաւ յեղափոխականի եւ ոչ — յեղափոխականի միջեւ, խտրութիւն չդրաւ պետութեան թշնամի կամ բարեկամ նկատուած տարբերու միջեւ, տարբերութիւն չդրաւ հայ լուսաւորչականի կամ բողոքականի կամ կաթողիկի միջեւ : մէկու մը հայ ըլլալը բաւական էր կրելու հայութեան վերագրուած մեղքը եւ անոր պատիժին ամբողջ ծանրութիւնը : — Աշխարհ ընդհանրապէս եւ Մերձաւոր Արեւելքը մասնաւորաբար յղի են ահաւոր անակնկալներով . այնքան լայն տարածուած ենք, որ ուր որ կրակ իյնայ անխուսափելիօրէն պիտի այրին մեր փէշերը . գէթ մեր ձեռքով քարիւղ չլցնենք մեր գլուխներուն վրայ մարմինին ամբողջական այրումը չգիրաջնելու համար . . . :

«Սեւաջրէք, սեւաջրէք, մի բան կը մնայ»: Կը սխալին այսպէս խորհողները. մի բան չի մնար. երկու բան կը մնայ. մին՝ արհամարհանքի եւ դատապարտութեան անջնջելի խարանը ճակատին անոնց՝ որոնք կը սեւցնեն. երկրորդ՝ լուսապսակը գլուխներուն շուրջ անոնց՝ որոնք «կը սեւնան»:

Այո, որպէսզի չըլլայ թէ մոռանա՞նք պատմութեան մեզի բազմիցս կրկնած դասը, կը դնենք յաջորդ էջին վրայ յուշարար պատկերացումը հայ ժողովուրդի դէմ գործուած աններելի ոճիրին, որուն մէջ որքան դատապարտելի են գործադրող հրէշային ձեռքերը, նոյնքան պախարակելի են պատրուակ տուող արկածախնդիր անձերը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ(*)

1914-ի Մեծ Պատերազմին հետ զուգորդված բոլոր անհամար սարսափներուն ամենէն տխուրը Հայաստանի ողբերգութիւնն է։ Պատմութիւնը բարոյական հափանչերու քննադատ չէ։ Սակայն պատմութեան պարտականութիւնն է ուշադրութիւն հրաւիրել որեւէ բացառիկ դէպքի մը կամ սովորական չափանշերէ չեզուրի մը վրայ, և այս երկուքն ալ կային Հայաստանի մէջ, յիշեալ պատերազմի ընթացքին։ Իրողութիւններ գտնելը չէ որ դժուար է, այլ անոնց հաւատացնելը, այնչափ անհաւատալի և անկարելի կը թուին անոնք։ Դժբախտաբար կասկած չկայ թէ պատասխանատուութիւնը որոնց վրայ կ'իյնայ։ Երիտասարդ Թուրքերու ազգայնականութեան ուժերը, որ այժմ կը ներկայացնեն Բեմալ Փաշան և թիկունք կը կանգնին անոր, պատասխանատու էին այս սարսափներուն համար։ Երբ մէկը նոր Թուրք ազգին գովարանութիւնը լսէ, աղէկ է որ այս իրողութիւնը ի մտի ունենայ։ Այս Թուրքերուն վրայ կ'իյնայ մեղադրանքը այն ջարդերուն ու անգթութեանց՝ որոնց նմանը վտահալի ակնատեսներ ասկէ առաջ երբեք պատմած չեն։ Հայկական ողբերգութիւնը պատմութեան էջ մըն է զոր Թուրքերը բոսոր ներկեցին անմեղ արիւնով։ Եւ այս գարհուրելի սարսափին յիշատակը ոչ կրնայ մոռցուիլ և ոչ ալ պէտք է մոռցուի։

Ընդհանուր գումարը ջարդուածներուն երբեք պիտի չգիտցուի։ Բայց սխալ չըլլար երբ ըսենք թէ մէկ միլիոն երկու հարիւր հազար տարագրեալներէն վեց հարիւր հազարը ոչնչացան։ Վերապրողներէն մեծ թիւ մը քունի ուժով իսլամութեան դարձուե-

ցաւ։ Բայց այս սոսկալի դէպքերը ողբերգութիւնը չվերջացուցին . . . Թուրքերը տակաւին ուրիշ միջոցներ գտան իրենց ոխը թափելու։ 1916ին Ռուսերը էրզրումը գրաւեցին, բայց իրենց բանակը քաջուհեցաւ երբ 1917ի յեղափոխութիւնը տեղի ունեցաւ։ Աստիճանաբար Թուրքերը վերադրաւեցին ոչ միայն Հայաստանի իրենց բաժինը, այլ նաև մասն Պաթում, Կարս և Նոյնիսկ Երևան։ Էնվեր գացած էր, բայց Բեմալն ու իր յաջորդները իրենց գործը անփութօրէն չկատարեցին։ Իրենց յառաջխաղացքը արեան հեռքերով կնքուած էր։ Նոյնիսկ Կիլիկիոյ մէջ այն Հայերը որ մնացած էին՝ ջարդուեցան։ Սասնոյ և Պիթլիսի մէջ Թուրքերը ամբողջացուցին իրենց աւրիւնտ գործը։ Նոյնիսկ ինք, Երևանը, սիրան ու մայրաքաղաքը Ռուսական Հայաստանի, իր արեան տուրքը վճարեց Թուրք գաղաններուն։ Անուագն հարիւր հազար հոգի աւելցուեցան սպանուածներու ցանկին վրայ։

Հայերը լքուած էին որչափ Պոլսիկներէ նոյնչափ ալ ամբողջ աշխարհէն։ Զինադադարէն յետոյ Անգլիական զուեղերը ժամանակ մը խաղաղութիւն պահեցին Անգլիոյ վրայ մէջ։ Բայց երբ ասոնք քաջուհեցան, Վրաստանի, Երևանի և Ազրպէյճանի Հանրապետութիւնները ի զուր պայքարեցան Թուրքերուն դէմ։ Ի վերջոյ Պոլսիկները համաձայնագիր մը ստորագրեցին Թուրքերուն հետ (Մարտ 16, 1921), որով Պաթումն ու Կարսը, և հետեւաբար երկու երրորդը Հայաստանի, յանձնեցին Թուրքերուն։ Ամբողջ Հայաստանը որ մնաց, Երևանի Հանրապետութիւն անունով ճանչցուած, ձուլուեցաւ Ռորհրդային Հանրապետութեանց սիտեմին մէջ։ Այս էր իրական կարգադրութիւնը Հայաստանի համար։ Սեփրի Դաշնագրին մէջ Թուրքերը համաձայնեցան «հայոց համար ազգային տուն»ի գաղափարին։ Սահմանները զծելու համար իրաւաբար նշանակուեցաւ Նախագահ Ուիլսոն, որ այնչափ ընդարձակ որոշեց զանոնք որ մինչև երգնկա կը հասնէին Արեւմուտքէն։ Սակայն այս պարզապէս համաձայնութիւն մըն էր և թուղթի վրայ վճիռ մը մնաց։ Բեմալ ամբողջովին անտեսեց Սեփրի Դաշնագրին այս մասը երբ 1923ին Լոզանի

(*) Այս գրութիւնը բառական թարգմանութիւն մըն է «Europe in the Nineteenth and Twentieth Centuries» (1789 - 1931) (Եւրոպան 19րդ և 20րդ դարերու ընթացքին) անունով պատմութեան դասագիրքէ մը (էջ 567), պատրաստուած A. J. Grantի, M. A. և Harold Temperleyի կողմէ, առաջին անգամ հրատարակուած 1927ին, ի Լոնտոն, Նիւ Եորք և Թորոնթօ։ Բազմիցս վերհրատարակուած՝ մինչև 1944։

Դաշնագիրը կը պատրաստուէր: Եւրոպայի պետութիւնները, հաւանելով Հայաստանի յիշատակութեան իսկ զանցառութեան, ճանչցան 1921 Մարտի Սովիէթ-Քեմալ համաձայնութիւնը:

Պատահածը այն է թէ հիմա թրքական սահմանագիւլսէն ներս ողջ հայ չկայ: Բայց տակաւին կան բաւական թիւով հայեր ուսական նոր սահմանէն ներս: Եւ Երեւանի Սովետական Հանրապետութիւնը ծաղկումի մէջ է: Զբանջքներ փորուած են, պղինձ կ'արտադրուի, բամպակի մշակման նոր ձեւեր կը փորձուին և հիւսուածեղէնի արդիւնաբերութիւնը կը զարգացուի: Հայ ցեղին մնացած մասը Հայաստանի մէջ, որ հազիւ մէկ միլիոնի կը հասնի, անգամ մըն ալ ցոյց կուտայ իր անսպառ ճկունութիւնը և կենսունակութիւնը: Անոնք զօրացած են ներգաղթողներով: Արդարեւ, եթէ հաւատանք իրենց և Ռուսերուն վիճակագրութեանց, բնութիւնը իրենց օգնութեան հասած է: Բնակչութեան թիւը կ'աւելնայ աւելի արագ քան պատմութեան մէջ արձանագրուած ուրիշ որեւէ պարագայի: Ի վերջոյ, ապահով են անոնք աւերի և անիրաւութեան այսքան դարերէ ետք, և մնացորդացի ապագան ապահովուած կ'երևի:

Զարգը, իր պատմական խմստով, միայն Հայաստանի համար չէ որ պատահած է: (Պատմութեան մէջ ուրիշ փարգեր ալ եղած են): Այսուհանդերձ փարգերը վերեւ նկարագրուած աստիճանով անոր յատուկ եղած են: Տարօրինակ է նաև որ այս հայկական արհաւիրքը չէ արթնցուցած աշխարհի խիղճը նոյն չափով որով արթնցուցած են աւելի մեղմ դժբախտութիւններ: Մաքօլէյ համոզեց մեզ թէ Կլենքոյի կոտորածը պատմութեան մեծ ոճիրներէն մէկն էր: Բայց (Կլենքոյի մէջ) միայն քանի մը հարիւր հոգի սպանուած էին: Կլատսթօնի նշանաւոր դրքոյկը Պուլկարական սարսափներուն մասին ամբողջ աշխարհի մէջ արձագանգեց, բայց ընդհանուր գումարը (սպանուածներուն) քանի մը հազար էր: Ապտիւլ Համիտին հայ զոհերը հարիւր հազարի մօտեցան, իսկ Էնվերի և Քեմալի զոհերուն գումարը մօտաւորապէս երեք չորրորդն է մէկ միլիոնի: Սակայն Եւրոպա ցոյց չտուաւ ամօթի և սոսկումի զգացումը այն աստիճանով

ինչպէս ըրաւ Կլենքոյի և Պուլկարոյ պարագային: Իրապէս կ'երևի թէ խաղաղութեան շրջան մը կամ մեծ գրողի մը ազգեցութիւնը պէտք է որպէսզի համոզուի աշխարհը հայկական փարգերուն ահաւորութեան: Առնուազն որոշ է թէ փարգի երկու մեծագոյն փորձերը որոնք կատարուած են արդի պատմութեան շրջանին մէջ, չեն մղած աշխարհը դատապարտելու համար ոճրագործները իրենց ի գործ դրած վայրագութեան աստիճանին համեմատ:

Ի մասնաւորի, Էնվեր-Քեմալական փորձը ամբողջ ազգ մը բնաջնջելու՝ պատմութեան մէջ իր նմանը չունեցող ոճիր մըն է: Անիկա նման է (Ասորեստանի թագաւոր) Սինեքերիմի կատարած տարագրութեան: Հայ տարագրութիւնը գործադրուեցաւ քաղաքակրթութեան ստեղծած գիտական այնպիսի ճշգրտութեամբ և անխնայութեամբ որ իր հետեանքները անհունօրէն աւելի կործանարար էին մարդկային կեանքի համար, քան անկատար ճիգերը Ասորական քոնակայի մը: Յուշադրուած անգլութիւնը ծրագրով և գործադրութեամբ այնչափ աներեւակայելի է որ գրեթէ պարտութեան կը մատնէ քննադատութիւնը: Սակայն պատմութիւնը, եթէ ոչ անհրաժեշտօրէն բարոյական, անըւազն անաչառ է իր եզրակացութեանց մէջ: Պատմութիւնը ապացուցած է (բնաջնջումին) ծրագրին գոյութիւնը, և հաստատած է ստուգութիւնը մարդու ձեռքերով կատարուած անախնայութեան թիւով գոհերու սպանութեան: Պատմութիւնը ցոյց կուտայ նաև թէ այս սադայէլական անխնայութիւնը ոչնչացուցած է (թրքական սահմաններու մէջ գտնուող) հայ ցեղին ընդհանուր թիւին կէսէն քիչ մը պակաս մասը:

Մարդուն ամենէն սադայէլական հնամտութիւնը պարտուեցաւ Հայ ազգին գերմարդկային յարատեւութեամբ: Երբեք պէտք չէ մտահան ընել որ մօտաւորապէս Հայերու մէկ միլիոնի երեք չորրորդը (անոնք ամբողջութեամբ սպանուեցան) կրնար ինքզինք ազատել մահէն՝ հաւատքը ուրանալով: Նոյնիսկ այսպիսի ազգի մը մնացորդացը անմահ է իր տառապանքով և ինքնազոհութեամբ:

Թրգմ. Լ. Ա. Ա.

ՍՈՒՐԵՆ ՍՐԲԱԶԱՆԻ
ԱՐՔՈՒԹԵԱՆ ՏԵՒՉՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԸ



ՎԱԶԳԷՆ ԴԱՌԱՅ ԵՐԾՈՒՍԻ ԴԵՐՍՏՈՍԻ
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԵՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱԹԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆԵՒՒՒ

**ՍՐԵՑԵԱԼ ՈՐԴՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍՈՒՐԵՆԱՅ ԱՐԽ-
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴԵԶՄԱՆՏԵԱՆ, ՈՂՋՈՅ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ.**

Աւախալուքաբ ասացա՛մ Պատրիարքական Ս. Աթոռի Տնօրէն Ժողովի միջնորդազիր, որով կը խնդրուէր արքութեան պաշիւ շնորհել Ձերդ Սրբազնութեան ի գնահատման Ձեր եկեղեցաւէն ու ժողովրդանուէր գործունէութեան_եւ ի մխիթարութիւն Ձեզ եւ Աթոռի պատաճառէր Միաբանութեան:

Քաջ ծանօթ են Մեզ Ձեր արդիւնաւէտ ծառայութիւններ, զորս մասնացած է՛ք եւ կը շարունակէ՛ք մասնացանել մեր Ս. եկեղեցիին, իրեւ երուադէմի Սրբոց Յակոբեանց զինուորեալ Միաբան, որ երկար տարիներէ ի վեր Ձեր կեանքը նուիրած է՛ք Պատրիարքական Աթոռի իրաւանց պաշտպանութեան եւ անոր շինութեան եւ պայծառութեան սուրբ գործին, Տիրաւանդ սիրոյ եւ խաղաղութեան ոգիով տոգորուած:

Յիշատակութեան արժանի կը զսնենք մանաւանդ Ձեր գործունէութիւնը Սուրբ Տեղեաց մէջ, իրեւ Տեսուչ Ս. Յարութեան, Բերդեմի Ս. Ծննդեան, Ս. Հրեշտակազնաց վանքերուն եւ տաճարներուն, այլ եւ գնահատանքի արժանի Ձեր հովուական ու առաջնորդական պաշտօնավարութիւնը՝ Գաղաթաղա եւ Պէլյուք, եւ այժմ Ձեր նուիրեալ ծառայութիւնը իրեւ Պատրիարքական գործերու պատասխանատու պաշտօնակատար, միշտ հաւատարիմ դէպի Հայ եկեղեցւոյ կանոններ եւ նուիրական աւանդութիւններ:

Անա քէ ինչու, սիրելի՛ Սրբազան Եղբայր, Մեր Հայրապետական սոյն կոնդակով սրանց Ձեզ կը շնորհենք արքութեան պաշիւ, մաղթելով, որ նաեւ այսուհետեւ երկա՛ր, երկա՛ր տարիներ, նոյն եռանդով եւ նոյն նուիրումով ծառայէ՛ք մեր Ս. եկեղեցիին եւ Ս. Աթոռի, նոր փալց եւ հեղինակութիւն տալով Ձեր անունին եւ Ձեր կեանքին:

Այս ուրախ առիթով երջանիկ է նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր Միաբանութեամբ հանդերձ, եւ Մենք Ս. Լուսաւորչի Գահէն կ'ողջունենք եւ կ'օրհնենք Ձերդ Սրբազնութիւնը՝ աղօթելով Ձեր արեւշատութեան եւ Ս. Աթոռի անսասանութեան ու ներքին խաղաղութեան համար:

Ողջ լեւուք, գորացեալ ի Հոգին Սուրբ:

Ողորմութիւն Աստուծոյ եւ շնորհք Տեսան Մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ազաւոյ Ձերում: Ամէն

Տուաւ կոնդակս ի 19-ն յունուարի
1959 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆՄ:
ի վանս Սրբոյ Էջմիածնի
Հմբ. 134

ՎԱԶԳԷՆ Ա.
(Կ Ն Ի Ք)
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 1 Մարտ. — Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամասերն մէջ Ս. Պատարազը մատուցեց և քարոզեց չոգչ. Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան, բնարան ունենալով «Ես եմ հացն կենաց»:

● Կիր. 8 Մարտ. — Ի Ս. Յակոբ մատուցուած Ս. Պատարազի ընթացքին, չոգչ. Տ. Իսահակ Վրդ. քարոզեց, բնարան ունենալով օրուան ճաշու և Եստարանէն «Եթէ ոք ծարաւի իցէ, եկեացէ առ իս և արբցէ ...»:

● Դշ. 11 Մարտ. — Վարդանանց հանդիսաւոր նախատեսակը պաշտուեցաւ Ի Ս. Յակոբ՝ նախադահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Ի:

● Եշ. 12 Մարտ. — Ս. Վարդանանց զօրավարաց տունին առթիւ, Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարազը մատուցեց. ըստ սովորութեան, Ժառանգ. Վարժ. Ի և Ընծայարանի Տեսուչը՝ չոգչ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան և քարոզեց, անդրադառնալով վարդանանց գոյամարտի արժէքին, մեր ազգային կեանքէն ներս Քարոզէն ետք, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Ի նախադահութեամբ, կատարուեցաւ Հայրապետական Մաղթանք՝ Ամենայն Հայոց Վեմ. Հայրապետ Տ. Տ. Վազգէն Ա. Ի անուան տունին առթիւ, իսկ Ս. Պատարազէն ետք կատարուեցաւ օրուան յատուկ ընդհանուր նշխարացիոց հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն:

● Ուր. 13 Մարտ. — Ըստ իրաւական սովորութեան, Ս. Պատարազը մատուցուեցաւ Ասորւոց Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցւոյն մէջ, ուր քարոզեց չոգչ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր, պատմականը ընելով նաև նոյն վանքին ու եկեղեցիին: Ս. Պատարազէն ետք, Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ասորւոց Եպս. Ի Փոխ. Հորմէն:

● Եր. 14 Մարտ. — Ըստ սովորութեան, երեկոյեան ժամերգութեան ընթացքին կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի խորաններուն և զխաւոր սրբանկարներուն վարագոյրումը:

● Կիր. 15 Մարտ. — Բուն բաւեկեկան: Փակեալ-խորանի Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Պատարազիչն էր Գերշ. Տ. Հմայեակ Ծ. Վրդ. ինդոյեան: Ըստ սովորութեան, Դպրապետի պաշտօնը կը վարէր Ս. Աթոռոյ իւստարապետը՝ Գերշ. Տ. Շնորհ Եպս. Գալուստեան:

● Դշ. 18 Մարտ. — Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց յատուկ «Արեւագալ»ի առաջին ժամերգութիւնը:

● Եշ. 19 Մարտ. — Իրիկուան ժամը 6.30-ին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց յատուկ «Եկեղեցի»ի առաջին ժամերգութիւնը՝ որու ընթացքին քարոզեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհանեան, անդրադառնալով բոլոր այն մեղքերուն ու մոլութիւններուն՝ որոնք

մարդը զէպի անկում կ'առաջնորդեն. և զգուշացուց հաւատացեալները որ հեռու մնան անեղմէ: Յոյց տուաւ Մեծ Պահքը որպէս յարմարագոյն առիթ՝ մաքրուելու մեր մեղքերէն:

● Ուր. 20 Մարտ. — Վաղուան տունին նախատեսակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյն մէջ (Գրչագրաց Մատենադարան Ս. Աթոռոյ): Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհանեան:

● Եր. 21 Մարտ. — Ս. Թեղդորոս զօրավարի տունին առթիւ, Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյն մէջ: Պատարազիչն էր չոգչ. Տ. Ներսէս Վրդ. Բապուհեան:

— Կէսօրէ վերջ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Ի զխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատեսակը՝ մեր վերնամասերն մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր չոգչ. Տ. Հայկասար Վրդ.:

● Կիր. 22 Մարտ. — Արսաման: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամասերն մէջ: Ապա կատարուեցաւ եռադրոմ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ՝ նախադահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Ի:

● Եշ. 26 Մարտ. — Իրիկուան «Հակում»ին քարոզեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Պաղարեան, նիւթ ունենալով հպարտութեան մեղքը: Յոյց տուաւ հպարտութիւնն ու ամբարտաւանութիւնը իրեն մարդը զգլխով անապակի դարձնող ու հետարար Աստուծոյ հեռու պահող մոլութիւնները:

● Եր. 28 Մարտ. — Ս. Կիւրղի երեսօղիմացւոյ տունին առթիւ, Ս. Պատարազը մատուցուեցաւ, ըստ սովորութեան, Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիւրղի սեղանին վրայ:

● Կիր. 29 Մարտ. — Անառակին: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ի Ս. Հրեշտակապետ Պատարազեց չոգչ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան և քարոզեց չոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Ջղնաեան, բնարան ունենալով օրուան ճաշու և Եստարանէն «Հայր, մեղայ յերկինս և առաջի քո» եղբակցուց թէ Անառակին արժանիք կը կայանայ իր մեղքի գիտակցութեան մէջ, և այդ իսկ եղաւ իր իրկութեան ազգակը:

● Եշ. 2 Ապրիլ. — Իրիկուան «Հակում»ին քարոզեց չոգչ. Տ. Թորգոմ Վրդ., անդրադառնալով եօթը մահացու մեղքերէն իւրաքանչիւրին: Յոյց տուաւ թէ երեք խումբերու կարելի է բաժնել զանոնք. մեղքեր՝ գործուած անձին զէմ, մեղքեր՝ գործուած ընկերոջ զէմ և մեղքեր՝ գործուած Աստուծոյ զէմ:

● Կիր. 5 Ապրիլ. — Տօնիկ: Փակեալ-խորանի Ս. Պատարազը մատուցուեցաւ Ի Ս. Յակոբ, ուր քարոզեց չոգչ. Տ. Ներսէս Վրդ. Բապուհեան, նիւթ ունենալով Տնտեսի աւետարանական առակը ու ծանրանալով Տնտեսի արտասանած «Զի՞նչ

գործնեցից» խօսքին վրայ, Յոյց տուաւ թէ մարդ բնորոշմանը որքան ատեն որ ապահով ու բարեկեցիկ վիճակի մէջ կը գտնուի, չի խորհրդ հոգեկան արժէքներուն և յաստիքնական կեանքի մասին, հիշող ինչպէս Տնտեսը երբ իր տիրոջ ծառայութեան մէջ էր չէր խորհած առ այդ ու ինչպէս էր անխառն թեան յանցանքին ներքեւ, Սակայն պէտք է հոգեկան կապուիլ ժամանակաւոր նիւթին ու տեսանելի աշխարհին, որոնց պարզեւմ բարիքը ա՛յս կեանքին համար է լոկ, այլ պէտք է ապրիլ ապագային համար, հանդերձալ կեանքին արժանանալու համար:

● Գ. Ե. 9 Ապրիլ. — Իրիկուան «Հսկում»-ին քարոզեց Նոգը. Տ. Հայկասեր Վրդ. Պայրաման, անդրադառնալով անպատու թղթնի յաւատարմական առակին, Յայտնեց թէ անպատու և անպիտան ու ապերախտ անհատներն ու ազգերն, ու իբրեւ մէկը այս վերջիններէն յիշեց հրեայ ազգը, որուն մեղանշորհն էր տրուած «Աստուծոյ քնտրեալ ժողովուրդը» ըլլալու, բայց որ շտուալ իրմէ ակնկալուած բարի պտուղը:

● Ե. 11 Ապրիլ. — Կէսօրէ վերջ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. զխաւարութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Զարութեան Տաճար: Պատանատեղւոյն, Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի աշրի ուխտերէն ետք, երեկոյեան ժամերգութիւնն ու նախատունակը պաշտօնեցան հայապատկան Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Նոգը. Տ. Կիւրեղ Վրդ. Գարեկեան:

● Կիր. 12 Ապրիլ. — Գաւառի մէջ Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտօնեցան ի Ս. Լուսաւորիչ, Ապա, Գերշ. Տ. Սուրէն Արք. մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, և նախադահնց Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադարձ մեծահնդէս թափօրն: Թափօրը վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, վառք վերադարձին, «Որ պատուիրան» շարականը երգելով, Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան, ուր Սուրէն Սրբազան օրհնուած նշխարներ բաժնեց բոլորին:

● Ե. 16 Ապրիլ. — Իրիկուան «Հսկում»-ին քարոզեց Գերշ. Տ. Շնորհք Եպս., խօսելով եկեղեցիներու միութեան հարցին շուրջ:

● Ա. 17 Ապրիլ. — Վաղուան նախատունակը պաշտօնեցաւ ի Ս. Զակար. նախադահնութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս:

● Ե. 18 Ապրիլ. — Ս. Գրիգորի Լուսաւորիչ Մոսի ի վիճակ տունին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Գր. Լուսաւորիչ սեղանին վրայ: Պատարագեց Նոգը. Տ. Հայկասեր Վրդ. Պայրաման:

— Կէսօրէ վերջ ժամը 2ին, Միաբանութեան մաս մը, Գերշ. Տ. Շնորհք Եպս. զխաւարութեամբ, բարձրացաւ Զիթնեաց լեռ: Համարձ.

ման Սրբատեղւոյն վրայ կառուցուած մեր վրանամատրան մէջ պաշտօնեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատունակը, իրիկեղեցին կատարուեցան «Եկեղեցի» կարգ և գիշերային ու առաւօտեան ժամերգութիւններ Մատուցուեցաւ նաև Ս. Պատարագ. Պատարագեց, ըստ սովորութեան, Սրբավայրին Տեսուչը՝ Նոգը. Տ. Հայկասեր Վրդ.: Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 11ին:

● Կիր. 19 Ապրիլ. — Գաւառի մէջ Առաւօտեան ժամը 8ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. զխաւարութեամբ, ամբողջ Միաբանութիւնը բարձրացաւ Զիթնեաց լեռ ու «Հրաշափառ»-ով մուտք գործեց Համարձման Սրբատեղին՝ ուր կառուցուած մեր վրանամատրան մէջ հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Նոգը. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան՝ եպիսկոպոսական խոյր ի գլուխ: Նոգը. Հայրը խօսեցաւ նաև քարոզ մը՝ Քրիստոսի երկրորդ Գալստեան խորհուրդին և վերջին դատաւանի շուրջ:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Ս. Կոյսի Աւետման նախատունակը, Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս:

● Բ. 20 Ապրիլ. — Աւետման Ս. Աստուածման: Առաւօտեան ժամը 8ին, Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեանի զխաւարութեամբ, Միաբանութիւնը իջաւ Գերեզմանի ձորը, ու «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Գերշ. Հանդիսապետ Սրբազանը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ, և քարոզեց՝ նիւթ ունենալով Քրիստոսի լայնամտութիւնը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Ե. 21 Փետր. — Կ. Վ. ժամը 3.30ին, յանուն Պատրիարքարանի, Տիար Կարպիս Հինդընեան ներկայ գտնուեցաւ Արար Անկիլքաներու եպիսկոպոս Գերշ. Տ. Նէհայ Գուլէյի տան մէջ, Քաղաքի Քրիստոնեայ համայնքներու ներկայացուցիչներու կողմէ կազմուած հաւաքովի մը՝ ուր նկատի առնուեցան համայնքային, ժառանգական, որդեգրութեան, կտակային և այլ կրօնական հարցեր:

● Դ. 25 Փետր. — Կապոյց Ս. Անտոն երկրորդական վարժարանի 1957-58 Տարեւրջանի մրցանակաբաշխութեան հանդէսին ներկայ գտնուեցաւ Նոգը. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր:

● Կիր. 1 Մարտ. — Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի նախադահնութեամբ կատարուած Ամանի նոր Ռատիօկայանի բացման հանդէսին ներկայ եղաւ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., հետեւ ունենալով Գերշ. Տ. Հմայեակ Ծ. Վրդ. Ինդոյեանը:

● Ե. 5 Մարտ. — Շէյխ ձարահ Թաղամասին մէջ նոր կառուցուող Անգլիական Ալէքս Տօն ահաւարութեան հիմնաքարի դնողական հանդիսութեան և անոր յաջորդող թէյասեղանին, տրուած՝ Ամպասատոր պանդոկին մէջ, ներկայ գտնուեցաւ

Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. Բեմհանան, ընկերակցութեամբ Զոգշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի և Տիար Կարպիս Հինգլիանի:

— Նոյն օր, Ամաստատոր պանդոկին մէջ, Քաղաքի Արարական Զինադաստի Յանձնախումբի պետ Գեղամեան Մուհամեմ Տառտի կողմէ. ի պատիւ Գանձախումբի ընդհանուր պետ Մէլքէր ժէնէրալ Գարլ Գառն Ֆոն Զորնի և իր տիկնոջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրեն Արքեպս., Զոգշ. Տ. Դաւիթ Արք. և Տիար Կարպիս Հինգլիան:

● Շր. 7 Մարտ. — Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի Եւրոպայ և Ամերիկա մեկնումի առթիւ, Արքունի Պալատ ողջերթի գացին Գերշ. Տ. Սուրեն Արք. և Զոգշ. Տ. Տ. Համայնակ Իսահակ և Վաղգէն վարդապետներ. իրենց միացան Ամանի Հովիւ Զոգշ. Տ. Արիս Արք. և Տեղական Խորհուրդի անդամներ Տիարք Բակոր Պէրպէրեան և Սերովքէ Անթիքեան:

● Ուր. 20 Մարտ. — Կ. Վ. Ժամբ Վին. Զոգշ. Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան ողային գծով մեկնեցաւ իր Նոր պաշտօնատեղին՝ Միւլան:

● Դշ. 25 Մարտ. — Նոր Տոմարով Ս. Զատիկի տօնին առթիւ, Զոգշ. Տ. Կիրակի Վրդ. Գարիկեան մեկնեցաւ Աղիքսանդրիա, մասնակցելու եկեղեցական հանդիսութեանց և վերադարձաւ Ուր. 10 Ապրիլի կէսօրէ առաջ:

● Եշ. 26 Մարտ. — Կ. ա. Ժամբ 11ին. Գերշ. Տ. Սուրեն Արքեպս., հետեւումնելով Զոգշ. Տ. Հայկասեր և Տ. Վաղգէն վարդապետները. շնորհաւորութեան գնաց Քաղաքի Նոր Նշանակուած Ստեփանապետ Իսրահիմ Պէյ Գրէյշլանին:

● Բշ. 30 Մարտ. — Եւրոպացոց Ս. Զատիկի տօնին առթիւ, կէսօրէ առաջ Ժամբ 11ին. Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. զլիաւորութեամբ, Միաբանութիւնը շնորհաւորութեան գնաց Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին:

● Դշ. 31 Մարտ. — Նոյն առթիւ, կէսօրէ առաջ, շնորհաւորական այցելութիւններ տրուեցան Ֆրանկոսկեանց Միաբանութեան Գերշ. Կիս. Գոտին, Պապական Նուիրակին, Անկիլքան զոյգ եպիսկոպոսներուն, Մարանիթներու Գերշ. Եպս.ին, Յոյն Կաթոլիկ և Հայ Կաթոլիկ Պատր. Փոխանորդներուն և Լուստերականներու Երէցին:

● Դշ. 8 Ապրիլ. — Իսլամաց Բամազանի (Էլ-Ֆիթր) տօնին առթիւ, Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. Բեմհանան, ընկերակցութեամբ Զոգշ. Տ. Տ. Հայկասեր և Վաղգէն վարդապետներու, շնորհաւորութեան գնաց Վսեմ. Մուհամեմ Պէրշ. Ընդհ. Ստեփանապետին, Վսեմ. Մուհամեմ Սեֆուրի Արարիոյ Ընդհ. Հիւսէյնտօնին:

— Այս առթիւ, Գերշ. Տ. Սուրեն Արքեպս., յանուն Ս. Բակորեանց Միաբանութեան և Յորդանանի Հայ Համայնքին, շնորհաւորական հեռագրերն ուղղեց Աման՝ Արքայական Խնամակալութեան Գանձախումբին և Վսեմ. Վարդապետի Փոխանորդին:

● Եշ. 16 Ապրիլ. — Կ. Վ. Ժամբ 1.30ին, նախապէս առնուած ժամադրութեան մը համաձայն,

Գերշ. Տ. Սուրեն Արքեպս., ընկերակցութեամբ Գերշ. Տ. Շնորհք Եպս.ի. Զոգշ. Տ. Հայկասեր Վրդ.ի և Ամանի Հովիւ Զոգշ. Տ. Արիս Արքեպս.ին, ինչպէս նաև Ամանի Տեղական Խորհուրդի Ատենապետ Տիար Բակոր Պէրպէրեանի, ներկայացաւ Վսեմ. Վարդապետին, բարեգալուստ մաղթելու յանուն Միաբանութեան և Ժողովուրդին, իր Ամերիկա և Լոնտոն կատարած առաքելութեան վերադարձի առթիւ:

ԵՐԴԱՆԱՆԻ ԴԷՍ

Շաբաթ, 7 Մարտի իրիկուան ժամը 8ին, Ֆրէնկերու զարոյցի ընդարձակ սրահին մէջ տեղի ունեցաւ Երգահանդէս մը՝ ղեկավարութեամբ Ս. Աթոռոյ Երաժշտապետ Զոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանի և մասնակցութեամբ Վանուցահրկեան երգչախումբին: Հանդէսը կը հովանաւորէր Երասաղէմի Վսեմ. Կառավարիչ՝ Հասան Էլ-Քէթիպ. որ և ներկայ եղաւ: Նոյնպէս ներկայ եղան Երասաղէմի Մուսաարքիւ, Ստեփանապետը և այլ կառավարական պաշտօնատարներ: Հանդէսին կը նախագահէր Ս. Աթոռոյ Գործոց Ընդհ. Վարիչ Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. Բեմհանան. ներկայ էր Միաբանութիւնը իր ամբողջ կազմով, ինչպէս նաև Ժողովուրդի ստուար զանգութիւն մը՝ հայ թէ օտար, որուն մէջ աչքի կը զարնէին Ամերիկեան և Անգլիական Հիւսէյնտոսարաններու ներկայացուցիչները:

Յօռնկայա երգուած Արքայական Մաղթերգէն ետք, Հանդէսին բացման խօսքը ւրաւ ժող. և Ս. Թորգոմնաց վարժարաններու Անգլերէնի ուսուցիչ Պր. Եղիա Տիրքեան, թէ՛ Արարերէն և թէ՛ Անգլերէն լեզուներով: Ապա, Տ. Թորգոմ Վրդ. տուաւ բացատրական նօթեր հայ երաժշտութեան մասին: Անգլերէն լեզուով, ու ծանրացաւ Կոմիտաս Վրդ.ի կեանքին ու հայ արուեստի կալուածէն ներս կատարած նուաճումներուն մասին: Ապա իրագործուեցաւ աւելի քան մէկուկէս ժամ տեղի առնող յայտագիր մը՝ բաղկացած հայ եկեղեցական և Ժողովրդական երգերէ, մեծ մասամբ Կոմիտաս Վրդ.ի ստեղծագործութիւններէն: Մեներգները կատարեց Զոգշ. Տ. Թորգոմ Վրդ.: Դանակի վրայ երգերուն կ'ընկերակցէր անուանի դաշնակահար Օկաթին Լամա:

Հանդէսի աւարտին, Վսեմ. Մուհամեմ Պր. զոհունակութիւնը յայտնեց տրուած գեղարուեստական այս վայելքին համար, ու շնորհակալեց շնորհաւորեց Զոգշ. Ղեկավար Հայրապետին ու երգչախումբի անդամները:

Ներկաները խորապէս տպաւորուած ու զոհարարով մեկնեցան սրահէն գիշերուան ժամը 10ին:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ՔԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԱՆԳԼԵՐԷՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի Կեդր. Ցանձնաժողովը բացուած կը յայտարարէ քատերական մրցում մը՝ հայերէն եւ անգլերէն լեզուներով, որուն կրնան մասնակցիլ Ամերիկայի եւ արեւմտեան հայ գրողները: Իւրաքանչիւր բաժնի մէջ առաջին հանդիսացողին պիտի տրուի 375 տոլարի մրցանակ մը:

Այս մրցանակին գումարը գոյացած է ողբ. Արաւազդ Գուլումենեանի՝ փոխան ծաղկեպսակի Միութեան ինկած բաժինէն, որ իր այրիին՝ Տկ. Արաւոյս Գուլումենեանի փափով պիտի գործածուի իբրեւ քատերական մրցանակ, ի յիշատակ իր քատերասէր ամուսինին եւ ի քաջալերութիւն արեւմտեան հայ բեմին:

Մրցումի պայմաններն են. —

ա) Քատերախաղին նիւրը առնուած պէտք է ըլլայ հայ կեանքէն, գրուած գրական լեզուով եւ վաւերական տալանդի մը կնիքով, եւ պէտք է զեղարուեստական արժէքներ կախացնէ:

բ) Քատերախաղին տեղադրութիւնը նուազագոյն մէկ ժամ պէտք է ըլլայ:

գ) Քատերախաղին ձեռագիրը պէտք է Հ. Բ. Ը. Միութեան գրասենեակը հասնի աւելուած մինչեւ 1 Դեկտեմբեր 1959:

դ) Յաջորդողները բաղկացած զատական կազմեր, մին հայերէնի եւ միւսը անգլերէնի համար, իրենց կը վերապահեն մրցանակ տալու կամ մերժելու իրաւունքը: Իր տեսնին պիտի հաղորդուի զատական յանձնախումբերու անդամներուն անունը:

Ձեռագիրը զրկել հետեւեալ հասցէին. —

Armenian General Benevolent Union of America
250, Fifth Avenue, New York 1, N. Y.

«ԱՌՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԸ ԵՒ ԿԻՒՂԱԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՆԸ ՇՆՈՐՀԱՎԱՍՏՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խոնքեր եւ Դեմքեր — Գառնիկ Պապահան (Նուիրատու): Նիւ Եորք, 1958:

Հալածուածները — Փորձը — Զարեհ Որբունի: Հրատ. և խօսք. Եւրոպայի, Պէրսի:

Նոր էջ թիւ 10 — Կազմեց Զ. Միրզաչեան: Նուէր Աշտա Ասլանէն: Թէհրան, 1958:

Շապին Գարահիսար եւ իր Հերոսամարտը — Արամ Հայկազ (Նարտ.): Նիւ Եորք, 1957:

Խօսքեր Սփոփանքի եւ Մխիթարութեան — Լոնտոն:

Աստուած Խօսեցաւ — Լոնտոն:

Նիւրքեր Խ. Հայաստանից — Ս. Նայիրի (Նուիրատու): Լոս Անճէլէս, 1958:

Մեր Դիւղը Դասեմ — Հրատ. և խօսք. Դասեմի Լուս. Ուսումն. Ընկ. եւ Պոսթըն, 1958:

Ժ. Դարը, Հայ Վերածնունդ, Հայկական Հարցը եւ Անոր Փուլերը — Ամփոփուած Լէօի

«Հայց Պատմութիւն» հատորէն: Նուէր Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսչութիւնէն:

Հայ Եկեղեցի — Պատրաստեց Ներսէս Վրդ. Բապուճեան: Մեքսիկայի 1958 թին:

Տեղիք Աստուածաբանութեան — Պատրաստեց Շնորհաբեկ. Գալուստեան: Մեքսիկայի 1957 թին:

Նուէր Ժամանակ. Վարժարանի Տեսչութիւնէն:

Սուրբ Գիրք — Ներածութիւն և Մեկնութիւն Հնգամատեանի: Մեքսիկայի 1957 թին:

Լոյսի երգեր — Ալեքս. Բիրէճեան (Նուիրատու): Փարիզ, 1958:

[Երուսաղէմ:

Աստուածաբանական Գաղթական - Տ. Բ. Զեյնալիյան - Քրիստ. Ս. Յ. Փաշինյան (նուիրատու)։ Պէտրոս, 1958։

Գրական Տարեցոյց - Ժ. Բ. - Ժ. Բ. Տարե (1958-1959)։ Լ. Ճէրահան (նուիրատու)։ Մարտի, 1958։

Յեղափոխական Արար - Բ. Շարք, Թիւ 11։ Ա. Բ. (նուիրատու)։

Կապոյտ Լոյս - Յակոբ Մեծաբաբի։ Նուէր Բ. Ղազարեանէ։ Թիւ 1, 1958։

Վազգէն Վեհափառ - Իր Մեծաբաբի 50րդ և Գահակալութեան 3րդ Տարեգրքերու առ-

թիւ։ Պատրաստեց Մեծաբաբ Վրդ. Գրիգորեան (նուիրատու)։ Պէտրոս, 1958։

Երեանի Մատենադարանէն Նուէր ստացած ենք հետեւեալ 4 զրքերը. —

ա) Հայկական Միջնադարեան ժողովրդական երգեր - Ա. Մանգաղանեան։ 1950։

բ) Պատմութիւն Փարման Մանկան - (Միջնադարեան Պատմ.)։ Շուշանիկ Նազարեան

գ) Բանբեր Մատենադարանի Թիւ 4 - Երեան, 1958։ [Հրատարակիչ]։

դ) Եղիշէի Վասն Վարդանանց եւ Հայոց Պատերազմին - Երեան, 1957։

Պերլին եւ Պատերազմը - (Ողբերգութիւն 3 Արար)։ Միջնադարեան (նուիրատու)։

Ստեփան Բ. Փաշինյան կը նուիրէ 6 Հայերէն զրքեր։ [Պէտրոս, 1958։

Մօր Վիշապ - Երեմ Սարգսյանեան (նուիրատու)։ Թէրեան, 1958։ [Պէտրոս, 1958։

Բաղձմեք առ Աստուած - Տ. Բ. Ա. Ս. Թօղբեր, Թրդ. Սեդրաք Մ. Պէշկերեանեան (նուիրատու)։

Անաղանգ - Տ. Բ. Ա. Ա. Պէշկեր, 1958։

Խոզեղան - Ս. Գալանդի։ Նուէր «Յուսարեան»։ Գահակ, 1958։

Տաղաղիւր - Յովհ. Թիւրքանցի։ Հրատ. և Նուէր «Յուսարեան»։ Նուէր Ս. Սթոյն

Տաղաղիւր։ Երեան, 1958։ [Ն. Ճէրահ, 1958։

Տեղեկագիր Արարիկի Միութեան 31րդ Պատգամաւորական ժողովի - Արարիկ Փարք.

Գրեան - Բ. Հատար (1898-1901)։ Հրատ. և Նուէր «Յուսարեան»։ Գահակ, 1958։

Օրացոյց (1959) - Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Յակոբ Գալանդի - Արար Երեան։ Նուէր Բ. Գալանդիանէ։ Պատմ, 1958։

Պէտրոսէն Գեղամ Լ. Ա. Ա. կը նուիրէ. —

ա) Նոր Բիւզանդիոն - Վ. Թաթաւանց։ բ) Բիւրեղեայ Գեղան - Գեղամ Ա. Ա. Ա.

Պէտրոսէն Ը. Մեծաբաբ Վրդ. Գրիգորեան կը նուիրէ. —

ա) Դիւր Գեղարեան - Վ. Նարեկ։ բ) Երկերի ժողովածու - Մարտ Մեծաբանց։

գ) Ճանապարհներ - « » : դ) Արարաց Զրոյ - Սիւրբ Կապուտիկան։

Մանուկ Անաղանգ եւ Անաղանգ Սեր - Վազգէն Շուշանեան։ Հրատ. և Նուէր «Էջմիածին»

«Էջմիածին» Ամսագրի Խմբագրութիւնը կը նուիրէ. — [Գալանդի, Պէտրոս, 1959։

ա) Հայկական ժողովրդական երգեր եւ Պարեր - Թաթաւ Աթոռեան։ (Բ. Հատար)։

բ) գ) և ճ) Երկերի Լիակատար ժողովածու - Պաշինյան (Բ. Գ. Գ. և Թ.

դ) Կոմիտաս Ազգայնական ժողովածու։ է) Չեմ Կրնա - Կոմիտաս։ [Հատարներ]։

U. S. POLICY IN THE MIDDLE EAST - Sept. 1956 to June 1957 - Documents.

Presented by the American Library, Amman. August 1957, Washington.

A. C. Y. O. presents: — [1954.

a) SACRAMENTS AND PRAYERS OF THE ARMENIAN CHURCH - N. York,

b) CATECHISM OF CHRISTIAN INSTRUCTION - Archbishop Khoren Narbey.

c) THE DIVINE LITURGY OF THE ARMENIAN CHURCH - Produced by Fr.

Arnak Kasparian & Dennis Papazian. Sponsored by A. C. Y. O. A.

(Շարունակելի)

تصدرها - بطريركية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النياحة الاسقف هايكازون أبراهاميان

العدد ٣ - ٤

تطبع في مطبعة دير الارمن - القدس

مارس - أبريل - ١٩٥٩

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

Արժանատի բոլոր Քանաճայ Հայրերուն նուէր՝ կը ղրկուի «Սիոն»
Պաշտօնաթերթը, եթէ իրենց հասցէները մեզի ղրկուին:

1959-ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Ամեն. Տ. Տիրան Արքեպս. Ներսիսեան՝ Երուսաղէմէն	Տիար Գէորգ Ներսիսեանին (Հալէպ):
Հոգ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան՝ ժամ. սան Զովհաննէս Այվազեան՝ Ամմանէն	Տիար Երուանդ Մանուկեանին (Հալէպ): Տիար Զարուի Սայազեանին (Պէյրուս):
Տիար Զարուի Տաքէսեան՝ Հայֆայէն	Տիար Նազարէթ Տաքէսեանին (Գալիֆ):
Հոգ. Տ. Օհան Արդ. Գապագեան՝ Ս. Էջմիածնէն	Տիար Կարապետ Փաթանեանին (Հալէպ):
Գեր. Տ. Հայկազուն Եպս. Աբրահամեան՝ Թեհրանէն	Տիար Հայկ Օհաննէսեանին (Գահրէ): Տիար Անուշաւան Սիմոնեանին (Պէյրուս):
Հոգ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան՝ Կ. Պոլսէն	Տիար Գրիգոր Նազարեանին (Թէհրան):
Տիկ. Էլզիս Գաղաղեան՝ Ամերիկայէն	Տիար Մկրտիչ Յակոբեանին (Պալիս):
Տիկ. Աննա Ուիլիամսըն՝	Տիկ. Սուլթան Եսաուֆեանին (Ամերիկա):

Հոյս Տեսաւ

ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

ՀԱՅ ՈՒԽՏԱԻՈՐ

(ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՈՒՂԵՑՈՅՑ ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ)

Էջ՝ 144

Գին՝ 350 ժիլս

Մամիոյ տակ է՝

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

(Փոքրածաւալ)